

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (17)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. ПРАВОВЕДЕНИЕ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գարուգյան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գևորգյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ.
խմբագրի տեղակալ*), Խարրինա Տ. Յա. (*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*),
Հարությունյան Գ. Գ., Հայկյանց Ա. Մ., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտու-
ղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ս. Գ., Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Սիմոնյան Ա. Հ.

Главный редактор: Мирзоян Г. К.

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), Айкянц А. М., Антонян Ю. М. (*Москва*),
Арутюнян Г. Г., Габузян А. А. (*ответ. редактор*), Геворкян К. А., Гончар Н. А.
(*зам. главного редактора*), Дюран Бернард (*Монпелье*), Казинян Г. С., Кури Хель-
мут (*Фрайбург*), Мегрян С. Г., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), Симонян А. Г.,
Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: Mirzoyan H. Gh.

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Duran
Bernard (*Montpellier*), Gabuzyan A. H. (*Managing Editor*), Gevorgyan K. A.,
Ghazinyan G. S., Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), Harutyunyan G. G.,
Haykyants A. M., Hovakimyan A. E. (*Executive Secretary*), Kury Helmut
(*Freiburg*), Meghryan S.G., Simonyan A. H., Yakovlev V. F. (*Moscow*)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

Արարատյան թագավորության իրավական համակարգի հիմնահարցը հայագիտության շատ քիչ ուսումնասիրված, իսկ որոշ դեպքերում նաև խեղաթյուրված հիմնահարցերից է: Խնդիրն այն է, որ հիմնահարցը ընդհանուր պատմագրության մեջ գրեթե չի շոշափվել: Ուրարտագետների որոշ մասը ուսումնասիրել է Արարատյան թագավորության սոցիալ-տնտեսական հարաբերությունների և նույնիսկ պետական կարգի հիմնահարցերը, սակայն իրավական համակարգն աչքաթող է արվել: Հետազոտողներից միայն Ա. Գ. Սուքիասյանն է փորձել վեր հանել ուրարտական իրավունքի հիմնական գծերը¹: Նա, վերլուծելով Արարատյան/Ուրարտական թագավորության իրավահայտ աղբյուրները, եզրակացնում է, որ այս թագավորության իրավունքը ստրկատիրական էր, որի կարևոր ինստիտուտը հողի «ստրկատիրական սեփականության իրավունքն էր»: «Մասնավոր սեփականության օբյեկտ էին ոչ միայն հողը և ստրուկները, այլև արդյունաբերական արհեստանոցները, որ պատկանում էին թագավորներին, տաճարներին, առանձին ստրկատերերին»: Այնուհետև Ա. Գ. Սուքիասյանն առանձնացնում է ուրարտական իրավունքի որոշ ինստիտուտներ՝ հիմնականում քրեական ոլորտի, այն է՝ տաճարային սեփականության պաշտպանությունը, անեծքի բանաձևերի միջոցով մեզ հասած պատժական քաղաքականության որոշ տարրեր, հանցակցության, համապարտ քրեական պատասխանատվության ինստիտուտները:

Մեր օրերում հրատարակված հետազոտություններից ուրարտական իրավունքին է նվիրված Հ. Կարազեոզյանի «Դիտողություններ բիաինական դատաստանագրքի կապակցությամբ» հոդվածը: Հեղինակը, վկայակոչելով Եգիպտոսի, Շումերի, Աքքադի, Բաբելոնի, Հնդկաստանի, Իրանի օրենքների ժողովածուները, ենթադրում է, որ «Բիայնիլեն այդ երկրների շարքում բացառություն կազմել չէր կարող: Հավանաբար այնտեղ ևս գոյություն են ունեցել գործող օրենքներ, որոնք, սակայն, համահավաք ձևով մեզ չեն հասել»²: Համեմատական-իրավական

¹ Տե՛ս **Сукниасян А. Г.** Государство и право Урарту. Ер., 1963:

² **Հ. Կարազեոզյան**, Դիտողություններ բիաինական դատաստանագրքի կապակցությամբ, «Հանդէս Ամսօրեայ», 2002, 1-12, էջ 338-342:

այդ վերլուծությունը շատ մակերեսային է, իսկ ստացված եզրակացությունը՝ ոչ գիտական: Չի կարելի համեմատել ուրարտական իրավունքը և հնդկական իրավունքը, որովհետև դրանք իրարից էականորեն տարբերվող սոցիալական կարգավորիչներ էին: Ընդ որում՝ Հնդկաստանը չունի օրենք. նրա սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը կրոնաէթիկական էր: Այսպիսով, հեղինակը, վկայակոչելով հնդկական պայմանականորեն օրենքներ անունը ստացած Մանուի դհարմաշաստրան, հաստատում է, որ Ուրարտում կար գրավոր դատաստանագիրք, որը, սակայն, մեզ չի հասել:

Որպեսզի կարողանանք վեր հանել Արարատյան թագավորության իրավական համակարգի ընդհանուր գծերը, անհրաժեշտ է նկատի ունենալ մի քանի հանգամանքներ, մասնավորապես՝ ա) մշակութային տարածքի առանձնահատկությունները և դրանով պայմանավորված՝ սոցիոնորմատիվ կարգավորման մշակույթը (ըստ հնագիտական տվյալների), բ) Հայկական բարձրավանդակի հետուրարտական շրջանի մշակույթը և դրանով պայմանավորված՝ սոցիոնորմատիվ կարգավորման առանձնահատկությունները, գ) Արարատյան թագավորության՝ որպես պետության ձևավորման առանձնահատկությունը և բնույթը, դ) Արարատյան թագավորների ներքին սոցիալ-դեմոգրաֆիական քաղաքականությունը և սոցիոնորմատիվ մշակույթի միասնականացումը:

Արարատյան թագավորության մշակույթին նախորդած Հայկական բարձրավանդակի մշակույթը հնագետները բնութագրում են որպես մշակութային մեկ ընդհանրություն: «Հայաստանի ողջ տարածքով մեկ վաղ երկաթի դարաշրջանում տարածված էր նույն մշակույթը, որը, որպես կանոն, խմբավորվում է մշակութային մեկ ընդհանրության շրջանակներում (Հայաստանի վաղերկաթեդարյան մշակույթ, Լճաշեն-մեծամորյան մշակույթ) և թվագրվում է վաղ երկաթի համար ներկայումս ընդունված ժամանակագրության ընդհանուր սահմաններում, այն է՝ մ. թ. ա. XII/XI-IX/VIII դդ»³: Ընդ որում՝ այդ ժամանակաընթացքում մշակույթը ապրել է տրանսֆորմացիայի վեց փուլեր, որոնք աչքի են ընկնում մշակութային համասեռ միջավայրի ձևավորման, ինտեգրման, երբեմն նաև տրոհման միտումներով⁴: Այդ փուլաբաժանման վերջին շրջանը մ. թ. ա. XVI դարի վերջին քառորդ - IX-VIII դդ սահմանագիծն է, որը հնագետները համարում են մշակութային համասեռ միջավայրի ձևավորման դարաշրջան, իսկ III հազարամյակից սկսած՝ մշակութա-

³ **Զ. Գ. Ավետիսյան**, Արարատյան դաշտավայրի մշակույթը մ. թ. ա. XI-VI դդ., Է. 00.03-«Հնագիտություն» մասնագիտությամբ պատ. գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002, էջ 9:

⁴ Տե՛ս **Պ. Ս. Ավետիսյան**, Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Է. 00.03-«Հնագիտություն» մասնագիտությամբ պատ. գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման գիտական զեկուցում, Եր., 2014, էջ 71:

յին ինտեգրման չորրորդ փուլն էր:

Մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսին Հայոց լեռնաշխարհի հարավ, հարավարևմտյան և արևմտյան շրջաններին բնորոշ էին առավելապես քաղաք-պետությունները, մնացած մասերում՝ մոբիլ, քոչվորական կամ կիսաքոչվորական կենսաձև ունեցող հանրություններով ցեղապետական կազմավորումները, որոնք իրենցից ներկայացնում էին «սաղմնային/սեզմենտար վաղ պետականություններ»: Այն, որ մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին վերջիններս արդեն հանդես են գալիս որպես որոշակի սահմաններ ունեցող տարածքային պետական կազմավորումներ, վկայում են Հայկական լեռնաշխարհի և այլ երկրների սահմանների վերաբերյալ սեպագիր աղբյուրների հիշատակությունները⁵:

Ընդ որում՝ աղբյուրներն այս երկրների կառավարիչներին ու տիրակալներին բնորոշում են որպես արքաներ: Քիչ հավանական է, որ օտարամոլությամբ տառապող ասորաբաբելական թագավորներն իրենց թշնամի ժողովուրդների առաջնորդներին հենց այնպես արքայի տիտղոս կշնորհեին: Մա հաստատում է այն հանգամանքը, որ այդ կազմավորումները ոչ թե առաջնորդություններ կամ ցեղապետություններ էին, այլ հանրային պետական իշխանություն մարմնավորող սուբյեկտներ, որոնց արքայական իշխանությանը վերապահվում էր աստվածային ծագում⁶:

Այսպիսով, Արարատյան թագավորության Խալդյան հարստության գերիշխանության հաստատման սկզբին Հայաստանը քաղաքական տեսանկյունից պետական, վաղ պետական և նախապետական կազմավորումների համակցություն էր, որին բնորոշ էր միասնական բնութագրերով աչքի ընկնող նյութական և հոգևոր մշակույթ՝ իր տեղական առանձնահատկություններով⁷:

Այս ամենից կարելի է հանգել հետևյալ իրավական եզրակացության. մինչև Արարատյան/Ուրարտական համահայկական և միասնական պետության ձևավորումը, Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների ու վաղ պետական կազմավորումների սոցիոնորմատիվ համակարգը սրբացված բանավոր սովորույթների կարգավոր-

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 65:

⁶ Այս մոտեցմանը կողմնակից են նաև հնագետները, օրինակ՝ Պ. Ավետիսյանի կարծիքով՝ «Առաջավորասիական հանրությունների ընկալումներում արքայական իշխանությունն «աստվածատուր» էր և ամեն մի կառավարիչ չէ, որ կարող էր բնորոշվել այդ տիտղոսով: Արքայական գաղափարով ակնհայտորեն տիրակալության հանգամանքն էր շեշտվում՝ անկախ նրանցից՝ տիրակալությունը վերաբերում էր աշխարհի չորս ծայրերին, թե կոնկրետ մեկ հանրությանը: Ասել է թե՛ սեպագրերում հիշատակված արքաներին որպես առաջնորդ կամ ցեղապետ ներկայացնելը համարում եմ մեթոդապես անթույլատրելի և չհիմնավորված» (Պ. Մ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 65):

⁷ Ընդ որում՝ տեղական առանձնահատկությունների համար հիմք են համարվում թաղման ծիսակարգերի և դամբարանների տարբերությունները, որոնք երևի թե բոլոր տեսակի ծիսակարգերից ու սովորույթներից ամենապահպանողականն են:

ման տիրույթ էր, որը համապատասխանում էր նրանց սոցիալական, տնտեսական, տարածքային, էթնիկ առանձնահատկություններին: Առանձին պետական կազմավորումների իրավական սովորույթների տարբերությունները կարող էին բխել բնակչության էթնիկ-հոգևոր տարբերություններից՝ պայմանավորված և՛ տեղանքով, և՛ տնտեսական զարգացման աստիճանով: Համենայն դեպս մշակույթում նկատվող միտումն ինտեգրումն էր, որը ենթադրում էր նաև կրոնի, սովորույթների միասնականացում: Հետևաբար, Արարատյան թագավորության սոցիոնորմատիվային կարգավորման համակարգն սկզբնական պահից, իր տարբերություններով հանդերձ, ուներ միասնականացման միտումներ:

Այդ թագավորության անկման ժամանակի ելքային կացությունն արդեն ձևավորված հայ ժողովուրդն է՝ որպես միալեզու էթնիկ-մշակութային հանրություն: Հետևաբար, Արարատյան թագավորության ելքային սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը չէր ենթադրում էթնիկ բազմազանություն և տեղային առանձնահատկությունների բացարձակություն: Այս ելքային իրավիճակը, որը, ըստ պատմագրական աղբյուրների, արդեն անվիճելի փաստ է, գալիս է հաստատելու, որ Արարատյան թագավորության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը գերազանցապես թեոկրատական սովորութային իրավական համակարգ էր, որում գերակշռող կարգավորիչ ձևն իրավական սովորույթն էր: Դրան նպաստող հանգամանքը մշակութային տարածքին բնորոշ ինտեգրացիոն գործընթացներն էին: Դա, անշուշտ, չի բացառում թագավորական իրավունքի համաժամանակյա գոյությունը, որի մասին կլիտսենք ստորև:

Արարատյան թագավորության՝ որպես պետության կազմավորման ձևը մեծ մասամբ կարելի է բնութագրել ռազմական-նվաճողական⁸, իսկ պետության բնույթը՝ որպես արևելյան միահեծանություն՝ «անսահմանափակ» թագավորական իշխանությամբ: Այն, որ Արարատյան թագավորության առաջացման ճանապարհը ռազմականն էր,

⁸ Գրականության մեջ առանձնացնում են պետականաձագման երեք գլխավոր ճանապարհներ՝ ռազմական, արիստոկրատական, պլուտոկրատական (տե՛ս **Куббель Л. Е.** Очерки постарно-политической этнографии. М., 1988, էջ 134, **Венгеров А. Б., Куббель Л. Е., Першиц А. И.** Этнография и науки о государстве и праве // «Вестник АН СССР», 1984, № 10, էջ 91, «История первобытного общества. Эпоха классового образования». М., 1988, էջ 234-237): Արիստոկրատական ճանապարհի համար բնութագրական է տոհմացեղային ավագանու աստիճանական վերածումը քաղաքականապես կազմակերպված ուժի՝ հանրային իշխանության, որը մենաշնորհում է տնտեսական, դավանաբանական, զինվորական գործառնությունները, իսկ շարքային համայնականները դառնում են քաղաքականապես ու տնտեսապես կախյալներ (տե՛ս «Проблемы общей теории права и государства». Под общ. ред. В. С. Нерсисянца. М., 1999, էջ 119): Պլուտոկրատական ճանապարհը ենթադրում է մարդկանց մեծ խմբի միավորումը «մեծ մարդու» շուրջը, մարդու, որից ամբողջ խումբը տնտեսապես կախված է: Համահայկական պետության ձևավորման համար այս ձևը բնութագրական չէր կարող լինել: Գուցե ավելի փոքր տարածքով պետական կազմավորման համար այն ընդունելի է, սակայն ոչ համահայկական պետության:

հաստատվում է նաև հնագիտական հետազոտությունների արդյունքներով, համաձայն որոնց՝ սկսած XIII դարից Հայաստանում ավելի հաճախ են դառնում «զինվորի թաղումները», ինչը վկայում է սոցիալական նոր խավի ձևավորման, ինչպես նաև ռազմականացված հասարակությունների առաջ գալու մասին: Դա հաստատում է, որ պատերազմներն ու ռազմարշավները լեռնաշխարհի հանրությունների կյանքում հսկայական տեղ են զբաղեցրել՝ վերածվելով տարածաշրջանի հասարակական զարգացումների վրա ազդող հիմնական գործոնի⁹:

Արարատյան թագավորությունը չիֆդոմ կամ վաղ պետական կազմավորում չէր, այլ «հասուն պետություն»՝ հանրային իշխանական կենտրոնական կառույցով և տեղական կայագորային-ամրոցային կառավարման համակարգով: Այստեղ պետական իշխանությունը հասել էր իր իշխանական լիազորությունների գագաթնակետին՝ բացարձակ միապետության, ինչը հաստատում են նաև թագավորության արքաների տիտղոսները: Սակայն, միևնույն ժամանակ, բացի ռազմահարկադրական գործոնից պետության կայացման ու կայունացման գործում էական դեր էին խաղում նաև նվաճված երկրների արքաների և առաջնորդների հետ կնքված ուխտ-պայմանագրերը, որոնց վավերացման իրավական ձևերից էր արձանագրությունը (օրինակ՝ «Մհերի դռան»):

Այս հանգամանքը և ձևավորվող միասնական (ներառյալ նաև սովորութային) մշակույթը չէին խթանում Խալդյան արքայատոհմի իրավական ինտերվենցիան դեպի տեղական սովորույթների ոլորտ: Նվաճված խայտաբղետ ցեղախմբերի, կազմավորումների աստվածների ընդգրկումը աստվածային դիցարան նշանակում էր տերունական կենտրոնական իշխանության կողմից տեղական իրավական սովորույթների լեզվափոխության ճանաչում: Սակայն դա չէր կարող խանգարել արքունական թագավորական իրավունքի ձևավորմանը: Թագավորական կարգավորումն անխուսափելիորեն գոյություն ուներ, բայց դրանում գերակշռում էր անհատական իրավական կարգավորման մակարդակը, իսկ նորմատիվ կարգավորիչ ձևը՝ թագավորական ընդհանուր հրովարտական միջոցով, իր կարգավորման առարկայով առնչվում էր միայն կարևորագույն քաղաքական, տնտեսական ոլորտներին, չունեի համընդգրկուն կարգավորիչի նշանակություն, այլ վերաբերում էր միայն դրվագային հասարակական սրված հիմնախնդիրներին:

Այսպիսով, միջագետքյան քաղաքակրթությունը տնտեսական և քաղաքական կազմակերպվածության, ինչպես նաև քաղաքների զարգացման մակարդակով մոտ երկու հազարամյակ առաջանցիկ էր: Մինչդեռ Արարատյան թագավորությունում տնտեսական հարաբե-

⁹ Տե՛ս Պ. Ս. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 65-66:

րությունների և հատկապես մասնավոր սեփականության ինստիտուտի թերզարգացածությունը, քաղաքային բնակավայրերի կործանումն ու նոր ուրարտական քաղաքների կառուցումը, ինչպես նաև միասնական մշակույթը, ենթադրվում է նաև՝ միալեզվությունը ու սովորույթների նույն էթնիկական հիմքերը չէին խթանում քաղաքականացված օրենսդրական-նորմատիվ կարգավորման զարգացումը:

Եթե մ.թ.ա. 500 թ. Բաբելոնի բնակչությունը 500 հազար էր, Էկրատանինը՝ 200 հազար, Աթենքինը՝ 150 հազար¹⁰, ապա Արարատյան դաշտի ամենախոշոր քաղաքի բնակչությունը չէր գերազանցում 20 հազարը: Այս թվակազմով բնակչության հարաբերությունները կայագորային-ամրոցային կառավարչական կենտրոն քաղաքում շատ հեշտությամբ կարող էր կարգավորվել նաև անհատական իրավական մակարդակով՝ անշուշտ հիմքում ունենալով դավանաբանական գաղափարախոսությունը, նախնիների ավանդույթներն ու սովորույթները: Այս պատճառների ուժով իրավունքի համակարգման ձևը ոչ թե սովորությանին իրավունքի օրենսգրքայնացումն էր (կոդիֆիկացիան), ինչպես Բաբելոնում, այլ գրեթե անհատական, նեղ կարգավորմամբ թագավորական հրովարտակները, որոնց պաշտոնական պետական ամրագրումը երբեմն կատարվում էր ժայռաբեկորների, նոր կառուցված շինությունների սալաքարերի վրա արված արձանագրությունների ձևով:

Հասարակական հարաբերությունների հիմնական մասի կարգավորիչը մնում էր սովորությանին իրավունքը, որի տեղային դրսևորումների դեմ էր ուղղված Արարատյան թագավորների ձուլման քաղաքականությունը: Արձանագրություններում հազարավոր սպանվածների, տեղահանվածների ու վերաբնակեցվածների մասին փաստերը վկայում են, որ կենտրոնական տերունական իշխանությանն ընդդիմացողները վերացվում էին: Որպեսզի կենդանի մնացած հնազանդվողները զրկվեն հետագայում ընդդիմանալու տեղական նպաստավոր պայմաններից, թագավորական իշխանությունը կազմակերպում էր նրանց տեղաշարժը պետության այլ տարածքներ: Այս տեսանկյունից Արարատյան թագավորությունն իրենից ներկայացնում էր մշակութային խառնարան, որի վերջնաբոլորները (պատրաստուկը) հայ ժողովուրդն էր՝ որպես էթնիկ կազմավորում: Այդ խառնարանը սոցիալ-իրավական տեսանկյունից պետական-իրավական սոցիալիզացիայի քաղաքականություն էր, որը մի քանի հարյուրամյակի ընթացքում հանգեցնելու էր նաև տեղական սովորույթների տարբերությունների եթե ոչ վերացմանը, ապա գոնե նվազեցմանը:

Այսպիսով, թագավորությունը, լինելով «հասուն պետություն», կարող էր իրականացնել իրավաստեղծ լայն իշխանություն, այդ թվում

¹⁰ Ст'ю Соломатин А. Ю. Всемирная история государства и государственного управления. М., 2013, էջ 27:

նան օրենսդրության և սովորույթների համակարգում կողիֆիկացիայի ձևով: Սակայն էթնիկ-մշակութային, լեզվական միասնության ու աստվածային դիցարանի վերաբերյալ ուխտի առկայության պայմաններում իրավական ոլորտում պետության իրավաստեղծագործությունը ձեռք էր բերում դրվագային բնույթ՝ լայն տեղ թողնելով ինչպես արքունական, այնպես էլ տեղական, կայագորային-տաճարային, մարգային կառավարիչների ու փոխարքաների անհատական իրավական կարգավորմանը¹¹:

Նախորդ շրջանի հայկական վաղ պետական կազմավորումների անկայունության փորձը, ինչպես նաև պետաիրավական խորաթափանցությունն Արարատյան թագավորներին հուշում էին, որ օրենսդրական իրավական ձևերը քիչ արդյունավետ, առասպելաբանական-սովորութային հոգևոր արժեքների համակարգում դժվարությամբ ներդրվող, երկար ժամանակ պահանջող քաղաքական սոցիալիզացիայի միջոց են: Դրան հակառակ՝ սոցիալական տեղաշարժերի խառնարանի քաղաքականությունը հասարակության քաղաքական-իրավական սոցիալականացման ավելի արագ և արդյունավետ միջոց էր՝ պայմանավորված հանրային իշխանական կառույցների հզորությամբ: Այս առումով այդ քաղաքականության արդյունքը հայ ժողովրդի՝ որպես էթնիկ հանրության ձևավորումն էր:

Այսպիսով, Արարատյան թեոկրատական թագավորության իրավական համակարգը սովորութային իրավական համակարգ էր, որտեղ գերակշռող իրավական ձևն իրավական սովորույթներն էին, ինչպես նաև դրվագային թագավորական իրավունքը: Կարգավորման համակարգում կարևոր դեր էին խաղում կրոնական միջոցները՝ տաբուները, ուխտախոստումները, երդումը, անեծքը¹²:

Արարատյան թագավորական իրավունքի վերաբերյալ տեղեկույթի հիմնական կրողն արքայական արձանագրություններն են, որոնց

¹¹ Իրականում օրենսդրությունը սոցիալական, մշակութային զարգացման բարձր մակարդակ պահանջող քաղաքական ռազմավարության լուրջ միջոց է, որը հասարակական կարգն ապահովող երկարատև գործոն է, ինչպես նաև քաղաքական գերիշխանության համակարգը կայունացնող հատուկ իրավաբանական միջոց (տե՛ս «Проблемы общей теории права и государства». М., 1999, էջ 123):

¹² Կրոնական ցանկացած կազմակերպություն (եկեղեցին) առաջին հերթին իրականացնում է հոգևոր-կրոնական, դավանաբանական գործառույթ: Սակայն եկեղեցին հասարակության քաղաքական-իրավական համակարգում տարբեր դարաշրջաններում ունեցել է տարբեր դերակատարություն: Կրոնական կազմակերպությունների այդ դերակատարության, ինչպես նաև պետության՝ որպես քաղաքական համակարգի հիմնական սուբյեկտի և եկեղեցու փոխհարաբերություններին բնորոշ են պատմական երեք տիպ. աստվածապետություն (թեոկրատական պետություն), կղերական (կրոնականացված) պետություն և աշխարհիկ պետություն: Առաջին երկու տիպերում կրոնական կազմակերպությունը քաղաքական-իրավական համակարգում կատարում էր լիիրավ սուբյեկտի դեր. նրա կրոնադավանաբանական գործառույթը զուգակցվում էր քաղաքականով, իսկ կրոնական կանոնները կատարում էին հասարակական հարաբերությունների իրավական կարգավորչի դեր:

մի մասն ունի զուտ իրավական նշանակություն, կատարում է թագավորական հրովարտականների դեր: Հետագոտողները այդ փաստը նկատել են դեռ անցյալ դարում: «Ջրանցքներ անցկացնելու մասին որոշ արձանագրություններ ոչ միայն ուրարտական թագավորներին փառաբանող հուշարձաններ էին, այլև ունեին որոշակի պաշտոնական իրավաբանական ուժ, որ սահմանում էր բնակչության իրավունքը՝ օգտվելու ջրանցքի այս կամ այն մասից»¹³:

Արձանագրությունների մյուս մասը, չունենալով հրովարտակի կարգավիճակ, մեր օրերում կատարում է իրավահայտ աղբյուրի դեր: Այդ արձանագրությունների բովանդակության վերլուծությունից կարող ենք վեր հանել Արարատյան թագավորության իրավական համակարգի մի քանի սկզբունքներ, ինչպես նաև որոշ ինստիտուտների բովանդակությունը: Դրանցից մի քանիսի հիմքում, անշուշտ, ընկած են սովորութային իրավունքի նորմերը: Արձանագրությունների բովանդակությունից Ա. Գ. Սուքիասյանը հիմնավորել է տաճարային սեփականության իրավունքի պաշտպանության ինստիտուտը, ինչպես նաև դրդիչի՝ որպես հանցագործության սուբյեկտի ճանաչումը և համապարտ պատասխանատվության սկզբունքը: Հ. Կարազեոզյանը վեր է հանել թագաժառանգի և արքայորդիների արքունանիստ քաղաքից դուրս տեղակայված վայրում բնակվելու ինստիտուտը, թագադրման կարգը, զոհաբերության կարգը, բիսյնական դիցարանի կարգավորումը, տուգանքի՝ որպես պատասխանատվության միջոցի գոյությունը:

Մակայն երկու հեղինակներն էլ ունեն մեթոդաբանական բացթողումներ: Ա. Գ. Սուքիասյանը թագավորության իրավունքը համարում է ստրկատիրական իրավունք, այսինքն՝ ստրկատեր դասակարգի կամք՝ բարձրացված օրենքի աստիճանի, իսկ Հ. Կարազեոզյանն արձանագրությունների իրավական բովանդակությունը և կարգավորիչ նշանակությունը դիտում է որպես բիսյնական օրենսգրքի գոյության հաստատում: Այս մոտեցումներից առաջինն անընդունելի է այն հիմնավորմամբ, որ Հայաստանում այս շրջանում չէր կարող լինել զարգացած ստրկատիրական հարաբերությունների համակարգ, հետևաբար հասարակական արտադրանքի գերակշիռ մասը չէր կարող ստրուկի աշխատանքի արդյունք լինել: Հայկական բարձրավանդակում ստրկությունը չունեի բնակլիմայական և տնտեսական նախադրյալներ: Հետևաբար հասարակական հարաբերությունների ամբողջությունը կարելի է որակել որպես ավելի շատ արևելյան արտադրաեղանակ, քան ստրկատիրական:

Հ. Կարազեոզյանի մոտեցման մեջ համեմատական իրավական մեթոդի մեխանիկական կիրառման մասին արդեն խոսել ենք: Այստեղ

¹³ Софраненко К. А. Общественно-политический строй Урарту. М., 1961, с. 22, 32-33:

կանգ առնենք հեղինակի կողմից արձանագրային իրավական տեղեկատվության ոչ ճիշտ մեկնաբանության վրա: Օրինակ՝ Կարմիր բլուրից հայտնաբերված մի կավե սալիկի արձանագրությունն այս հեղինակը կարդում է հետևյալ կերպ. «Թաթան՝ ծառան իշխանուհու, (մի) աղջիկ առնանգեց (և) ոչ (մի) փոխհատուցում (չի) տուել: Այժմ ասուածը կատարի՛ր, (մարդ) ուղարկի՛ր, բե՛ր, տու՛ր»¹⁴: Ինքը՝ հեղինակը, այս արձանագրությունը համարում է դատական կարգադրություն, սակայն դրա տվյալների հիման վրա եզրակացնում է, որ «աղջիկ առնանգելու և նրա հետևանքները վերացնելու վերաբերյալ բիաինելում գոյություն է ունեցել կանոնակարգված ինչ-որ մի փաստաթուղթ, որով և առաջնորդվել են նման հարցերը լուծելիս»: Միայն անհատական կարգադրության առկայությունը չի նշանակում օրենսգրքի առկայություն:

Պետք է նկատի ունենալ, որ իրավական կարգավորումը հանդես է գալիս երկու մակարդակով՝ անհատական և նորմատիվ: Անհատական կարգավորումն իրականացվում է կառավարման և կարգավորման սուբյեկտի կողմից կոնկրետ դեպքի վերաբերյալ անհատական որոշում ընդունելու միջոցով: Այդ որոշումը վերաբերում է միայն տվյալ դեպքին և դրա կոնկրետ մասնակիցներին: Այդ որոշումն ունի մեկանգամյա կիրառում և չի ազդում հետագայում կատարված արարքների վերաբերյալ գործերի վրա: Նորմատիվ կարգավորումն իրականացվում է սոցիալական նորմերի օգնությամբ: Սոցիալական նորմերը (սովորույթներ, ավանդույթներ, իրավական, բարոյական, կրոնական նորմեր և այլն) հասարակական հարաբերությունները կարգավորող ընդհանուր բնույթի նմուշային վարքագծի կանոններ են: Դրանք ուղղված են յուրաքանչյուրին և բոլորին, դրանց հասցեատերերն անհատականացված սուբյեկտները չեն: Նորմատիվ կարգավորման առաջացմամբ անհատական կարգավորումը չի անհետանում, այլ մղվում է հետին պլան: Այսինքն՝ անհատական կարգավորումն իրականացնում են տեղերում սոցիալական նորմերի հիման վրա¹⁵:

Հնարավոր է, որ աղջիկ փախցնելու ինստիտուտն ունենա նորմատիվ կարգավորում: Սակայն այդ կարգավորումը կարող է լինել սովորութային, այլ ոչ թե օրենսդրական նորմատիվ: Մենք գիտենք, որ հայկական սովորութային իրավունքում դա ամուսնության ընդունված ձևերից մեկն էր, որն օրինական էր համարվում մինչև հայ քրիստոնեական եկեղեցու կանոնաստեղծ գործունեության ծավալումը, որով առնանգման միջոցով ամուսնությունն արգելվեց:

Արարատյան թագավորության նորմատիվ արձանագրությունների մեջ կարելի է առանձնացնել երկու տեսակ նորմատիվ ակտեր՝

¹⁴ **Հ. Կարազեռզյան**, նշվ. աշխ., էջ 342-343:

¹⁵ Տե՛ս **Ա. Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, Եր., 2011, էջ 13-14:

ուխտ-դաշինքներ և նորմատիվ կարգադրագրեր (օրենքներ): Անեծքի բանաձևերը նորմատիվ կարգադրագրեր չեն, այլ արձանագրության մեջ առկա նորմատիվ կարգադրագրի կատարման երաշխիք: Ուխտ-դաշինքի ամենացայտուն օրինակը «Մհերի դուռ» ժայռի վրա արված արձանագրությունն է, որը կազմել են Իշպուհինի թագավորը և Իշպուհինաորդի Մենուան: Դրանում նշված են ուրարտական պանթեոնի բոլոր աստվածները և ամեն մեկին մատուցվելիք զոհաբերվող անասունների քանակը: Արձանագրության տվյալներից երևում է, որ ուրարտական դիցարանի մեջ մտնում էին մեծ ու փոքր 79 աստված: Դա երևի թե աշխարհի ամենամեծ պանթեոնն է, որը նույնիսկ կարող է զարմանք առաջացնել: Հետազոտողներն արդեն նկատել են, որ Իշպուհինին և նրա թագաժառանգ որդին դիմել են քաղաքական քայլի՝ դիցարան ներառելով բուն բիայնական և նվաճված կամ դաշնակից երկրների աստվածներին՝ պետության սոցիալական հիմքերի գաղափարական միասնությունն ապահովելու նպատակով:

«Մհերի դռան» վրա փորագրված արձանագրությունը կատարված է երկու նույնանման սյունակներով: Այդ արձանագրությունը դիտարկվում է որպես Իշպուհինիի և նրա որդու կազմած տեքստ՝ հրամանագիր: Սակայն արձանագրության երկու սյունակներից 1-ինի 2-րդ տողի մի մասը և համապատասխանաբար 2-րդ սյունակի 2-րդ և 3-րդ տողերը հեղինակները չեն կարողանում ընթերցել:

1-ին սյունակ՝ 2-րդ տող

... Ispuinihise inili KA zaaduuali teruni ardise UTU ITU asuse manuse ...

2-րդ սյունակ՝ 2-րդ տողի վերջ և 3-րդ տող

... zaatuuli teertu ardise UTUnini ITU asuuse maanuse ...

Այս տողերի ընթերցման բարդությունը պայմանավորված է այն բանով, որ անհնար է վերծանել «ardise UTU-(nini) ITU asuse manuse» բառակապակցության ճիշտ և հասկանալի իմաստը: Գ. Ա. Մելիքաշվիլու կարծիքով, հնարավոր է, որ այստեղ նշվում է զոհաբերության ամենամյա իրականացման պարբերականություն¹⁶: Նրա կողմից այսպիսի ենթադրության հիմքը «ITU» - ամիս բառի առկայությունն է տեքստում:

Ինչ վերաբերում է առաջին սյունակի 2-րդ տողի «zaaduuali teruni» և 2-րդ սյունակի «zaatuuli teertu» բառակապակցություններին, ապա հետազոտողները կարծում են, որ դրանք ոչ թե ուրարտական լեզվի, այլ Մուսասիրի որևէ բարբառի արտահայտություն են:

Ն. Հարությունյանը իր հերթին ենթադրում է, որ այստեղ առկա է բառերի շփոթ, որով լիքն են ուրարտական արձանագրությունները, և դա բացատրում է փորագրողների անուշադրությամբ կամ գրագիրների կիսագրագիտությամբ¹⁷: Եթե ընդունենք այս հանգամանքը, ապա առա-

¹⁶ Տե՛ս **Арутюнян Н. В.** Корпус урартских клинообразных надписей. Ер., 2001, էջ 51:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 48:

ջանում է խնդիր. Արարատյան թագավորությունում պաշտոնական լեզուն և խոսակցական լեզուն տարբերվում էին: Միայն դրանով կարելի է բացատրել թագավորական գրագիրների կիսագրագիտությունը: Եթե դա այդպես էր, ապա պաշտոնական լեզուն լավ չիմացող գրագիրը պետք է օգտագործեր իր սեփական խոսակցական լեզուն, այն է՝ հայերենը: Ընդ որում՝ սյունակները փորագրող գրագիրներից ամեն մեկն օգտագործել է իր բարբառային ձևը: Հենց դրանով կարելի է բացատրել սյունակների նշված տողերում առկա տարբերությունները: Նշանակում է՝ երկու սյունակների այդ երկու տողերի որոշ բառեր պետք է փորձել կարդալ հայերեն:

ardise - ուրարտերեն նշանակում է ուժ, իշխանություն, հրաման:

UTU - ասորական հետերոգրամա է, որ նշանակում է Շամաշ - «Արևի աստված»: Արևով երդվելը հայերի մեջ ամենատարածվածներից է: Տեքստում այս հետերոգրաման չի նշանակում Շամաշ, այլ՝ արև կամ էլ Արևի Աստված:

ITU - ասորական հետերոգրամա է, որ նշանակում է ամիս:

asuse - հանդիսավորություն, պաշտոնականություն:

manuse - թող լինի (եղնի այդպես), ստիպել լինել (այդպես), այսինքն՝ պարտադիր կարգ:

Եթե փորձենք կարդալ առաջին երեք տողերը, ապա կստացվի հետևյալը. «Խալդի Աստծուն Սարդուրոդի արքա Իշպուինին, Իշպուինատրդի Մենուան այս դարպասները կառուցեցին, արևի (կամ Արևի Աստծո) ամսին zaaduali teruni (zaatuuli teertu) թող լինի տոնակատարության (հանդիսավորության) պաշտոնական (իշխանական) կարգը Խալդի, Թելշեբա, Շիվինի և մնացած աստվածներին»: Կարծում ենք, որ «zaatuuli teertu» կամ «zaaduali teruni» բառակապակցությունները հայերեն արմատներով բառակապակցություններ են:

«Zaa duuali ter uni» բառակապակցության մեջ հստակ երևում են հայերեն արմատները: «Zaa» - զատ՝ այսինքն՝ մեկ առ մեկ: «Duu ali» - դավել (պայմանավորվել), հավատալ, դաշնել, դաշինք կնքել: Ռուսերենում կա «договор». բառացիորեն նշանակում է խոսք տալ, պայմանավորվել ինչ-որ բանի վերաբերյալ: «Ter» - տերունական, որ նշանակում է պետական: «Uni» - ունի, ունիա, որ նշանակում է միասնություն, միություն: Առաջին սյունակի «zaa duuali ter uni» բառակապակցությունը հայերեն նշանակում է՝ «մեկ առ մեկ խոսք տվեցին (պայմանավորվեցին) տերունական միասնության, միության»: Այսպիսով՝ 1-ին սյունակի առաջին երեք տողերի համար կստանանք հետևյալ միտքը. «Խալդի Աստծուն Սարդուրոդի արքա Իշպուինին, Իշպուինատրդի Մենուան այս դարպասները կառուցեցին, արևի (կամ Արևի Աստծո) ամսին մեկ առ մեկ խոսք տվեցին (պայմանավորվեցին) տերունական (պետական) միության. թող լինի տոնակատարության (հանդիսության)

պաշտոնական (իշխանական) կարգը (հրամանը) Խալդի, Թեյշեբա, Շիվինի և մնացած աստվածներին»:

«Zaa tuuli te ertu» բառակապակցության մեջ ևս հստակ երևում են հայերեն արմատները: «Zaa» - զատ, այսինքն՝ մեկ առ մեկ: «Tuuli» - տուալ, տալ: «Te» - նույն արմատն է, ինչ որ մյուս պունյակի «ter»-ը և նշանակում է տերունական, պետական: «Ertu»-ն անկասկած հայերեն երդ(թ)ումն է: Հետևաբար երկրորդ պունյակի «zaa tuuli te ertu» բառակապակցությունը հայերեն նշանակում է՝ «մեկ առ մեկ տվեցին տերունական (պետական) երդում»:

Մտացվում է հետևյալ միտքը. «Խալդի Աստծուն Մարդուրորդի արքա Իշպուինին, Իշպուինաորդի Մենուան այս դարպասները կառուցեցին, արևի (կամ Արևի Աստծո) ամսին մեկ առ մեկ տվեցին տերունական (պետական) երդում. թող լինի տոնակատարության (հանդիսության) պաշտոնական (իշխանական) կարգը (հրամանը) Խալդի, Թեյշեբա, Շիվինի և մնացած աստվածներին»:

Այսպիսով, «Մհերի դռան» արձանագրությունը ներքաղաքական ուխտ-դաշինք էր, նորմատիվ պայմանագիր, որի նպատակն էր դավանաբանական դիցարանի կարգավորմամբ, բիայնական աստվածների հետ միասին նվաճվածների ու կամավոր միացած դաշնակիցների աստվածներին դիցարանում ներառելով՝ ամրապնդել պետության միասնությունը, դավանաբանական միասնության միջոցով հասնել թագավորության սոցիալական հիմքերի ամրապնդման:

Դաշնագրի կատարումն ուներ երկու երաշխիք. նախ՝ կրոնական երդումը, ուխտախոստումը, երկրորդ՝ թագաժառանգի ներկայությունն այդ արարողությանը: Դա երաշխիք էր, որ ապագայում տեղի չէր ունենա դաշինքի-ուխտի խզում, լուծում: Հավանաբար դաշինքի կնքման արարողությանը մասնակցել են նաև դաշնագրում թվարկված աստվածներին դավանող ընդհանրությունների աշխարհիկ և հոգևոր պաշտոնական ներկայացուցիչները, և նրանք ևս տվել են երդում-խոստում: Դրանով պետք է բացատրել «զատ» -մեկ առ մեկ շեշտադրումը:

Կրոնական դիցարանի կարգավորումը ենթադրում էր նաև սոցիոնորմատիվ համակարգի կարգավորում: Ճանաչելով բիայնական գերիշխանության տակ անցած տարածքների աստվածներին, պետական իշխանությունը միաժամանակ լեգալացնում և լեգիտիմացնում էր նաև տեղական կրոնափրավական սովորույթներն այն ոլորտներում, որոնք չէին մտնում բիայնական արքաների իրավասության շրջանակի մեջ: «Մհերի դռան» արձանագրությունը սոցիոնորմատիվ կարգավորման համակարգում կատարում էր հիմնադիր նորմատիվ պայմանագիր - օրենքի (արդի եզրութաբանությամբ՝ սահմանադրության) դեր, որն ընդունվել է մ. թ. ա. 825-810 թթ. միջակայքում՝ Իշպուինի արքայի օրոք: Իշպուինիի հայրը՝ Մարդուրի Առաջինը (մ. թ. ա. 845-825 թթ.), հիմք

դրեց Նաիրի-Բիաինայի հզորությանը, հիմնադրեց մայրաքաղաք Վանը, ընդարձակեց պետության սահմանները: Հզորացող պետության բարենորոգչական գործընթացներից մեկն էլ «Միերի դուռ» հիմնադիր նորմատիվ ուխտ-օրենք-դաշինքի ընդունումն էր:

Այսպիսով, Արարատյան թագավորության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը գերազանցապես թեոկրատական սովորույթային էր: Կարգավորման համակարգում կարևոր դեր էին խաղում կրոնական միջոցները՝ տաբուները, ուխտախոստումները, երդումը, անեծքը: Հասարակական կյանքի առանձնահատկությունները չէին խթանում քաղաքականացված օրենսդրական-նորմատիվ կարգավորման բուռն զարգացումը: Թագավորական-տերունական կարգավորմանը մեծ մասամբ բնորոշ էր անհատական իրավական մակարդակը: Նորմատիվ կարգավորիչ ձևը՝ թագավորական ընդհանուր հրովարտականների միջոցով, չունեի համընդգրկուն կարգավորիչի նշանակություն, այլ վերաբերում էր միայն դրվագային հասարակական սրված հիմնախնդիրներին: Այդ թագավորության նորմատիվ արձանագրությունների մեջ կարելի է առանձնացնել երկու տեսակ նորմատիվ ակտեր՝ ուխտ-դաշինքներ և նորմատիվ կարգադրագրեր (օրենքներ): Ուխտ-դաշինքի ամենացայտուն օրինակը «Միերի դուռ» ժայռի վրա արված արձանագրությունն է, որի որոշ տողեր ուղղակիորեն կարդացվում են հայերեն: Այդ ուխտը սոցիոնորմատիվ կարգավորման համակարգում կատարում էր հիմնադիր նորմատիվ պայմանագիր - օրենքի (արդի եզրութաբանությամբ՝ սահմանադրության) դեր:

Բանալի բառեր – *սովորույթ, միասնականացում, իրավունքի ձև, թագավորական իրավունք, տերունական, նորմատիվ արձանագրություն, երդում, ուխտ, հիմնադիր օրենք*

АРТУР ВАГАРИЯН – Вопросы правовой политики и источников права Арагатского царства. – Соционормативное регулирование Арагатского царства опиралось на теократическую обычную систему. При регулировании общественных отношений важную роль играли религиозные инструменты: табу, проклятие, клятва, договор. Общественная жизнь с её особенностями не стимулировала развитие политизированного законодательно-нормативного регулирования. Царскому, государственному регулированию был по большей части присущ индивидуально-правовой уровень. Нормативное регулирование, осуществляемое через царские указы и лишённое всеобщего значения, охватывало только частные отношения. Среди клинописных надписей различаются два вида нормативных актов: договоры и предписания-законы. Выдающимся примером договора является клинописная надпись на скале «Врата Мгера», некоторые строки которой можно читать по-армянски. В системе соционормативного регулирования она исполняла роль учредительного договора-закона, своего рода конституции.

Ключевые слова: *обычай, интеграция, форма права, королевское право, государство, нормативные клинописи, клятва, договор, учредительный закон*

ARTHUR VAGHARSHYAN – *Some Issues on the Legal Policy and Legal Sources of the Kingdom of Ararat.* – The socio-normative regulatory system of the Kingdom of Ararat/Urartu was theocratic conventional system. The religious means, such as taboos, curses, oaths and covenants played an important role in the regulatory system. The peculiarities of the social life didn't stimulate the impetuous development of the politicized legislative-normative regulation. The royal-state regulation was more characterized by the individual legal level. By the general royal edicts the normative regulatory way didn't possess the importance of universal moderator, but concerned only to the private social relations. In the normative cuneiform inscriptions of this Kingdom two kinds of normative acts can be distinguished- covenants and regulatory prescriptions (laws). The most vivid example of the covenant is the cuneiform inscription on the rock of "Mher's Door", some lines of which are directly read in Armenian. That covenant had a role of the founding covenant/ Law (in the modern terminology- Constitution) in the socio-normative regulatory system.

Key words: *custom, unification, form of the right, royal right, Lord's, regulatory record, oath, covenant, founding law*

**КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ЛИЦА,
СОВЕРШИВШЕГО УБИЙСТВО В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

СЕРГЕЙ АРАКЕЛЯН

В борьбе с убийствами существенное значение имеет изучение личности тех, кто совершает указанные преступления. Ведь именно в личности заключены причины совершения преступных деяний, а значит, именно ее особенности, порождающие преступное поведение, должны быть непосредственным объектом предупредительного воздействия.

Личность преступника, в том числе убийцы, можно определить как некую социальную и психологическую модель, обладающую специфическими чертами. Человек всегда, даже совершая преступление, действует в качестве общественного существа. К нему нужно подходить как к носителю различных форм общественной психологии, нравственных, правовых, этических и иных взглядов и ценностей, индивидуально-психологических особенностей, составляющих источник преступного поведения. Следовательно, предполагается необходимость изучения всей совокупности социологических, психологических, правовых, медицинских, в первую очередь психиатрических, и других аспектов личности убийцы.

Иными словами, глубокое изучение личности преступника (убийцы) весьма важно для снижения и ликвидации преступности. Что касается социально-демографической характеристики, то анкетные данные преступников аналогичны данным всего населения Армении в целом. Однако применительно к лицам, совершившим убийства, они обладают определенными особенностями и в этой, казалось бы, криминологически нейтральной характеристике. Так, например, при приблизительно равном соотношении числа мужчин и женщин в структуре населения страны, среди лиц, совершивших названные преступления, преобладают мужчины, удельный вес которых в среднем составляет 94.6%. Однако тревогу вызывает наблюдаемый за последние годы рост абсолютных показателей убийств, совершенных женщинами.

Криминологически значима также возрастная характеристика лиц, совершивших убийство. Возраст в значительной мере определяет физическое состояние и возможности человека, круг его потребностей, интересов, жизненных установок и ценностных ориентиров. С изменением возраста меняется и личность, ее социальные позиции, функции, навыки, мотивации, реакция на различные ситуации. Все эти изменения, в свою очередь, существенно влияют и на поведение. Кроме того, исследование возрастных особенностей лиц, совершивших убийство, позволяет определить направления профилактической и предупредительной работы соответствующих государственных органов и общественных организаций.

Материалы первичного статистического учета лиц, совершивших указанные преступления, показывают, что подавляющее большинство (96.5%) убийств в Армении совершают взрослые люди. В то же время наибольшая криминальная активность присуща возрастной группе от 30 до 49 лет, доля которых составляет почти половину (47.6%) общего числа лиц, совершивших убийства. По степени криминальной активности последующие места занимают группы 25–29 лет (17.1%), 18–24 (16.9%), 50 лет и старше (14.9%), 16–17 (2.8%) и 14–15 лет (0.7%).

Объясняя повышенную криминальную активность в возрастных группах 18–29 и 30–49 лет, укажем, что везде и во все времена именно в эту пору, как правило, решаются наиболее важные жизненные вопросы, на этот возраст приходится наибольшее количество сложных ситуаций (семейных неурядиц, бытовых конфликтов и т.д.), в этом возрасте люди чаще всего злоупотребляют алкоголем, наркотиками и т.п.

Что касается малолетних, совершивших убийства, прежде всего следует отметить такие обстоятельства, имеющие криминогенное значение, как еще недостаточно развитые волевые качества, повышенная восприимчивость, внушаемость, конформизм в поведении. Несовершеннолетним присущи также болезненное самолюбие, легкая ранимость, избыточная эмоциональность, неустойчивость оценок, юношеский максимализм, дефицит сдерживающих начал, обретаемые с опытом. Кроме того, у них отсутствуют устоявшиеся воззрения, они легче поддаются вредному влиянию. Подобные характеристики присущи подросткам и молодым людям, совершившим убийство, не только в Армении, но и в иных регионах¹.

Относительно образовательного уровня армянских убийц отметим, что большинство из них имеют среднее или среднее специальное образование (45.3%). Далее в порядке убывания идут лица с неполным средним (28.9%), неполным высшим (13.5%) и высшим (12.3%) образованием.

Образование и уровень культуры лиц, совершающих убийства, существенно отличается от соответствующих характеристик законопослушных граждан. Использование грубой силы – в основном удел примитивных и нецивилизованных натур. Среди исследуемых преступников довольно много лиц, в рамках вменяемости страдающих различными психическими аномалиями, которые отнюдь не способствуют получению образования и повышению его уровня, а также приобщению к культуре².

В общем числе лиц, совершивших убийства в Армении, преобладают безработные, удельный вес которых составляет 76.1%. Лица с непостоянным заработком составляют 22.8% убийц. На тех, кто имеет постоянную работу или учится, в сумме приходится 1.1%. Причем среди исследуемых лиц положительно характеризовались по месту работы более 27%. Кроме того, правоприменительная практика показала, что среди убийц, имевших ранее постоянную работу, преобладают лица (более 60%), в основном занятые тяжелым

¹ См., например: **Бородин С. В., Побегайло Э. Ф.** Характеристика умышленных убийств. М., 1981, с. 18.

² См. **Антонян Ю. М.** Преступность среди женщин. М., 1992, с. 66-67.

ручным трудом средней и низкой квалификации, которым обычно не дорожат и бросают при первой возможности.

Относительно времени, в течение которого лица, совершившие убийства, не работали. В материалах соответствующих уголовных дел во многих случаях (48.1%) об этом не содержится каких-либо сведений. Из имеющихся же данных следует, что они не работали свыше 3 лет в 17.3%, до 1 года – в 10.2%, до 4 месяцев – в 9.8% и до 2 месяцев – в 14.6% случаев.

Примечательно, что удельный вес безработных довольно высок не только в исследуемой, но и других преступных группах. Указанные лица в Армении довольно часто совершают как убийства, так и другие преступления – насильственные, корыстные, по неосторожности и т.д.

Уровень материальной обеспеченности лиц, совершивших убийства в Армении, статистически не фиксируется. Подобную информацию редко можно найти даже в материалах соответствующих уголовных дел. Можно лишь предположить, что, как и общество в целом, они в настоящее время подвержены резкому имущественному расслоению. Так, если часть из них (довольно большая) принадлежит к малообеспеченным или находится на грани нищеты, то другая имеет в основном средние доходы и владеет состояниями (иногда большими, даже огромными). Однако необходимо отметить, что не только, а иногда и не столько плохие материальные условия толкают человека на преступление (убийство в том числе). Надо искать и другие, не менее важные причины преступного поведения.

В отличие от социально-демографических особенностей, уголовно-правовые присущи только преступникам, в данном случае – лицам, совершившим убийства. Прежде всего, привлекает внимание их уголовное прошлое. Так, в Армении 25.3% из всех убийств совершаются лицами, ранее уже нарушавшими уголовно-правовые запреты. Примечательно, что все они уже привлекались за это к уголовной ответственности, а к моменту совершения убийства имели судимость (уголовно-правовой рецидив). Причем большая часть из них наказывалась не за убийства, в частности: за кражу (28.3%), умышленное нанесение телесных повреждений разной степени тяжести (17.7%), хулиганство (17.4%), разбой или грабеж (8.5%) и половые преступления (2.4%). За ранее совершенное убийство осуждались лишь 25.7%.

Среди убийц в Армении традиционно довольно высок удельный вес ранее судимых, причем тех, кто отбывал наказание в местах лишения свободы. При этом если кражи, грабежи, разбой, изнасилования и хулиганства часто совершаются в течение года после освобождения из исправительного учреждения, то убийства, как правило, – через более продолжительные сроки. Иными словами, чтобы совершить убийство, требуется больше времени для накопления и обострения внутренних конфликтов, вызывающих сильные психотравмирующие переживания.

Для криминологической характеристики личности важны также сведения о единоличном и групповом характере преступления. В данной связи следует отметить, что групповые преступления и лица, их совершающие, представляют большую общественную опасность, чем те же деяния, совершенные в оди-

ночку. В условиях взаимной поддержки снижается влияние сдерживающих факторов. Совместное совершение преступления не только облегчает его доведение до конца, но зачастую приводит к более тяжким последствиям. Между тем совершение преступлений в одиночку больше всего характерно для убийц³.

Данные официальной статистики свидетельствуют, что групповой характер носит приблизительно лишь каждое десятое убийство. Последние наиболее часто совершаются минимальным числом соучастников – двоими. Кроме того, 88.1% групповых убийств совершаются в составе группы совершеннолетних и лишь 11.9% – в смешанной группе с участием несовершеннолетних. В группе, состоящей лишь из несовершеннолетних, убийства, в отличие от других насильственных преступлений, не зафиксированы.

Исследование нравственных свойств и психологических особенностей лиц, совершивших убийства в Армении, показало, что последние не обладают качествами, которые могли бы исключить или существенно осложнить профилактику преступлений, а также процесс исправления. Их основной массе не присущи укоренившиеся асоциальные установки, у них отсутствуют устойчивые преступные убеждения, социально-психологическая адаптация хоть и нарушена, но серьезных дефектов, тем не менее, нет. Сказанное не относится, конечно, к давно утратившим социально полезные контакты рецидивистам, представляющим собой дезадаптированные личности⁴.

Вне связи с последним преступлением агрессивный характер поведения убийц в Армении проявлялся в отношении родственников (42.8%); коллег, сверстников (15.6%); случайных лиц (9.3%); всех (6.8%); животных, своего или чужого имущества (3.7%). Примечательно, что упомянутая агрессивность в основном проявлялась в стремлении к доминированию, в нанесении побоев, телесных повреждений. Среди сопряженных с агрессивностью особенностей исследуемых лиц выделяются раздражительность, вспыльчивость и эмоциональная неустойчивость (27.9%); склонность к вытеснению и защите (18.4%), обидчивость (12.8%); импульсивность (11.5%); склонность к внешнеобвиняющим формам реагирования (9.6%); асоциальная направленность личности (8.3%); сочетание различных особенностей (7.8%); психическая незрелость (3.7%).

Исследование контактов данной категории лиц с окружающими выявило следующие обстоятельства: частые конфликты (48.2%); замкнутый, уединенный образ жизни (16.1%); особенности не отмечены (35.7%). Относительное большинство таких лиц (34.7%) не имели каких-либо увлечений, 18.6% увлекались видами спорта, связанными с агрессией (боксом, восточными единоборствами и т.п.), 12.7% занимались коллекционированием, художественным творчеством, музыкой, а остальные имели иные увлечения.

Указанным лицам свойственны также эмоциональные нарушения, психологическая, а иногда и социальная отчужденность, трудности, связанные с ус-

³ См. **Антонян Ю. М., Кудрявцев В. Н., Эминов В. Э.** Личность преступника. СПб., 2004, с. 157.

⁴ См. **Антонян Ю. М.** Психология убийства. М., 1997, с. 146.

воением моральных и правовых норм. Они часто переносят на других то, что свойственно им самим, а именно – агрессивность, враждебность, мстительность. Они считают, что от людей с дурными, по их мнению, намерениями следует защищаться, лучше всего нападая на них. Следовательно, им свойственна не только высокая восприимчивость в межличностных отношениях, но и искаженная их оценка.

Исследуемые лица своеобразно относятся к закону, его требованиям и предписаниям. Так, признавая одни нормы, они часто отвергают другие, считая, что те не соответствуют их личным интересам. Среди них широко распространено мнение, что в конкретной жизненной ситуации определенными запретами (в том числе уголовно-правовыми) можно пренебречь.

Внушительная часть (более одной трети) лиц, совершивших убийства в Армении, как уже отмечалось, страдают в рамках вменяемости различными психическими аномалиями, имеют разного рода невротические нарушения. Распространены среди них и тревожно-депрессивные состояния, когда будущее рисуется в слишком мрачных тонах. Самая распространенная среди исследуемых лиц аномалия – хронический алкоголизм (37%). Далее по мере убывания аномалии распределяются следующим образом: психопатия (21%), остаточные явления черепно-мозговых травм (14%), органические заболевания центральной нервной системы (9%), олигофрения в степени легкой дебильности (8%), наркомания (6%), шизофрения (3%) и эпилепсия (2%). По результатам экспертных решений невменяемыми среди этих лиц признаны лишь 11%. Из них на диспансерном учете к моменту обследования состояли лишь 24% (алкоголизм – 12%, шизофрения – 8%, эпилепсия – 4%), а психиатрическое лечение в прошлом получали 20% (ПНД – 10%, стационар ПБ – 7%, принудительное лечение – 3%).

Примечательно, что с возрастом число психически здоровых в исследуемой категории лиц уменьшается. Причиной служит рост удельного веса страдающих алкоголизмом. В целом среди преступников с психическими аномалиями в возрасте до 24 лет ведущей патологией является психопатия, а в возрасте 25 лет и выше – хронический алкоголизм.

В этиологии тяжких насильственных преступлений, в том числе убийств, общеизвестна криминогенная роль пьянства. Ведь опьянение снимает внутренние запреты, нарушает сформированный предыдущим опытом самоконтроль. Оно помогает забыть содеянное, вытеснить в бессознательное психотравмирующие воспоминания о совершенном преступлении. Не случайно преступники часто утверждают, что ничего не помнят о случившемся⁵.

Согласно официальной статистике большое число убийств в Армении совершается в состоянии опьянения – 23.0% (и 25.8% всех насильственных преступлений). Причем 97.8% таких убийств совершается в состоянии алкогольного и лишь 2.2% – наркотического опьянения. Примечательно, что в значительной части названных преступлений в нетрезвом состоянии находились

⁵ См. **Бородин С. В., Побегайло Э. Ф.** Указ. соч., с. 22-23, **Колбая М. Б.** Криминологическая характеристика личности убийц в Республике Абхазия // «Бизнес в законе», 2010, № 5, с. 146.

как преступники, так и их жертвы.

Поведение человека, находящегося в состоянии опьянения, обусловлено не только непосредственным влиянием алкоголя, наркотических или иных одурманивающих средств, но и другими, не менее важными факторами, связанными с воспитанием, привычным поведением, психическим состоянием, психологией и моральным обликом каждого конкретного лица. Далеко не все, кто находится в состоянии опьянения, нарушают уголовно-правовые запреты⁶.

Социально значимые биофизиологические особенности лиц, совершивших убийства в Армении, интересуют нас, прежде всего, как факторы, затрудняющие социализацию личности. К ним относятся состояние здоровья, заболевания (в том числе наследственные), особенности физической конституции. Врожденные физические дефекты, тяжелые хронические заболевания, как известно, ограничивают возможности человека в плане образования, профессиональной подготовки и трудоустройства, досуга и других нормотипических проявлений жизненной активности. Обладая определенным психотравмирующим потенциалом, они могут осложнять межличностные контакты, взаимоотношения с окружающими. Но так же, как и в случаях психических аномалий (в рамках вменяемости), патологии биофизического характера, влияя на поведение личности, в том числе преступное, не являются его причиной. В частности, среди лиц, совершивших убийства в Армении, патологии раннего периода развития и невротические расстройства в детстве наблюдались у 27%. Из них ночные страхи – у 18%, логоневроз – у 6% и гипердинамические расстройства – у 3%. В плане наследственности, отягощенной психическими заболеваниями, наблюдается следующая картина: не отягощена – 66%, алкоголизмом – 17%, шизофренией – 7%, эпилепсией – 4%.

Все сказанное подтверждает сделанный рядом авторов вывод о том, что расстройства психики в сочетании с иными негативными особенностями личности и внешними воздействиями играют криминогенную роль, а поэтому требуют повышенного внимания.

Таким образом, исследование криминологических особенностей личности убийцы помогает выявить факторы, способствующие преступному поведению, а следовательно, повышает эффективность борьбы с убийствами в РА.

Ключевые слова: *убийство, личность преступника, личность убийцы, криминологическая характеристика, социально-демографические особенности, уголовно-правовые особенности*

ՄԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ – Հայաստանի Հանրապետությունում սպանություն կատարողի կրիմինալոգիական բնութագիրը – Հոդվածում քննարկվում են ՀՀ-ում սպանություն կատարողների անձը բնութագրող սոցիալ-ժողովրդագրական, քրեաիրավական, բարոյահոգեբանական և կենսաֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների կապակցությամբ նշվում է, որ ՀՀ-ում սպանություն կատարողների ավելի քան 90%-ը

⁶ См. **Антонян Ю. М.** Криминология. Избранные лекции. М., 2004, с. 74-76.

տղամարդիկ են: Տարիքային առումով առավել աչքի են ընկնում 30-49 տարեկանները (47.6 %): Նշված անձանց շարքում շատ մեծ է նաև գործազուրկների մասնաբաժինը (76.1 %):

ՀՀ-ում սպանություն կատարողների քրեախրավական առանձնահատկությունների կապակցությամբ հողվածում նշվում է, որ նրանց կազմում նախկինում դատվածների մասնաբաժինը 25.3 % է: Բացի դրանից, նշված հանցագործությունները գլխավորապես կատարվում են միանձնյա, իսկ խմբի կողմից՝ շուրջ 10 %-ը:

Հողվածում անդրադարձ է կատարվում նաև ՀՀ-ում սպանություն կատարողների բարոյահոգեբանական և կենսաֆիզիոլոգիական առանձնահատկություններին՝ արժեքային կողմնորոշումներին, պահանջմունքներին, մոտիվացիային, հիվանդագին տարբեր վիճակներին, որոնք էական դեր են կատարում հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում:

Բանալի բառեր – սպանություն, հանցագործի անձ, սպանություն կատարողի անձ, կրիմինալոգիական բնութագիր, սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկություններ, քրեախրավական առանձնահատկություններ

SERGEY ARAKELYAN – *Criminological Characteristics of Homicide Perpetrators in the Republic of Armenia.* – The article discusses social-demographic, criminal-legal, moral-psychological and bio-physiological peculiarities of the homicide perpetrators' personality in the Republic of Armenia.

While examining the social-demographic peculiarities it was revealed that more than 90% of the homicide perpetrators in the RA are men. As to the age, people aged 30-49 years (47.6%) more frequently commit homicides. The proportion of the unemployed within the total number of the homicide perpetrators is 76.1%.

While studying the criminal-legal peculiarities of the homicide perpetrators in the RA, it became evident, that 25.3% of these crimes are committed by reoffenders. Besides, the discussed crimes are mainly committed alone, and only about 10% are committed in a group.

The article discusses also some moral-psychological and bio-physiological peculiarities of homicide perpetrators, especially value orientations, needs, motivation, morbidity conditions, which play an essential role in the causal mechanism of criminal behaviour.

Key words: *homicide, criminal personality, personality of homicide perpetrators, criminological characteristics, social-demographic peculiarities, criminal-legal peculiarities*

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Մեր իրականության ցավոտ կողմերից է իրավապահ մարմինների հետ հասարակության անդամների համագործակցելու ցանկության բացակայությունը: Դրա առավել ցայտուն դրսևորումներից է ցուցմունք տալուց հրաժարվելը: Այդ հանցագործության համար քրեական պատասխանատվությունը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 339 հոդվածով, որի առաջին մասի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ. «Վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը»:

Ցուցմունք տալուց հրաժարվելու հիմնական անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ապահովում են վարույթն իրականացնող մարմնի՝ տուժողի և վկայի ցուցմունքների տեսքով ապացույցներ ստանալը: Ցուցմունք տալուց հրաժարվելն առանձին դեպքերում կարող է խոչընդոտել քրեական գործով ճշմարտության բացահայտումը, հանգեցնել անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելուն կամ այլ վտանգավոր հետևանքների: Ուստի ցուցմունք տալուց հրաժարվելու լրացուցիչ անմիջական օբյեկտ են համարվում անձի իրավունքներն ու օրինական շահերը:

Ցուցմունք տալուց հրաժարվելու օբյեկտիվ կողմը դրսևորվում է անգործությամբ, որի էությունն այն է, որ տուժողը կամ վկան չի կատարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ քր. դատ. օր.) իր վրա դրված՝ ցուցմունք տալու պարտականությունը:

Քր. դատ. օր.-ում տուժողի և վկայի ցուցմունքները բնորոշվում են որպես մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրանց հաղորդած տվյալներ (քր. դատ. օր.-ի 111 և 112 հոդվածների 1-ին մասեր): Այդուհանդերձ՝ տուժողի և վկայի ցուցմունքներ պետք է համարել նաև առերեսման ժամանակ նրանց գրավոր կամ բանավոր ձևով հաղորդած տվյալները, որովհետև առերեսումը հարցաքննության տեսակ է: Այսպես, քր. դատ. օր.-ի 216 հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ առերեսման կանչված անձանց առաջարկվում է հերթով ցուցմունքներ տալ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք պարզելու համար կատարվում է առերեսումը:

Ցուցմունք տալուց հրաժարվելը կարող է արտահայտվել այն բանով, որ վկան կամ տուժողը հարցաքննության կամ առերեսման ժամանակ վարույթն իրականացնող մարմնին բացահայտորեն տեղեկացնում է, որ ցանկություն չունի հայտնելու գործով իրեն հայտնի տվյալները կամ լուրջամբ է արձագանքում վարույթն իրականացնող մարմնի՝ գործով իրեն հայտնի տվյալները հայտնելու պահանջին կամ հրաժարվում է պատասխանել վարույթն իրականացնող մարմնի առանձին հարցերի: Այսինքն՝ ցուցմունք տալուց հրաժարվելը կարող է լինել լրիվ և մասնակի, արտահայտվել կամ ամբողջ գործով, կամ դրա առանձին դրվագներով ցուցմունք չտալով, առանձին հարցերին չպատասխանելով:

Որպես ցուցմունք տալուց հրաժարվել չի կարող որակվել վարույթն իրականացնող մարմին՝ կանչով հարցաքննության կամ առերեսման չներկայանալը: Գրականության մեջ կարծիք կա, որ ցուցմունք տալուց հրաժարվելը կարող է արտահայտվել նաև հարցաքննության ներկայանալուց խուսափելով¹: Սակայն վարույթն իրականացնող մարմին՝ կանչով տուժողի և վկայի չներկայանալը, թեկուզ առանց հարգելի պատճառների, պետք է համարել ոչ թե ցուցմունք տալուց հրաժարվել, այլ ցուցմունք տալուց խուսափել: Այդ առումով պետք է նշել, որ 1961 թվականի ՀՍՄՀ քրեական օրենսգրքի 197 հոդվածը քրեական պատասխանատվություն էր սահմանում ոչ միայն ցուցմունք տալուց հրաժարվելու, այլև խուսափելու համար: Ներկայումս վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց խուսափելը հանցագործություն չէ և կարող է հանգեցնել միայն դատավարական հարկադրանքի միջոցի կիրառմանը՝ բերման ենթարկելուն (քր. դատ. օր.-ի 153 հոդված):

Որպես ցուցմունք տալուց հրաժարվել ինքնին չի կարող որակվել վկայի և տուժողի կողմից հարցաքննության արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելը: Այսպես, երբ վկան կամ տուժողը բանավոր պատմում է գործով իրեն հայտնի հանգամանքների մասին, սակայն հարցաքննության արձանագրության մեջ նրա հայտնած տեղեկությունները քննիչի կողմից գրի առնվելուց հետո հրաժարվում է ստորագրել արձանագրությունը՝ պատճառաբանելով, որ այդ տեղեկությունները հայտնել է «ոչ պաշտոնապես», «ոչ արձանագրության համար», ապա ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմը բացակայում է: Նման դեպքերում համարվում է, որ վկան կամ տուժողը ցուցմունք (քր. դատ. օր.-ի 111 և 112 հոդվածներում ամրագրված բնորոշման իմաստով) տվել է: Վկայի կամ տուժողի կողմից հարցաքննության կամ առերեսման արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում քննիչը, քր. դատ. օր.-ի 29 հոդվածի յոթերորդ մասով սահմանված կար-

¹ См. «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации». Под ред. А. С. Михлина. М., 1996, т. 550:

գի համաձայն, արձանագրությունում այդ մասին կատարում է համապատասխան գրառում, որը հավաստվում է քննիչի, պաշտպանի, ներկայացուցչի, օրինական ներկայացուցչի, իրավահաջորդի կամ ընթերակայի ստորագրություններով, եթե նրանք մասնակցում են դատավարական գործողությանը: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվող անձին պետք է հնարավորություն տրվի բացատրելու հրաժարման պատճառները կամ պատճառները բացատրելուց հրաժարվելը, ինչը նույնպես արձանագրվում է:

Մակայն, եթե վկան կամ տուժողը հարցաքննությունից կամ առերեսումից առաջ՝ իր իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելուց հետո, հրաժարվում է ստորագրությամբ հավաստել պարզաբանման փաստը և միաժամանակ ցուցմունք չի տալիս, ապա ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմն առկա է:

Եթե վկան կամ տուժողը հարցաքննության ժամանակ վարույթն իրականացնող մարմինն խաբում է և հայտնում, որ չի հիշում գործով հաստատման ենթակա հանգամանքները կամ չի տեսել դրանք կամ չի լսել դրանց մասին, ապա արարքը պետք է որակվի ոչ թե որպես ցուցմունք տալուց հրաժարվել, այլ սուտ ցուցմունք տալ: Հարցաքննության ժամանակ այնպիսի արտահայտություններ անելը, ինչպիսիք են «չեմ հիշում», «չեմ տեսել», «չեմ լսել», ևս համարվում է ցուցմունք, քանի որ դրանք փաստական տվյալներ են, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով վարույթն իրականացնող մարմինը պարզում է վկայի կամ տուժողի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու կամ վերարտադրելու փաստը: Եթե քր. դատ. օր.-ի 108 հոդվածի համաձայն քրեական գործով հաստատման հանգամանք է վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները, ապա հաստատման ենթակա հանգամանք պետք է համարել նաև վկայի կամ տուժողի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու և հիշելու փաստը: Միաժամանակ պետք է նշել, որ նման դեպքերում սուտ ցուցմունք տալու հանցակազմը հիմնավորելու համար² անհրաժեշտ է գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորել, որ վկան կամ տուժողը ընկալել է և հիշում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Վկայի կամ տուժողի կողմից գործով պարզման ենթակա հանգամանքներն ընկալելու և հիշելու վերաբերյալ չփարատված կասկածները պետք է մեկնաբանել հօգուտ նրա:

² ՀՀ վճռաբեկ դատարանի ԼԴ/0301/01/09 գործի վերաբերյալ 2010 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ, քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հետևության նախապայման է հիմնական գործով վերջնական դատական ակտի կայացումը:

Ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմն առկա չէ նաև այն դեպքերում, երբ վկան կամ տուժողը ցուցմունք տալու ընթացքում լռում է իրեն հայտնի հանգամանքների մասին: Տվյալ դեպքում նա ոչ թե հրաժարվում է ցուցմունք տալուց, այլ չի տալիս ամբողջական ցուցմունք, ինչով խոչընդոտում է ճշմարտության բացահայտումը: Այսինքն՝ ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ վարույթն իրականացնող մարմնի համար ակնհայտ դառնա, որ վկան կամ տուժողը տիրապետում է գործի համար նշանակություն ունեցող որոշակի տվյալների, բայց չի ցանկանում դրանք հայտնել: Իսկ եթե վկան կամ տուժողը որոշակի տվյալներ հայտնելուն զուգահեռ գիտակցաբար լռում է այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն գործի համար, ապա առկա է անգործությամբ դրսևորվող՝ սուտ ցուցմունք տալու հանցակազմը³:

Ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմը ձևական է. հանցանքն ավարտված է համարվում հրաժարվելու պահից: Ցուցմունք տալուց հրաժարվելուց հետո ցուցմունք տալը վկային և տուժողին չի ազատում քրեական պատասխանատվությունից, սակայն կարող է հաշվի առնվել որպես պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք⁴:

Եթե սկզբնական հարցաքննության ժամանակ ցուցմունք տված վկան կամ տուժողը հրաժարվում է ցուցմունք տալ լրացուցիչ հարցաքննության կամ առերեսման ժամանակ, ապա ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմն առկա է⁵: Այսպես, եթե սկզբնական հարցաքննությունից հետո վարույթն իրականացնող մարմնի համար անհրաժեշտություն է առաջացել կատարելու լրացուցիչ հարցաքննություն կամ առերեսում, ապա դա նշանակում է, որ առկա է նոր ապացուցողական տեղեկատվություն ստանալու կամ ցուցմունքների միջև առկա էական հակասությունները վերացնելու խնդիր, իսկ վկան կամ տուժողն իր դատավարական պարտականությունը չկատարելով խոչընդոտում է այդ խնդրի իրականացումը: Լրացուցիչ հարցաքննության կամ առերեսման ժամանակ վկայի կամ տուժողի տված ցուցմունքները նույնպես ապացույց են համարվում, ուստի այդ ցուցմունքները տալուց հրաժարվելը վնաս է պատճառում քննարկվող հանցագործության հիմնական անմիջական օբյեկտին:

³ См. у **Хабидуллин М. Х.** Ответственность за заведомо ложный донос и заведомо ложное показание по советскому уголовному праву. Казань, 1975, էջ 98-99:

⁴ Ցուցմունք տալուց հրաժարվելուց հետո ցուցմունք տալը կարող է գնահատվել նաև որպես իրադրության փոփոխություն, որի հետևանքով անձի կատարած արարքը դադարել է վտանգավոր լինելուց և նրան քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք համարվել:

⁵ См. у «Преступления против правосудия». М., 2005, էջ 217:

Ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմը բացակայում է, եթե դա կատարվել է այնպիսի հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, որը վկայի կամ տուժողի համար ստեղծել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ (քր. օր.-ի 45 հոդվածի 2-րդ մաս), այսինքն՝ եթե ցուցմունք տալուց հրաժարվելը օրենքով պաշտպանվող ավելի բարձր արժեքին (վկայի, տուժողի, նրանց մերձավորների կյանքին, առողջությանը) անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու միակ միջոցն է եղել:

Ցուցմունք տալուց հրաժարվելու սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Շարժառիթները և նպատակները կարող են տարբեր լինել (մեղադրյալի մեղքը թեթևացնելը, իրավապահ մարմինների նկատմամբ բացասական վերաբերմունքը և այլն), որոնք, սակայն, արարքի որակման վրա չեն ազդում:

Ցուցմունք տալուց հրաժարվելու սուբյեկտը 16 տարին լրացած, մեղսունակ տուժողը կամ վկան է:

Անձը տուժողի դատավարական կարգավիճակ է ձեռք բերում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից տուժող ճանաչելու մասին որոշում կայացնելուց հետո:

Քր. դատ. օր.-ի 59 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տուժող կարող է ճանաչվել նաև իրավաբանական անձը, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Տվյալ դեպքում տուժողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը: Սակայն տուժող ճանաչված իրավաբանական անձի ներկայացուցիչը ցուցմունք տալուց հրաժարվելու սուբյեկտ չէ, քանի որ քր. դատ. օր.-ի 79 հոդվածով ամրագրված չէ նրա՝ ցուցմունք տալու պարտականությունը: Ցուցմունք տալուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել տուժողի իրավահաջորդը, բայց միայն այն դեպքում, երբ քր. դատ. օր.-ի 80 հոդվածի 5-րդ մասի համաձայն նա կանչվի հարցաքննության որպես վկա:

Ինչ վերաբերում է վկային, ապա որպեսզի անձը ձեռք բերի վկայի իրավական կարգավիճակ և դառնա քրեադատավարական հարաբերությունների սուբյեկտ, անհրաժեշտ է իրավաբանական փաստ: Այդպիսի իրավաբանական փաստ է վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին հարցաքննության կանչելը⁶: Եվ իսկապես, ծանուցագիրը ստանալու պահից անձը ձեռք է բերում ծանուցագրում նշված ժամկետում վարույթն իրականացնող մարմին ներկայանալու պարտականություն, և առանց հարգելի պատճառների չներկայանալու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել դատավարական հարկադրանքի

⁶ Ст'ю Епихин А. Ю. Защита законных прав и интересов свидетеля в уголовном процессе: Автореф. дис. ...канд. юрид. наук. М., 1995, էջ 7:

միջոց՝ բերման ենթարկելը:

Սակայն գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ ճիշտ չէ անձի կողմից վկայի դատավարական կարգավիճակի ձեռքբերումը կապել նրան հարցաքննության կանչելու պահի հետ⁷: Հարցաքննության կարելի է կանչել նաև այն անձին, ով իր ֆունկցիոնալ թերությունների պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Սակայն այդ անձը չի կարող վկա համարվել: Այդ առումով գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվել, որ անձը վկայի կարգավիճակ ձեռք է բերում այն պահից, երբ իր ստորագրությամբ հավաստում է իր իրավունքների և պարտականությունների պարզաբանման փաստը⁸:

Այսպիսով, թեև քր. դատ. օր.-ի 86 հոդվածի 1-ին մասի իմաստով անձը վկայի դատավարական կարգավիճակ է ձեռք բերում վարույթն իրականացնող մարմին կանչվելու պահից, սակայն այդ պահին վկայի իրավունքներով և պարտականություններով նա դեռ ամբողջ ծավալով օժտված չէ: Մասնավորապես, ցուցմունք տալու պարտականությունը վկան ձեռք է բերում այն ժամանակ, երբ նա արդեն ներկայացել է հարցաքննության կամ առերեսման և ցուցմունք տալու հնարավորություն ունի: Հենց այդ պահից էլ հնարավոր է վկային քրեական պատասխանատվության ենթարկել ցուցմունք տալուց հրաժարվելու համար:

Փաստորեն, ժամանակային առումով ցուցմունք տալուց հրաժարվելը հնարավոր է այն պահից, երբ վկան կամ տուժողը ներկայացել է վարույթն իրականացնող մարմին և ունի ցուցմունք տալու հնարավորություն: Եթե հարցաքննությունը կատարվում է վկայի կամ տուժողի գտնվելու վայրում, ապա ցուցմունք տալուց հրաժարվելը հնարավոր է այն պահից, երբ հարցաքննություն կատարող անձը ինքն է ներկայացել վկային կամ տուժողին, և վերջինս ցուցմունք տալու հնարավորություն է ստացել:

Ցուցմունք տալուց հրաժարվելու սուբյեկտ չեն կարող համարվել այն անձինք, ովքեր քր. դատ. օր.-ի 86 հոդվածի 2-րդ մասի համաձայն չեն կարող կանչվել և հարցաքննվել որպես վկա:

Քր. դատ. օր.-ի 114 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փորձագետը կարող է հարցաքննվել իր տված եզրակացության պարզաբանման կապակցությամբ: Սակայն նա ցուցմունք տալուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվության ենթակա չէ, քանի որ քր. օր.-ի 339 հոդվածով նախատեսված չէ որպես տվյալ հանցագործության սուբյեկտ և, քր. դատ. օր.-ի համաձայն, նա հարցաքննվում է հենց որպես փորձագետ, այլ ոչ թե որպես վկա:

⁷ См. у Павлов Н. Е. Субъекты уголовного процесса. М., 1997, էջ 115:

⁸ См. у Будников В. Л. Иммуниет свидетеля в уголовном процессе: Лекция. Волгоград, 1998, էջ 7:

Ցուցմունք տալուց հրաժարվելու սուբյեկտ չի կարող համարվել այն անձը, ով վարույթն իրականացնող մարմնի կողմից սխալմամբ է վկայի կամ տուժողի դատավարական կարգավիճակ ստացել:

Ցուցմունք տալուց հրաժարվելու սուբյեկտների շրջանակի հետ կապված՝ անհրաժեշտ է քննարկել նաև այն հարցը, թե արդյոք քր. օր.-ի 339 հոդվածով քրեական պատասխանատվության են ենթակա պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման պարտականություն ունեցող անձինք, ովքեր որպես վկա կամ տուժող հարցաքննվելիս հրաժարվում են հայտնել գաղտնիք կազմող տեղեկությունները:

Այդ առումով քր. դատ. օր.-ի 171 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Անձինք, որոնց քրեական հետապնդման մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող, վկայակոչելով պետական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն իրավունք ունեն դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալ քրեական հետապնդման մարմնի կողմից նշված տեղեկությունների ստացման անհրաժեշտությունը հաստատող, հարցաքննության կամ այլ համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում»: Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններին վերաբերող համանման դրույթ ամրագրված է քր. դատ. օր.-ի 172 հոդվածի 3-րդ մասով:

Դա նշանակում է, որ ցուցմունք տալուց հրաժարվելը, որը պատճառաբանվում է պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությամբ, վկային և տուժողին չի ազատում քրեական պատասխանատվությունից: Միաժամանակ, եթե վկան կամ տուժողը հարցաքննության ժամանակ վարույթն իրականացնող մարմնին օրենսդրությամբ սահմանված կարգով հաղորդում է պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք, ապա բացառվում է գաղտնիքի հրապարակման համար նրա պատասխանատվությունը:

Ցուցմունք տալուց հրաժարվելու սուբյեկտների շրջանակը սահմանափակված է նաև քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթով, համաձայն որի՝ «Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից»: Այդ դրույթը բխում էր 05.07.1995 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42 հոդվածից, որը սահմանում էր՝ «Մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ»: Սակայն 27.11.2005 թ. կատարված փոփոխություններ-

րից հետո ՀՀ Սահմանադրության 22 հոդվածով հռչակվեց. «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ»:

Այսինքն՝ մինչև սահմանադրական փոփոխություններ կատարելը անձի՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու շրջանակները սահմանափակվում էին միայն այն տեղեկություններով, որոնք կարող էին բացասաբար անդրադառնալ անձի, նրա ամուսնու կամ մերձավոր ազգականների կարգավիճակի վրա: Սահմանադրական փոփոխություններից հետո անձի՝ ցուցմունք չտալու իրավունքի առարկան ընդլայնվեց՝ ներառելով ոչ միայն իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ բացասական, այլև ցանկացած բնույթի տեղեկատվությունը:

ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթով միանշանակորեն ապահովվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված լուծության իրավունքը, քանի որ յուրաքանչյուր դեպքում անձը ձեռք է բերում իրեն վերաբերող հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ չհայտնելու իրավունք, անկախ այն բանից՝ այդ տեղեկությունները հետագայում կօգտագործվեն հօգուտ, թե ի վնաս իրեն⁹:

Սակայն սահմանադրական փոփոխություններից հետո քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասը չի համապատասխանեցվել ՀՀ Սահմանադրության 22 հոդվածին: Քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասից բխում է, որ վկան կամ տուժողը ցուցմունք տալուց հրաժարվելու համար ենթակա չէ քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ հրաժարվում է ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ, այլ ոչ թե վերաբերյալ: ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի և քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասի միջև առկա հակասությունը պետք է լուծվի հօգուտ սահմանադրական նորմի, քանի որ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ իր, ամուսնու և մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը կրում է բացարձակ բնույթ: Վկան կամ պետք է ցուցմունք տա ամբողջ ծավալով, կամ ընդհանրապես ցուցմունք չտա¹⁰: Դա հիմնավորվում է նրանով, որ ճիշտ չէ հարցաքննության ժամանակ վկային պարտադրել ներկայացնելու միայն գործով նշանա-

⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., 2010, էջ 260-261:

¹⁰ Տե՛ս **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том II, СПб., 1996, էջ 276:

կություն ունեցող այն տվյալները և պատասխանել միայն այն հարցերին, որոնք, վարույթն իրականացնող մարմնի կարծիքով, չեն կարող վատթարացնել վկայի կամ նրա ամուսնու ու մերձավոր ազգականների վիճակը: Նախ, բավականին դժվար է պարզել այդ հարցերի իրական բնույթը, և երկրորդ, քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում մասնակի հարցաքննություն կատարելու հնարավորություն: Եվ վերջապես, չկա երաշխիք, որ այդպիսի հարցերի պատասխանները չեն օգտագործվի վկայի կամ նրա ամուսնու, մերձավոր ազգականների դեմ: Եթե քննիչը կփորձի վկային մատնանշել նրա լռելու իրավունքի սահմանները, ինչպես նաև վկայի իմունիտետի առարկան, ապա դրանով փաստորեն կիմաստագրվի վկայի իմունիտետի բուն էությունը¹¹:

Կարծում ենք, որ գործող սահմանադրաիրավական կարգավորման պարագայում վկան կամ տուժողը իրավունք ունի հրաժարվելու իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ինչպես ընդհանրապես ցուցմունք տալուց, այնպես էլ առանձին հարցերի պատասխանելուց: Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի սահմանները պետք է որոշի ինքը՝ վկան կամ տուժողը, այլ ոչ թե վարույթն իրականացնող մարմինը:

ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր: Ըստ այդմ՝ քր. դատ. օր.-ում ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքն ընդգրկում է ավելի լայն ոլորտ, քան անձի կողմից իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելն է: Այդ առումով քր. օր.-ի 339 հոդվածի 2-րդ մասն ամբողջությամբ չի համապատասխանում նաև քրեադատավարական օրենսդրությանը:

Օրինակ, համաձայն քր. դատ. օր.-ի հոդված 448-ի 1-ին մասի՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք կարող են ցուցմունքներ չտալ որպես վկա կամ տուժող: Նույն հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից բխում է, որ հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք կարող են հրաժարվել իրենց ծառայողական պարտականությունների կատարմանը վերաբերող հարցերի մասին ցուցմունքներ տալուց: Ուստի քր. օր.-ի հոդված 339-ի 2-րդ մասում անհրաժեշտ է վկայի և տուժողի քրեական պատասխանատվությունը բացառել ոչ միայն իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու, այլև քր. դատ. օր.-ով սահմանված՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լի-

¹¹ Ст' u Будников В. Л., նշվ. աշխ., էջ 11:

նելու բոլոր դեպքերում ցուցմունք տալուց հրաժարվելու համար:

Ներկայացնենք քր. օր.-ի հոդված 339-ի 2-րդ մասում ամրագրված դրույթին վերաբերող ևս մեկ դիտարկում: Քր. օր.-ի հոդված 339-ի 2-րդ մասում օգտագործված «ազատվում է քրեական պատասխանատվությունից» արտահայտությունը կարող է սխալ տպավորություն ստեղծել այն մասին, որ եթե վկան կամ տուժողը հրաժարվում է իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց, ապա նրա արարքը պարունակում է ցուցմունք տալուց հրաժարվելու հանցակազմ, պարզապես բարոյականության նորմերից ելնելով՝ պետությունը նրան ազատում է կատարած հանցանքի համար քրեական պատասխանատվությունից:

Ինչպես արդեն նշել ենք, ցուցմունք տալուց հրաժարվելն անգործությանմբ դրսևորվող հանցագործություն է, իսկ անգործության քրեաիրավական էությունն այն է, որ անձը չի կատարում իր վրա դրված պարտականությունը: Վկան և տուժողը իր, ամուսնու և մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալու պարտականություն չունեն, նմանապես՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձը չի կրում ցուցմունք տալու պարտականություն: Հետևաբար՝ նշված անձանց կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը չի կարող քրեաիրավական իմաստով անգործություն համարվել: Ուստի, քր. օր.-ի հոդված 339-ի 2-րդ մասում պետք է սահմանել ոչ թե քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, այլ ապաքրեականացում իրականացնող դրույթ: Կարծում ենք՝ քր. օր.-ի հոդված 339-ի 2-րդ մասում օգտագործված «ազատվում է քրեական պատասխանատվությունից» արտահայտությունն անհրաժեշտ է փոխարինել «ենթակա չէ քրեական պատասխանատվության» արտահայտությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝ քր. օր.-ի հոդված 339-ի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենքով նախատեսված դեպքերում ցուցմունք տալու պարտականությունից ազատված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության ցուցմունք տալուց հրաժարվելու համար»:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կարող են նպաստել վկայի և տուժողի իրավունքների առավել ամբողջական պաշտպանությանը:

Բանալի բառեր – ցուցմունք տալուց հրաժարվել, հարցաքննություն, առերեսում, վարույթն իրականացնող մարմին, քրեական պատասխանատվություն, վկայի իմունիտետ, ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը

МИСАК МАРКОСЯН – *Уголовная ответственность за отказ от дачи показаний.* – Болезненная сторона нашей действительности – нежелание граждан сотрудничать с правоохранительными органами, что нередко обусловлено влия-

нием преступного мира. Это нежелание проявляется, в частности, в отказе от дачи показаний, что в отдельных случаях препятствует установлению истины по делу, ведёт к привлечению невиновных к уголовной ответственности и т.п.

В статье анализируется состав отказа от дачи показаний. На основе соответствующих уголовно-правовых и уголовно-процессуальных норм представлены особенности квалификации такого отказа. Рассмотрены также конституционно-правовой, уголовно-процессуальный и уголовно-правовой аспекты права на отказ от дачи показаний.

Ключевые слова: *отказ от дачи показаний, допрос, очная ставка, орган, проводящий следствие, уголовная ответственность, иммунитет свидетеля, право на свободу от дачи показаний*

MISAK MARKOSYAN – *Criminal Liability for Refusal to Testimony.* – One of the painful aspects of our reality is the absence of society members' willingness to cooperate with the law enforcement authorities, which is most likely conditioned by accepting the rules of the behavior established in the criminal world. One of the most obvious manifestations of the mentioned phenomenon is the refusal to testify. In certain cases this crime can hinder the disclosure of the truth in the criminal case, lead an innocent person to criminal liability or to other dangerous consequences.

The article analyses corpus delicti of refusal to testimony. Based on the relevant criminal material and procedural provisions, the author presents the peculiarities of the legal assessment of refusal to testify. The constitutional, criminal procedural and criminal-legal aspects of the right to refusal to testimony are also discussed in the article presented.

Key words: *refusal to testimony, interrogation, confrontation, the authority conducting the investigation, criminal liability, witness immunity, the right to freedom to testify*

ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ

ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ

Ժամկետները քրեական դատավարությունում դատավարական ձևի պահպանման կարևոր երաշխիքներից են, որոնք ապահովում են քրեական դատավարության խնդիրների արագ և արդյունավետ իրականացումը: Ժամկետների սահմանումը քրեական դատավարությունում նաև մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է: Պատահական չէ, որ Եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ դատական քնության ընթացքում «ողջամիտ ժամկետում գործերի քնության» հասկացությանը: Պետք է նշել, որ այն որպես սկզբունք ամրագրվեց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծի 24 հոդվածում, որի հիմքում ընկած է ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու մեղադրյալի իրավունքը:

Դատավարության իրավունքի տեսության մեջ ժամկետները բաժանվում են երկու տեսակների՝ գործավարային, որոնք ապահովում են վարույթն իրականացնող մարմինների գործունեության ներքին կազմակերպումը, և դատավարական, որոնք ապահովում են կողմերի իրավունքները¹: Դրանք երկուսն էլ կարևոր են դատավարության խնդիրների իրականացման համար: Համաձայն ենք այն մասնագետների մտտեցմանը, որ դատավարական ժամկետները դատավարության բոլոր մասնակիցներին պետք է հնարավորություն տան իրականացնելու իրենց իրավունքներն ու պարտականությունները²: Մրցակցային դատավարական ձևի պայմաններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում ողջամիտ ժամկետներում դատարանի առջև կանգնելու անձի իրավունքի իրացմանը:

Քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ գլուխը նվիրված է դատավարական ժամկետներին, որում ընդհանուր առմամբ կարգավորվում են ժամկետների հաշվարկման և դրանց բաց թողնելու հետևանքներն ու վերականգնման կարգը: Ժամկետները՝ որպես դատավար-

¹ Տե՛ս **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Т. 2, СПб., 1996, էջ 347:

² Տե՛ս **Сокол П. Я.** Процессуальные гарантии быстроты предварительного расследования: Дисс. ...канд. юрид. наук. М., 1990, էջ 79:

րական երաշխիքներ, ամրագրված են դատավարության գրեթե բոլոր ինստիտուտներում և վերաբերում են ինչպես քրեական գործերի քննության ընթացքին, այնպես էլ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմանը, վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների բողոքարկմանը և այլն: Այդ համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նախաքննության համար օրենքով սահմանված ժամկետները, որոնք պետք է բխեն քրեական դատավարությունում անձի իրավունքներից, ինչպես նաև քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունից: Նախնական քննության իրականացման համար սահմանված ժամկետները նաև ապահովում են քրեական դատավարությունում իրականացվող գործողությունների և կայացվող որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը³:

Քրեական դատավարության 197 հոդվածի համաձայն՝ քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշում կայացնելու օրը: Իհարկե, օրենսդրական նշված կարգավորումը հստակ չէ, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ի 196 հոդվածի համաձայն՝ նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով: Այս հոդվածից հետևում է, որ նախաքննության ժամկետն ավարտվում է, երբ քննիչը մեղադրական եզրակացությամբ գործն ուղարկում է դատախազին կամ բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին որոշում է կայացնում: Նախաքննության ժամկետն ավարտվում է նաև այն պահին, երբ որոշում է կայացվում քրեական գործը կարճելու մասին:

Մեղադրական եզրակացությունը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում դատախազը պետք է ընդունի օրենքով նախատեսված համապատասխան որոշումներից մեկը: Փաստորեն մեղադրական եզրակացությունը հաստատելու համար նախատեսված հինգ օրը չի մտնում նախաքննության ժամկետի մեջ, իսկ դրա պահպանման պատասխանատվությունը դրված է դատախազի վրա: Հետևաբար, եթե նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացության կայացմամբ, ապա նախաքննության ժամկետի ավարտ է համարվում մեղադրական եզրակացությունը ստորագրելու պահը:

Նախնական քննության համար օրենքով սահմանված ժամկետը

³ Ст'а **Аширбекова М. Т.** Соблюдение разумного срока как качественная характеристика производства по уголовному делу // "Российская юстиция", 2010, № 12, էջ 64:

չպահպանելը հանգեցնում է իրավական հետևանքների, այդ ընթացքում կատարված գործողությունների արդյունքների առոչինչ ճանաչման, իսկ նախաքննությունն իրականացնող մարմնին՝ իրավաբանական պատասխանատվության ենթարկելու:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 197 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այս ժամկետը վերջնական չէ, բայց քննիչը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները այդ ժամկետը պահպանելու համար: Եթե քննիչը հնարավորություն ունի գործի քննությունն ավարտելու ավելի շուտ, ապա անպայման պետք է օգտագործի այդ հնարավորությունը:

Իրականում միշտ չէ, որ հնարավոր է լինում նախաքննությունն ավարտել օրենքով սահմանված ժամկետում, և օրենքը նախատեսում է դրա երկարացման հնարավորություն: Նախաքննության համար օրենքով վերջնական ժամկետ սահմանված չէ, բայց դա չի նշանակում, որ այն կարող է անվերջ քննվել:

Քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է դատախազի կողմից քննիչի պատճառաբանված որոշմամբ նախաքննության ժամկետի երկարացման հնարավորություն: Անձի իրավունքների և ազատությունների կամայական սահմանափակման անթույլատրելիության սկզբունքից ելնելով՝ նախաքննության ժամկետների կամայական երկարացումն անթույլատրելի է: Անկասկած անթույլատրելի է նույն հիմքերով նախաքննության ժամկետների անընդհատ երկարացում, որովհետև դրանով մեծանում է անձի անընդհատ քրեական հետապնդման տակ մնալու վտանգը: Մա նշանակում է, որ նախաքննության ժամկետների երկարացման յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն երեք օր առաջ: Իհարկե, քննիչի պատճառաբանված որոշումը ներառում է դատախազին ուղղված միջնորդություն, որում նշվում է նախաքննության ժամկետը երկարացնելու հանգամանքների անհրաժեշտության մասին:

Պրակտիկայում առաջացած խնդիրը վերաբերում է այն դեպքին, երբ քննիչը խախտում է նախաքննության երկարացման համար օրենքով սահմանված ժամկետը: Քրեական դատավարության գործող օրենսգիրքը միանշանակ պատասխան չի տալիս այն հարցին, թե ինչպես պետք է վարվել այդ դեպքում, ուստի առաջացել է իրավական անորոշություն. դա պայմանավորված է նաև ՀՀ քրեական դատավարության

րության օրենսգրքի 174 հոդվածի 1-ին մասում տեղ գտած այն դրույթով, որ ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում: Նշված հոդվածում տեղ գտած կարգավորումը, կարծում ենք, արդարացված է, քանի որ այն վարույթն իրականացնող մարմնին արգելում է իրականացնել վարույթային գործողություններ, որոնք կարող են ուղղված լինել ապացույցների ձեռքբերմանը կամ այլ դատավարական գործողությունների կատարմանը:

Որպես խոչընդոտ կարելի է առանձնացնել նաև այն, որ քրեական դատավարության գործող օրենսգիրքը հնարավորություն չի տալիս քննիչին բողոքարկելու դատախազի որոշումը, եթե նա համաձայն չէ դրա հետ:

Կարծում ենք, որ առաջացած հիմնախնդրի լուծումը պետք է տեսնել քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության ենթատեքստում: Այսինքն՝ հիմնախնդրի լուծումը օրենսդրական անորոշության պայմաններում, կարծում ենք, պետք է տեսնել դատախազական հսկողության և դատական վերահսկողության մեխանիզմների շրջանակներում:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազի սահմանադրական գործառույթից բխում է, որ նա պարտավոր է արձագանքել մինչդատական վարույթի ընթացքում օրենքի ցանկացած խախտման և վերացնել այն խոչընդոտները, որոնք կարող են արգելք հանդիսանալ գործի հետագա քննությանը: Տվյալ դեպքում խոչընդոտը քննիչի կողմից նախաքննության ժամկետի երկարացման համար օրենքով սահմանված ժամկետի խախտումն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174 հոդվածում ժամկետներն անցնելուց հետո դատավարական գործողություններ կատարելու սահմանափակումը, կարծում ենք, ավելի շատ վերաբերում է գործով վարույթն իրականացնող մարմնին և ոչ թե հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող մարմիններին: Նման իրավիճակում տրամաբանական կլինեին դատախազի կողմից ժամկետի երկարացումը, դատավարական օրենքի էական խախտում թույլ տված անձին վարույթից հեռացնելը, իրավական պատասխանատվության ենթարկելը և միաժամանակ գործի հետագա ընթացքի վերաբերյալ ցուցումներ տալը:

Իհարկե, նշված խնդրի լուծումը պետք է տեսնել նաև դատական վերահսկողության շրջանակներում, որովհետև վարույթն իրականացնող մարմնի և դատախազի անգործությունը հանգեցնում է մեղադրյալի ու տուժողի իրավունքների և իրավաչափ շահերի խախտման: Յուրաքանչյուր մեղադրյալ ողջամիտ ժամկետներում արդար դատական քննության իրավունք ունի: Նշված իրավական անորոշությունը խոչըն-

դոտ է այդ իրավունքի իրացմանը: Այս տեսանկյունից կարող ենք փաստել, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 197 հոդվածը նաև սահմանադրականության խնդիր ունի: Մասնավորապես, նշված հոդվածում ուղղակի նախատեսված չէ նախաքննության ժամկետները երկարացնելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը տուժողի կամ մեղադրյալի կողմից բողոքարկելու հնարավորություն:

Մինևույն ժամանակ կարծում ենք, որ նշված խնդրի ցանկացած լուծում պետք է հիմնված լինի քրեական դատավարությունում առկա հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սկզբունքի վրա:

Բանալի բառեր – նախաքննություն, ժամկետներ, երկարացում, մեղադրյալ, դատախազ, քննիչ

SAMVEL DILBANDYAN – Некоторые замечания о правовом регулировании удлинения сроков предварительного следствия. – Статья посвящена порядку устранения процессуальных нарушений, допущенных на стадии предварительного расследования и препятствующих рассмотрению уголовного дела судом. Основное требование, предъявляемое к данной деятельности, – не ухудшить положение обвиняемого, а также соблюсти процессуальные сроки.

Ключевые слова: предварительное следствие, сроки, удлинение, обвиняемый, прокурор, следователь

SAMVEL DILBANDYAN – Some Considerations on the Problems of Legal Regulation of the Pre-Trial Investigation Terms Extension. – The article discusses the legal regulation of the procedural terms at the pre-trial investigation stage. The issues concerning the extension of the procedural terms, elimination of procedural violations hindering the trial have been highlighted in this article. The main requirement set refers to the protection of the rights and lawful interests of the participants of the proceedings during the extension of the procedural terms.

Key words: pre-trial investigation, procedural terms, extension, accused, prosecutor, investigator

**ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ
ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻՆ**

ՆԵՒԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ բոլոր հանցագործությունների քննության համար սահմանված է քննության միասնական կարգ, այսինքն՝ դատավարական ընդհանուր ձև և երաշխիքներ, որոնք ապահովում են ինչպես հանցագործությունների արդյունավետ քննությունը, այնպես էլ անձի իրավունքների պաշտպանությունը: Քրեական դատավարության խնդիրներից ելնելով՝ օրենքում նախատեսվում են նաև բացառություններ, որոնք պայմանավորված են ենթադրյալ հանցանք կատարած անձի հատկանիշներով: Վարույթի առանձին կարգ նախատեսելը նպատակ է հետապնդում ոչ թե սահմանափակելու օրենքով նախատեսված երաշխիքները, այլ ընդհակառակը՝ պահպանելով այդ երաշխիքները՝ օրենքում նախատեսելու պաշտպանության լրացուցիչ միջոցներ: Դատավարական հիմնական երաշխիքները՝ անմեղության կանխավարկածը, առաջադրված մեղադրանքի մասին տեղյակ պահելու իրավունքը, ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, ծնողների կամ խնամակալի մասնակցության իրավունքը, վկաների հետ առերեսման և նրանց խաչաձև հարցաքննության իրավունքը, վերադաս դատական ատյաններին բողոքարկելու իրավունքը պետք է երաշխավորված լինեն դատավարության ողջ ընթացքում: Օրենքով նախատեսված դեպքերում, այդ երաշխիքներից բացի, նախատեսվում են նաև այլ միջոցներ, որոնք երաշխավորում են անձի իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանությունը:

Անչափահասների տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ պաշտպանության այդպիսի միջոցներից է պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը: Այսինքն՝ քրեական դատավարությունում անչափահաս անձի համար ապահովվում է երկակի ներկայացուցչություն՝ մի կողմից պաշտպանի, իսկ մյուս կողմից՝ օրինական ներկայացուցչի: Նշված սուբյեկտները ոչ թե հակադրվում են միմյանց, այլ լրացնում, այսինքն՝ պաշտպանը ցույց է տալիս իրավաբանական օգնություն, իսկ օրինական ներկայացուցիչը՝ հոգեբանական և բարոյական: Պետք է համաձայնել Ե. Վ. Գորբաչովայի այն մտեցմանը, որ «ընդհանուր առմամբ անչափահասների գործով հանցագոր-

ծությունների քննության ժամանակակից տարբերակը արտացոլում է «դասական» քննության համընդհանուր առանձնահատկությունը՝ ապահովելու անչափահաս մեղադրյալի պարտադիր պաշտպանությունը և կրկնակի ներկայացվածությունը (պաշտպան և օրինական ներկայացուցիչ)»¹: Նման մասնակցությունը ապահովում է անչափահաս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պաշտոնատար անձանց անօրինական գործողություններից:

Ս. Վ. Տետյունը իրավագիտորեն նշում է. «Պաշտպանի գործունեությունը կարևոր տեղ է զբաղում անչափահասների պաշտպանության իրավունքի դատավարական երաշխիքների համակարգում, քանզի նրանց անձնային հոգեֆիզիկական առանձնահատկությունները հաճախ դատավարության ընթացքում առաջ են բերում պասիվ դիրքորոշում, անտարբեր վերաբերմունք սեփական շահերի պաշտպանության նկատմամբ, դրան հաճախ ավելանում են կեղծ ռոմանտիկան, չափահաս և անկախ երևալու ձգտումը, ինչը երբեմն ապակողմնորոշում է քննիչին և կարող է հանգեցնել դեռահասների օրինական շահերը ոտնահարող ոչ ճիշտ որոշումների»²:

Անչափահասների գործերով վարույթին պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը կարևորվել է միջազգային իրավական փաստաթղթերում: Այսպես, ՄԱԿ-ի Պեկինյան կանոնների 15.1 կետի համաձայն՝ «Դատավարության ամբողջ ընթացքում անչափահաս իրավունք ունի ներկայացվելու իր պաշտպանի կողմից կամ դիմելու իրավական անվճար օգնության, եթե այդպիսի օգնության տրամադրումը նախատեսված է տվյալ երկրի օրենսդրությամբ»: Նույն փաստաթղթի 15.2 կետի համաձայն՝ «Ծնողները կամ խնամակալը իրավունք ունեն մասնակցելու դատաքննությանը, և, անչափահասների շահերից ելնելով, իշխանության իրավասու մարմինը կարող է պահանջել նրանց մասնակցությունը: Սակայն իշխանության իրավասու մարմինը կարող է մերժել նրանց մասնակցությունը, եթե կան հիմքեր ենթադրելու, որ դա անհրաժեշտ է անչափահասի շահերի պաշտպանության համար»: Անկասկած, նշված անձանց մասնակցությունը պետք է դիտել որպես անչափահասին ընդհանուր հոգեբանական, զգացմունքային աջակցություն, որը պետք է իրականացվի քրեական վարույթի ողջ ընթացքում:

Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի որակյալ իրավաբանա-

¹ **Горбачёва Е. В.** Проблемы регулирования судопроизводства по делам несовершеннолетних в УПК РФ // Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания». М., 2004, с. 307.

² **Тетюев С. В.** Защитник – обязательный участник производства по уголовным делам в отношении несовершеннолетних // "Научные труды. Российская академия юридических наук". Выпуск 9. В 3 томах. Том 3, М., 2009, с. 1074.

կան օգնություն ստանալու իրավունքը հռչակված է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 2-րդ մասով. «Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք»: ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պաշտպանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ենթադրում է իրավաբանական օգնության լիարժեքություն:

Այս իրավունքը նախատեսված և երաշխավորված է նաև քրեական դատավարության օրենսդրությամբ: ՀՀ քր. դատ. օր.-ի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ 5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.... »:

Պաշտպանի պարտադիր մասնակցությունը քրեական վարույթին անչափահաս կասկածյալի, մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության երաշխիքն է: Նշված պահանջը երաշխավորում է նաև քննիչի և պաշտոնատար այլ անձանց կողմից անչափահասին բարձր որակավորմամբ պաշտպանի ծառայություններից հրաժարվելուն հարկադրելուց: Չէ՞ որ լիովին ակնհայտ է, որ հոգեպես դեռևս բավականաչափ չզարգացած անչափահասը թույլ է նաև կամային առումով, ինչը հնարավորություն է ստեղծում նրա վրա ազդեցություն գործելու, որից երբեմն կարող են օգտվել իրավապահայան մարմինների անբարեխիղճ ներկայացուցիչները՝ ի վնաս նրա իրավունքների և օրինական շահերի³:

Անչափահասին իրավաբանական օգնություն ցույց տալու պահը կարևոր է, որովհետև այդ պահից սկսած՝ անչափահաս կասկածյալը, մեղադրյալը կարող են օգտվել դրանից: Այսպես, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 69 հոդվածի 2-րդ մասի՝ «Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է համապատասխանաբար՝ կասկածյալին ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելու կամ մեղադրանք առաջադրելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված դեպքերում»:

ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 46 հոդվածի համաձայն՝ «Վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է անձի ձերբակալման կամ նրան մեղադրանք ներկայացնելու պահից, քանի դեռ մեղադրյալը օրենքով սահմանված դեպքերում և կարգով չի հրաժարվել պաշտպանից»: Ինչպես տեսնում ենք, Նախագծում տեղ

³ Տե՛ս Ս. Ա. Դիլբանդյան, Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, Եր., 2011, էջ 365:

գտած իրավական կարգավորումը կրում է ընդհանուր բնույթ և հիմք է տալիս նշելու, որ այն ապահովում է վարույթին պաշտպանի մասնակցության բոլոր հնարավոր դեպքերը:

Պաշտպանի մասնակցությունը անչափահասի վերաբերյալ գործերով պետք է համարել պարտադիր, և եթե մինչդատական վարույթի կամ դատական քննության ընթացքում չի ապահովվել պաշտպանի մասնակցությունը, ապա այն պետք է համարել քրեադատավարական օրենքի էական խախտում: Անչափահաս մեղադրյալի իրավունքների պաշտպանության համար կարևոր է Նախագծի 419 հոդվածում ամրագրված հետևյալ դրույթը. «Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է այդ անձի ձերբակալման կամ նրան մեղադրանք ներկայացնելու պահից»: Նշված կարգավորումը, բնականաբար, բացառում է առանց պաշտպանի անչափահասների գործերով վարույթի իրականացման հնարավորությունը և համապատասխանում է յուրվե՛նալ արդարադատության չափորոշիչներին:

Քրեադատավարական օրենսդրությամբ անչափահասների վերաբերյալ գործերով պաշտպանի պարտադիր մասնակցության նախատեսումը պայմանավորված է նրա տարիքային առանձնահատկությամբ, հոգեկան վիճակով, կյանքի փորձի և իրավաբանական գիտելիքների պակասով: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ մրցակցային դատավարության պայմաններում անչափահասի համար պաշտպանի պարտադիր մասնակցության նախատեսումն անհրաժեշտություն է:

Քրեադատավարական գործող օրենսդրությամբ մեղադրյալը իրավունք ունի ոչ միայն ունենալ պաշտպան, այլև հրաժարվել պաշտպանից և պաշտպանությունն իրականացնել ինքնուրույն: Քրեադատավարական գործող օրենսդրությունից բխում է, որ պաշտպանից հրաժարվել կարող է ոչ միայն չափահաս, այլև անչափահաս անձը: Պաշտպանից հրաժարվելու ընդհանուր դատավարական կարգը հետևյալն է. «Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները»: Պետք է նշել, որ այս հոդվածում տեղ գտած կարգա-

վորումն ուղղակի հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69 հոդվածի իմաստին, որում սահմանված են վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը: Կարծում ենք, որ «պարտադիր» ասելով պետք է հասկանալ այն, որ բոլոր դեպքերում վարույթն իրականացնող մարմինը պետք է ապահովի պաշտպանի մասնակցությունը՝ անկախ նրա ցանկությունից: Եթե նշված դեպքերում պաշտպանի մասնակցությունը թողնվում է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը, ապա այն դադարում է պարտադիր լինելուց:

Վերը նշվածն ուղղակի վերաբերում է նաև անչափահասների գործերով պաշտպանի մասնակցությանը: Այսինքն, եթե անչափահասը հրաժարվում է պաշտպանից, ապա նրա մասնակցության հարցը թողնված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Անչափահաս մեղադրյալների իրավունքների պաշտպանությունից ելնելով՝ անկասկած ցանկալի կլիներ, որ ընդհանրապես օրենքով բացառվեր նման հայեցողությունը, և պաշտպանի մասնակցությունը պարտադիր համարվեր բոլոր դեպքերում: Պաշտպանից հրաժարվելու շարժառիթները և կասկածյալի, մեղադրյալի կողմից իրենց իրավունքներն իրականացնելու իրական հնարավորությունն ուսումնասիրելիս ու գնահատելիս պետք է հիմք ընդունել այն հանգամանքը, որ անչափահասն ունի հատուկ պաշտպանության կարիք⁴:

Անչափահաս մեղադրյալի պաշտպանության իրավունքն էապես կխախտվի, եթե անչափահասը վարույթին մասնակցի առանց պաշտպանի: Պաշտպանից հրաժարվելու մասին անչափահասի հայտարարությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից չի կարող ընդունվել որևէ հիմքով: Բնարկե, անչափահասը և նրա օրինական ներկայացուցիչը պետք է իրավունք ունենան պաշտպանին փոխելու այն դեպքում, երբ՝

ա) նրանց կողմից հրավիրված կամ փաստաբանների պալատի կողմից նշանակված փաստաբանը պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չի տալիս իր պաշտպանյալին,

բ) եթե ինչ-որ պատճառներով անչափահասի և նրա պաշտպանի միջև չեն առաջանում փոխադարձ վստահության հարաբերություններ:

Այս հարցն իր լուծումն է ստացել Նախագծում, որտեղ բացառվում է պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքում վարույթն իրականացնող մարմնի հայեցողության հնարավորությունը, իսկ ինչ վերաբերում է անչափահասների վերաբերյալ վարույթին, ապա պաշտպանի մասնակցությունը պարտադիր է բոլոր դեպքերում (Նախագծի հոդված 419):

⁴ St' u Смирнов А. В., Калиновский К. Б. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. СПб., 2003, էջ 175:

Պաշտպանի մասնակցությունը վարույթին ապահովվում է ընդհանուր կարգով, այսինքն՝ հրավիրելու կամ նշանակելու եղանակով: Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ գործերով վարույթին պաշտպանի մասնակցությունը հիմնականում ապահովվում է օրինական ներկայացուցչի կամ անչափահասի մերձավոր ազգականների միջոցով: Սակայն, եթե անչափահասը չի ցանկանում, որ իր շահերը ներկայացնի օրինական ներկայացուցչի կողմից հրավիրված փաստաբանը, ապա նախապատվությունը պետք է տալ անչափահաս մեղադրյալին:

Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի համար պաշտպանի մասնակցությունն ապահովվում է յուրաքանչյուր դեպքում՝ անկախ այն բանից՝ նա պաշտպան ցանկանո՞ւմ է, թե՞ ոչ: Իհարկե, կասկածյալի կամ մեղադրյալի համար նշված իրավունքի իրականացումը, ըստ քրեական դատավարության գործող օրենսդրության, ապահովվում է ձեռքարկման, խափանման միջոց կիրառելու կամ մեղադրյալ ներգրավելու պահից: Սակայն քրեական դատավարության գործող օրենսդրությունից հստակ չի երևում, թե ինչ ենք հասկանում ձեռքարկման պահ ասելով, որովհետև ձեռքարկումը հավաքական հասկացություն է: Քանի որ անձը ձեռքարկված է համարվում նրան արձանագրությունը հանձնելու պահից, հետևաբար պաշտպան ունենալու իրավունքի մասին նա իրազեկվում է այդ պահից: Սա նշանակում է, որ մինչև արձանագրություն կազմելը պաշտպանը չի կարող ներկայացնել ենթադրյալ հանցանքը կատարած և ազատությունից զրկված անձի շահերը⁵:

Կարծում ենք, որ ողջունելի է Նախագծում ինչպես ձեռքարկման բնորոշման, այնպես էլ ձեռքարկվածի իրավունքների պարզաբանման պահի հստակեցումը: Մասնավորապես, ըստ Նախագծի 6 հոդվածի 44-րդ կետի՝ «ձեռքարկում՝ առանց դատարանի որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16 հոդվածով սահմանված անձի ազատության իրավունքի սահմանափակումը»: Ինչպես տեսնում ենք, Նախագծի հեղինակները ձեռքարկման բնորոշման հիմքում դնում են ոչ թե անձին ազատությունից զրկելու հետ կապված հաջորդական գործողությունների կատարումը, այլ անձին փաստացի ազա-

⁵ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած բացի անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 18-ի՝ Գագիկ Միքայելյանի վերաբերյալ կայացված որոշմամբ, որում մասնավորապես սահմանված է. «Բերվածի» կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ «բերվածը» պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով. ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6 հոդվածի 3/ա/ ենթակետից), բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից), գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից), դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22 հոդվածի 1-ին մասից) (տե՛ս «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումներ», Ժողովածու, 2010, 1-ին կիսամյակ, հ. 2, Եր., 2010, էջ 304):

տությունից զրկելը: Այսինքն, եթե անձը իրավասու մարմինների կողմից փաստացի զրկվել է ազատությունից, ապա դա նշանակում է, որ նա օգտվում է ձերբակալված անձի համար օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից, և կիրառվում են դրանց իրականացումն ապահովող երաշխիքները:

Նախագծի 110 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

1) փաստացի ազատությունից զրկվելու պահին բանավոր, իսկ հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահին նաև գրավոր տեղեկացվել սույն հոդվածով նախատեսված նվազագույն իրավունքների և պարտականությունների մասին,

2) իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառը,

3) պահպանել լռություն,

4) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին,

5) հրավիրել փաստաբան,

6) իր պահանջով ենթարկվել բժշկական զննման:

Նախագծի վերը նշված կարգավորումը ձերբակալված անձի իրավունքների պաշտպանության ապահովման իրական երաշխիք է: Նույնը չենք կարող ասել գործող օրենսդրության դեպքում, որովհետև կասկածյալին նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվում են ձերբակալման մասին արձանագրությունը կազմելուց հետո, իսկ մինչ այդ հնարավոր է, որ նրանից բացատրություններ վերցվեն, որոնք կարող են կրել նաև խոստովանական բնույթ: Նախագծում օրենսդրական այս բացը վերացված է, քանի որ այնտեղ հռչակված է, որ ձերբակալում իրականացնող իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է անձին արգելանքի վերցնելու պահին նրան տեղեկացնել երկու կարևոր իրավունքների մասին՝ ա) իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառները, բ) պահպանել լռություն⁶:

Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի պաշտպանի մասնակցությունը ապացուցման գործընթացին: Քրեական դատավարության ժողովրդավարական ու մրցակցային բնույթն այն է, թե դատավարության կողմերն ինչպիսի մասնակցություն են ունենում ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու գործընթացին: Հանրապետությունում շարունակվող դա-

⁶ Տե՛ս Ս. Ա. Դիրանդյան, Ձերբակալված անձի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության ապահովման երաշխիքները ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի, // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2014, էջ 167:

տախրավական բարեփոխման հիմնական խնդիրներից մեկը մինչդատական վարություն մրցակցության սկզբունքի կիրառումն է, որն ուղղակի ենթադրում է ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության ընդլայնում և որոշակիացում:

Անհրաժեշտ է նշել, որ մինչդատական վարություն մրցակցությունը սահմանափակ կիրառություն ունի, որովհետև հնարավոր չէ կողմերին օժտել հավասար իրավունքներով: Մա նշանակում է, եթե պաշտպանը չի մասնակցում ապացուցման գործընթացին, այսինքն՝ քրեական գործով ապացույցների հավաքմանը, ստուգմանը և գնահատմանը, ապա կասկածյալի և մեղադրյալի իրավունքների արդյունավետ պաշտպանության մասին դժվար է խոսել:

Ընդհանուր առմամբ, կասկածյալի, մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը մեծապես կախված է ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության աստիճանից:

Իհարկե, քրեական դատավարության գործող օրենսգիրքը, չնայած իր ժողովրդավարական բնույթին, ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության իրական հնարավորություն և երաշխիքներ չի նախատեսում: ՀՀ քր. դատ. օր.-ի 73 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված է, որ պաշտպանն իրավունք ունի քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողության, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը: Այս նորմում առկա «քրեական հետապնդման մարմնի առաջարկով», «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ», «մեղադրյալի պահանջով», «պաշտպանի միջնորդությունը» ձևակերպումներն ուղղակի անհամատեղելի են ժողովրդավարական կոչվելու հավակնություն ունեցող քրեական դատավարության օրենսգրքի համար և ավելի շատ հիշեցնում են ինկվիզիցիոն դատավարության ոճը⁷: Ի հաստատումն նշված կարծիքի՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2013 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1119 որոշմամբ նշված նորմի՝ «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ» և «եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը» ձևակերպումները արդեն ճանաչել է հակասահմանադրական: Սահմանադրական դա-

⁷ Տե՛ս **Գ. Մ. Ղազինյան**, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2001, էջ 258:

տարանն այս հիմնախնդրի առնչությամբ արտահայտել է իրավական այն դիրքորոշումը, որ պաշտպանը բոլոր դեպքերում պետք է իրավունք ունենա մասնակցելու պաշտպանյալի նկատմամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին՝ առանց որևէ միջնորդություն ներկայացնելու՝ անկախ այն բանից, թե այդպիսի մասնակցության վերաբերյալ առկա է կասկածյալի կամ մեղադրյալի պահանջը, թե ոչ⁸:

Ապացուցման սուբյեկտների բնորոշման և դասակարգման հարցերը միշտ էլ եղել են դատավարագետների ուշադրության կենտրոնում, և այդ կապակցությամբ չկա միասնական մոտեցում: Չանդրահառնալով այս հարցի վերաբերյալ դատավարական գրականության մեջ առկա կարծիքներին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ առավել տարածված է այն մոտեցումը, որ ապացուցման սուբյեկտների մեջ մտնում են քրեադատավարական հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտները, թեպետ նրանցից յուրաքանչյուրն այդ գործընթացում խաղացած տեղով ու դերով էապես տարբերվում է⁹: Պաշտպանը դասվում է ապացուցման այն սուբյեկտների թվին, որոնք ողջ դատավարության ընթացքում իրականացնում են ոչ թե սեփական, այլ մեկ ուրիշ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այսինքն՝ ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցությունը կրում է ակտիվ և շարունակական բնույթ:

Դատավարական գրականության մեջ պաշտպանը որպես դատավարության սուբյեկտ առանձնանում է հետևյալ հատկանիշներով.

1) պաշտպանն ապացուցմանը մասնակցում է նախօրոք նախանշված, որոշակի կոնկրետ դիրքորոշմամբ. այսինքն՝ ապացուցման ընթացքում նա իրականացնում է միայն պաշտպանական գործառույթ, որի էությունը կասկածյալին, մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների վերհանումն ու հետազոտումն է,

2) պաշտպանը գործի հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության և դատավարական կոնկրետ փուլում ապացուցման խնդիրներն իրականացնելու համար հիմնական և անմիջական պատասխանատվություն չի կրում, թեև նրա դատավարական գործունեությունը նպաստում է դրան,

3) պաշտպանն ապացուցման գործընթացում այլ սուբյեկտների նկատմամբ դատավարական սանկցիաներ կամ հարկադրանքի այլ միջոցներ կիրառել չի կարող, քանի որ օժտված չէ պետախիշխանական

⁸ Տե՛ս «ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թվականի հոտեմբերի 8-ի թիվ 1119 որոշումը»:

⁹ Տե՛ս **Мотовиловкер Я. О.** Основной вопрос уголовного дела и его компоненты. Воронеж, 1984, էջ 7:

լիազորություններով և իրավունք չունի իրականացնելու իրավակիրառ գործունեություն,

4) պաշտպանն ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու պարտականություն կրող սուբյեկտ չի համարվում¹⁰:

Քրեական գործերով ապացուցմանը պաշտպանի մասնակցությունը երաշխավորում է կասկածյալի, մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Պաշտպանը, նախնական քննության փուլում մասնակցելով ապացուցմանը, նպաստում է ապացույցների հավաքմանը, դրանց բազմակողմանի ստուգմանը և ճիշտ գնահատմանը¹¹:

Պաշտպանը և դատավարության մյուս մասնակիցներն իրավունք ունեն իրենց իրավասության սահմաններում մասնակցելու գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալների հավաքմանը, ստուգմանը և գնահատմանը: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 73 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի քրեական գործով ձեռք բերելու նյութեր, դրանք ներկայացնելու՝ քրեական գործին կցելու և հետազոտելու համար: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը ձեռնպահ է մնում «ապացույց» հասկացությունն օգտագործելուց՝ դրանով որոշակի տարբերություն դնելով վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերվածի, որը համարվում է ապացույց, և փաստաբանի ձեռք բերածի միջև, որը համարվում է նյութ: Ապացույց ձեռք բերելու փաստաբանի իրավունքն ամրագրված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (14.12.2004 թ.) 18 հոդվածի 2-րդ կետում, որում, ի տարբերություն գործող օրենսգրքի, սահմանված է, որ փաստաբանն իրավունք ունի՝ (...) 2) օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու և ներկայացնելու վստահորդի շահերից բխող ապացույցներ (...): Ինչպես տեսնում ենք, նշված նորմը վերաբերում է նույն իրավահարաբերության կարգավորմանը, ուստի կարծում ենք, որ փաստաբանները, հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումը, կարող են ձեռք բերված տվյալները ներկայացնել ոչ թե որպես նյութեր, այլ ապացույցներ, քանի որ անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից այն ավելի բարենպաստ է:

Այս տեսանկյունից ողջունելի է ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության իրավական կարգավորումը Նախագծում: Այսպես, Նախագծի 49 հոդվածի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի (...)

3) մասնակցելու իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած ապացուցողական կամ այլ վարույթային գործողության,

¹⁰ Տե՛ս «Теория доказательств в советском уголовном процессе». М., 1973, էջ 498:

¹¹ Տե՛ս **Հ. Հ. Ղուկասյան**, Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Եր., 2001, էջ 107:

մասնակցելու իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող ապացուցողական կամ այլ վարույթային գործողությանը, այլ դեպքերում քննիչի առաջարկով մասնակցելու ապացուցողական կամ այլ վարույթային գործողությանը.

4) մեղադրյալին պարզաբանելու իր իրավունքները և ապացուցողական կամ այլ վարույթային գործողություն իրականացնող անձի ուշադրությունը հրավիրելու նրա կողմից թույլ տրված օրենքի խախտման վրա,

5) ձեռք բերելու և ներկայացնելու ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետագոտելու համար,

6) համաձայնության դեպքում հարցման ենթարկելու ֆիզիկական անձանց,

7) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից պահանջելու և ստանալու փաստաթղթեր կամ տեղեկություններ, եթե դրանք չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք,

8) մեղադրյալի պաշտպանության իրականացման հետ կապված հատուկ գիտելիքներ պահանջող հարցերով ստանալու փորձագետի կարծիք (...):

Վերը նշվածն անկասկած էապես տարբերվում է գործող օրենսգրքի կարգավորումից, որովհետև պաշտպանին հնարավորություն է տալիս ավելի իրատեսական օգնություն ցուցաբերելու իր պաշտպանյալին: Մասնավորապես ուշագրավ է այն դրույթի նախատեսումը, որ պաշտպանը, մասնակցելով քրեական գործով վարույթին, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու ապացույցներ և ներկայացնելու վարույթն իրականացնող մարմնին՝ վարույթի նյութերին կցելու համար:

Ապացուցման գործընթացին անչափահաս մեղադրյալի պաշտպանի մասնակցությունը խիստ կարևոր է, որովհետև տարիքային առանձնահատկությունից ելնելով՝ դժվար թե նա կարողանա մասնակցել ապացուցման գործընթացին: Մինչդեռ պաշտպանը, պետական մարմիններից, կազմակերպություններից փաստաթղթեր կամ տեղեկություններ պահանջելով կամ անձանց հարցման ենթարկելով, կարող է ձեռք բերել այնպիսի ապացույցներ, որոնք կարևոր նշանակություն կարող են ունենալ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս կամ նրա նկատմամբ դաստիարակչական բնույթի միջոցներ կիրառելիս: Պաշտպանի մասնակցությունը ապահովում է յուրվե՛նալ արդարադատության խնդիրների իրականացումը, այսինքն՝ ենթադրյալ հանցանք կատարած անձին ոչ թե պատժելու, այլ նրան դաստիարակելու, հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար: Պաշտպանը վարույթն իրականացնող մարմնի, մասնավորապես դատարանի ու-

շաղրությունը պետք է հրավիրի այն հանգամանքի վրա, որ անչափահասների դեպքում արդարադատության համակարգն ուղղված է առաջին հերթին անչափահասի բարեկեցության ապահովմանը, որպեսզի ենթադրյալ հանցանք կատարած անչափահասի վրա ազդող ցանկացած միջոց համաչափ լինի ինչպես նրա անձնային առանձնահատկություններին, այնպես էլ հանցագործության ծանրության աստիճանին: Քրեական վարույթի ողջ ընթացքում այս խնդիրը պետք է լինի պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Պաշտպանը, մասնակցելով ապացուցման գործընթացին, պարտավոր է, անչափահասի շահերից ելնելով, ներկայացնել համապատասխան միջնորդություններ՝ ուղղված այնպիսի դատավարական գործողությունների կատարմանը, որոնք կարող են նպաստել անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը չի կատարում այն քննչական գործողությունները, որոնք անհրաժեշտ են անչափահասի գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքները պարզելու համար:

Բոլոր դեպքերում այսօր նման միջնորդությունների հարուցումը կարևոր է, որովհետև գործող քրեադատավարական օրենսդրությամբ (նաև՝ Նախագծով) պաշտպանն իրավունք ունի մասնակցելու իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող քննչական գործողություններին: Պաշտպանի մասնակցությունը քննչական գործողությունների կատարմանը ինքնին ենթադրում է մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի շրջանակի ընդլայնում: Բնարկե, վարույթն իրականացնող մարմինը պետք է պաշտպանին կամ նրա պաշտպանյալին ժամանակին տեղեկացնի նրանց միջնորդությամբ կատարվող քննչական գործողության մասին:

Պաշտպանի մասնակցության առնչությամբ ուշադրության է արժանի նաև անչափահասների գործերով պաշտպանի մասնագիտացման խնդիրը: Պեկինյան կանոնների կարևոր պահանջներից է անչափահասների գործերով մասնագիտացված մարմին ունենալը: Կարծում ենք, որ այս պահանջը հավասարապես վերաբերում է նաև փաստաբաններին: Մեր կարծիքով, փաստաբանները, բացի որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալուց, պետք է գիտելիքներ ունենան մանկավարժության և հոգեբանության ոլորտներից, որպեսզի կարողանան իրենց վստահորդների հետ գալ փոխադարձ համաձայնության և ընտրել պաշտպանական ճիշտ մարտավարություն: Այո՛, հարցը կարևոր է նաև հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանների համար, որովհետև անչափահասների գործերով պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ այդպիսի մասնակցություն հիմնականում

ապահովում է փաստաբանների պալատը¹²:

Անչափահաս մեղադրյալի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության ընդհանուր մարտավարություն ընտրելիս իրականում ծագում են որոշ բարդություններ: Պաշտպանի համար բավականին դժվար է պաշտպանել այն անչափահասի իրավունքները և օրինական շահերը, որի հետ փոխադարձ վստահություն չի ձևավորվել: Կոլիզիան բավականին խնդիրներ է առաջացնում արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար:

Պետք է նշել, որ միասնական պաշտպանության մարտավարություն ընտրելու դեպքում որոշ տարածայնություններ կարող են առաջանալ անչափահասի և նրա օրինական ներկայացուցչի միջև: Նման դեպքերում պաշտպանի համար առաջանում է բարդ իրավիճակ՝ համաձայնել անչափահաս մեղադրյալի¹³, թե՞ նրա օրինական ներկայացուցչի հետ, թե՞ ընտրել և պաշտպանել իր տեսակետը, որը, իր կարծիքով, ավելի գերադասելի է վստահորդի համար: Չպետք է մոռանալ, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 73 հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Նախագծի 49 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն», սակայն կարող է պատահել այնպես, որ ընտրված և պաշտպանին առաջարկված դիրքորոշումը գործի ի վնաս իր պաշտպանյալի: Իհարկե, պաշտպանի դիրքորոշման իրավական հիմքերը ամրագրված են քրեադատավարական օրենսդրությամբ: Քրեական գործով պաշտպանի դիրքորոշումը չի կարող հակասել վերը նշված նորմի պահանջներին: Արդարացի է Հ. Ղուկասյանի այն մոտեցումը, որ պաշտպանն իր դատավարական գործունեությամբ կապված է մեղադրյալի հետ և պարտավոր է նրա հետ համաձայնեցնել իր դիրքորոշումը, սակայն միայն այն պարտականությունների կատարման կապակցությամբ, որոնք նրա վրա դրված են օրենքով¹³:

Նշված իրավիճակում պաշտպանը կարող է արդյոք պաշտպանության ուրիշ մարտավարություն ընտրել, որը տարբերվի անչափա-

¹² Անչափահաս կասկածյալներին և մեղադրյալներին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալուց բացի՝ կարևոր է նաև փաստաբան-պաշտպանի՝ անչափահասների գործով մասնագիտացված լինելու հանգամանքը: Այս կապակցությամբ ուշագրավ է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Անկախ Պետությունների Համագործակցության տարածաշրջանային գրասենյակի խնդրանքով կազմված գեկույցում տեղ գտած այն գնահատականը, որ մեղադրյալ երեխաների վերաբերյալ (կամ անչափահասների մասնակցությամբ) գործերով մասնագիտացած հանրային պաշտպաններ չկան: Հանրային պաշտպանի գրասենյակի անձնակազմը երեխայի զարգացման, երեխայի հոգեբանության, երեխաներին հարցաքննելու և երեխայի իրավունքների վերաբերյալ վերապատրաստումներ չի անցնում: Տուժող կամ վկա երեխաների շահերի ներկայացումը Հանրային պաշտպանի լիազորությունների շրջանակից դուրս է (տե՛ս «Հայաստանում անչափահասների գործերով արդարադատության ոլորտի բարեփոխման ձեռքբերումների գնահատում», Եր., 2010, էջ 42):

¹³ Տե՛ս Հ. Հ. Ղուկասյան, նշվ. աշխ., էջ 26:

հաս պաշտպանյալի կամ նրա օրինական ներկայացուցչի առաջարկածից: Այս հարցի կապակցությամբ համամիտ ենք Ս. Դիլբանդյանի այն դիրքորոշմանը, որ «...այո՛, փաստաբան-պաշտպանը կարող է այլ դիրքորոշում ունենալ, քան պաշտպանյալն ու նրա օրինական ներկայացուցիչը, եթե կարծում է, որ նրանց դիրքորոշումը սխալ է և տանում է իր պաշտպանյալի վիճակի վատթարացման: Սակայն նա պարտադիր պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի դրանում համոզի իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին»¹⁴:

Պաշտպանական մարտավարություն ընտրելիս բոլոր դեպքերում պաշտպանը պետք է համաձայնեցնի իր դիրքորոշումը պաշտպանյալի՝ անչափահաս մեղադրյալի և նրա օրինական ներկայացուցչի դիրքորոշման հետ, որպեսզի պաշտպանությունն իրականացվի արդյունավետ: Փաստաբանը պարտավոր է տեղեկացնել իր անչափահաս պաշտպանյալին և նրա օրինական ներկայացուցչին նրանց որդեգրած դիրքորոշման բոլոր հնարավոր բացասական հետևանքների մասին և միջոցներ ձեռնարկել, որպեսզի նրանք վերանայեն այդ դիրքորոշումը՝ փոխարինելով այն իրենց ավելի ձեռնտու տարբերակով: Եթե դա չի հաջողվում, ապա նա իրավունք ունի իրավիճակից ելնելով կա՛մ համաձայնել իր պաշտպանյալի դիրքորոշման հետ՝ ենթարկվելով նրա կամքին և համարելով դա նրա շահերին չհակասող, կա՛մ առաջ տանել սեփական դիրքորոշումը, որը կհամապատասխանի անչափահաս մեղադրյալի շահերին:

Բանալի բառեր – *անչափահաս, քրեական վարույթ, պաշտպան, ապացուցման գործընթաց, պաշտպանի մասնագիտացում, պաշտպանական տակտիկա*

НЕЛЛИ АГАБАБЯН – Участие защитника в производстве по делам несовершеннолетних. – Исходя из возрастных особенностей обвиняемого, средством защиты как таковой является участие в производстве по делу защитника или законного представителя. Иными словами, в уголовном судопроизводстве несовершеннолетнему даётся двойное представительство. В статье рассмотрены основные вопросы, затрагивающие участие защитника в производстве по уголовному делу, в процессе представления доказательств, а также специализацию защитников и тактику защиты.

Ключевые слова: *несовершеннолетний, уголовное производство, защитник, процесс представления доказательств, специализация защитника, тактика защиты*

NELLY AGHABABYAN – Barrister's Participation in Proceedings on Crimes Incriminated to Juveniles. – Based on the age peculiarities of the juveniles, the participation of the barrister and the legal representative in proceedings on crimes incriminated

¹⁴ Ս. Ա. Դիլբանդյան, Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, էջ 360:

to juveniles is, per se, the main means of defence. That is to say, the juveniles are provided by double representation during the criminal proceedings: by a barrister, on one side, and by a legal representative, on the other side. Main issues in regard to the participation of the barrister in criminal proceedings, in the process of presenting evidence, as well as the specialization of barristers and the tactics of defence are discussed in the article presented.

Key words: *juvenile, criminal proceedings, barrister, process of presenting evidence, barrister's specialization, tactics of defence*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՆԶԻՈՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐ (համեմատական զուգահեռներ Հոմ 1-ի ստանդարտների հետ)

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ

Ներկայումս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության ոլորտում կատարվում են բարեփոխումներ: Ցիվիլիստական բարեփոխումներից այս անգամ անմասն չմնաց նաև Հայաստանի Հանրապետության կոլիզիոն իրավունքը, իսկ ավելի կոնկրետ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժինը՝ «Միջազգային մասնավոր իրավունք» վերտառությամբ¹:

Վերջինս կոչված է սպասարկելու օտարերկրյա տարրով ծանրաբեռնված քաղաքացիական հարաբերությունների իրավական կարգավորումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելուց առայսօր որևէ փոփոխության կամ լրացման չի ենթարկվել: Ինչպես նշվել է Միջազգային իրավունքի բարեփոխման հայեցակարգում, դա ոչ թե պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժնի կատարելությամբ, այլ առավելապես այս ոլորտի նկատմամբ անուշադրությամբ, իրավակիրառման ընթացքում ծագող բարդություններով, իրավակիրառողների մասնագիտական իրազեկության ցածր աստիճանով: Սակայն այս հանգամանքների կողքին հայեցակարգի հեղինակները նշում են նաև օրենսդրության անկատարությունը, դրանում անորոշ կարգավորումների առկայությունը, իսկ երբեմն էլ՝ որոշ հարցերի չկարգավորվածությունը: Վերջին հանգամանքն ինքնին չի արդարացնում կոլիզիոն նորմերի նկատմամբ իրավակիրառ իներտությունը, սակայն կարող է նպաստել կոլիզիոն կարգավորումներից խուսափելուն:

Կասկածից վեր է, որ կոլիզիոն նորմերի կիրառմամբ՝ օտարերկրյա տարրով ծանրաբեռնված հարաբերությունների նկատմամբ համապատասխան իրավակարգի ընտրությունը ոչ միայն կհավաստի միջազգային հանրության հետ ինտեգրվելու ուղղությամբ մեր ձգտումների մասին, այլև նոր հեռանկարներ կբացի հայրենական օրենսդրության հետագա կատարելագործման համար, քանի որ ընտրելով օտարերկրյա օրենքը և դրա հիման վրա կարգավորելով մասնավոր հարաբերություններ՝ իրավակիրառն իրավական կարգավորման օտարերկրյա առաջավոր փորձը կփոխանցի հայրենական օրենսդրին՝ ազգային օրենս-

¹ Տե՛ս <http://moj.am/legal/view/article/717>

դրությունը զարգացնելու և օտարերկրյա ու միջազգային զարգացումներին մշտապես իրազեկ լինելու համար:

ՀՀ կոլիզիոն իրավունքը զարգացնելու երկու հիմնական հանգամանքներ են անհրաժեշտ, որոնք ոչ թե միմյանց հակասում կամ բացառում են՝ այլ, ընդհակառակը, համադրվում ու լրացնում են: Այդ հանգամանքներն են մի կողմից՝ ազգային իրողությունները, իրավակիրառ առանձնահատկություններն ու ազգային մենթալիտետը, մյուս կողմից՝ օտարերկրյա ու միջազգային զարգացումները, ժամանակակից հանրության գլոբալիզացիոն մենթալիտետը: Դրանք եղել են կոլիզիոն իրավունքի պատմական զարգացման մշտուղեկիցները՝ վկայելով կոլիզիոն իրավունքի պարտիկուլյարիզմի և ունիվերսալիզմի մասին:

ՀՀ կոլիզիոն իրավունքի զարգացման համար միշտ էլ ուղեցույց են եղել միջազգային-իրավական ձևաչափով ընդունված աղբյուրները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ բաժնում առկա իրավակարգավորումների համար լավագույն աղբյուր է եղել ԱՊՀ քաղաքացիական նմուշային օրենսգիրքը: Բայց անցել են տարիներ, ձևավորվել են համարժեք իրավակարգավորումներ, որոնք իրենց արտացոլումն են ստացել միջազգային իրավական «նոր սերնդի» աղբյուրներում, որպիսիք էլ կարող են լավագույն ուղեցույց լինել ՀՀ կոլիզիոն իրավունքը զարգացնելու համար՝ իհարկե, դրանցում նշված մեխանիզմները խստագույնս անցկացնելով պարտիկուլյար (ներպետական, ազգային) իրողությունների պրիզմայով: Կոլիզիոն իրավունքի բնագավառում հիշատակված «նոր սերնդի» աղբյուրներից է 2008 թ. հունիսի 17-ին Եվրոպական պառլամենտի և խորհրդի ընդունած № 593/2008 կանոնակարգը (Եվրամիության կանոնակարգ) պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին, որը եկավ փոխարինելու պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին 1980 թ. Հռոմի կոնվենցիային, որը իրավակիրառ պրակտիկայում անվանվում է «Հռոմ 1 կանոնակարգ» (այսուհետ՝ Հռոմ 1)²:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միջազգային մասնավոր իրավունքի բարեփոխման հրապարակված հայեցակարգում բարձրացված են ՀՀ կոլիզիոն իրավունքի հիմնախնդիրները³, փորձենք դրանց անդրադառնալ Հռոմ 1-ի լույսի ներքո, ինչը հնարավորություն կտա կատարելու հայրենական օրենսդրության լրացմանն ուղղված որոշ առաջարկություններ:

Հենց սկզբից նշենք, որ թեև Հռոմ 1-ը վերաբերում է պայմանագրային պարտավորությունների կոլիզիոն կարգավորմանը, որն իր ուղղ-

² «Հռոմ 1» պայմանական անվանումը յուրօրինակ համադրություն է «Հռոմ 2»-ի, որը 2007 թ. հուլիսի 11-ին Եվրամիության ընդունած № 864/2007 Կանոնակարգն է արտապայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին: Այս երկու աղբյուրները լինելով ժամանակակից կոլիզիոն հանգուցալուծումներ առաջարկող շտեմարաններ, ամբողջացնում են պարտավորությունների նկատմամբ կիրառվող կոլիզիոն մեխանիզմները:

³ Տե՛ս <http://moj.am/legal/view/article/717>

վածությամբ ընդամենը մեկ ոլորտ է ներկայացնում և թվում է, թե այն կարող է օգտակար լինել ՀՀ կոլիզիոն իրավունքում միայն պայմանագրային հարաբերությունների կոլիզիոն կարգավորման կատարելագործման հարցում, սակայն իր խնդիրներից ելնելով՝ Հռոմ 1-ը նախատեսում է նաև կոլիզիոն կարգավորման ընդհանուր ուղղվածության ինստիտուտներ (իմպերատիվ նորմեր, հետադարձ հղման բացառում, դատարանի գտնվելու վայրի հանրային կարգ, բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետության իրավունքի կիրառում, գտնվելու կամ բնակվելու վայր), որոնք արտահայտում են վերջին ժամանակների կոլիզիոն կարգավորման լավագույն փորձը և կարող են թարմ շունչ հաղորդել ՀՀ կոլիզիոն իրավունքի համապատասխան ինստիտուտների զարգացմանը: Մտացվում է, որ Հռոմ 1-ը ոչ այնքան միակողմանի, որքան բազմակողմանի կոլիզիոն վերլուծությունների հնարավորություններ է ընձեռում:

Մույն հոդվածի քննարկման առարկա են կոլիզիոն իրավական ընդհանուր ինստիտուտները Հռոմ 1-ի և ՀՀ կոլիզիոն նորմերի համադրության մակարդակում: Հռոմ 1-ի 22 հոդվածում նախատեսված է բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետության իրավունքի կիրառման ինստիտուտը, որը ձևակերպված է հետևյալ կերպ.

«1. Երբ պետությունը ներառում է մի քանի տարածքային միավորներ, որոնցից յուրաքանչյուրը պայմանագրային պարտավորությունների ոլորտում ունի իր սեփական իրավանորմերի համակարգը, ապա սույն Գանձակարգի կիրառման նպատակներից ելնելով՝ յուրաքանչյուր նման տարածքային միավոր դիտվում է որպես առանձին պետություն»:

2. Պայմանագրային պարտավորությունների ոլորտում սեփական իրավանորմերի համակարգ ունեցող՝ տարածքային տարբեր միավորներ ներառող անդամ պետությունը պարտավոր չէ կիրառել սույն Գանձակարգն այն իրավական բախումների նկատմամբ, որոնք բացառապես կապված են տարածքային միավորների օրենքներին»:

Բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետության իրավունքի կիրառման ինստիտուտին նվիրված՝ ՀՀ քաղ. օր. 1256 հոդվածում սահմանվում է. «Սյն դեպքերում, երբ կիրառվելու է այն պետության իրավունքը, որում գործում են մեկից ավելի իրավական համակարգեր, և անհնար է որոշել կիրառվելիք իրավական համակարգը, կիրառվում է այն իրավական համակարգը, որի հետ տվյալ հարաբերությունն առավել սերտ է կապված»:

ՀՀ օրենսդրության իրավական կարգավորման բացն առավել քան նկատելի է. մեր իրավակարգավորման պարագայում շեշտը դրվում է առավել սերտ կապի վայրի օրենքի սկզբունքի՝ Lex causae-ի վրա: Ընդ որում՝ Lex causae սկզբունքը կիրառվում է միայն այն բանից հետո, երբ «անհնար է որոշել կիրառվելիք իրավական համակարգը»: ՀՀ քաղ. օր.

1256 հողվածից մեջ բերված այս ձևակերպումը, իրավական անորոշությունից բացի, որևէ այլ հարցի լուծմանը չի ծառայում: Այս արտահայտության իմաստի որոնման ճանապարհին, ուսումնասիրելով առանձին պետությունների օրենսդրությունը՝ հասկանում ենք, թե որտեղից կարող էր գալ օրենսդրի այս «թերի» արտահայտությունը: Այսպես, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1188 հոդվածում սահմանվում է. «*Եթե կոլիզիոն նորմերով ընտրված պետությունում գործում են մի քանի իրավական համակարգեր, ապա այդ երկրի օրենսդրությամբ նախատեսված կանոններով էլ պետք է որոշվի, թե որ իրավական համակարգը պետք է ընտրվի: Նման կանոնների բացակայության դեպքում ընտրվում է այն իրավական համակարգը, որն առավել սերտ է կապված համապատասխան իրավահարաբերության հետ*»: Առանձին երկրներում ձևակերպումներն այլ են, սակայն մոտեցումները նույնական են⁴. Լեհաստանի միջազգային մասնավոր իրավունքի մասին 1965 թ. օրենքի 5 հոդվածում նշվում է. «*Եթե կոլիզիոն նորմերով ընտրված պետությունում գործում են մի քանի իրավական համակարգեր, ապա այդ երկրի օրենքով էլ պետք է որոշվի, թե որ իրավական համակարգը պետք է ընտրվի*»⁵:

Ասվածի լույսի ներքո՝ ՀՀ քաղ. օր. 1256 հոդվածը կարիք ունի վերաշարադրման: Մեր կարծիքով, առաջադրված տարբերակներից առավել պարզ է հենց Հոմ 1-ի մոտեցումը, երբ բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետության պարագայում, կոլիզիոն կարգավորման խնդիրներից ելնելով, տարածքային միավորները դիտվում են որպես առանձին պետություններ:

Հոմ 1-ն ուշագրավ նորարարություն է նախատեսում իմպերատիվ նորմերի ինստիտուտի առնչությամբ, որը բավականին ծանրակշիռ որոշակիություն է հաղորդում այս ինստիտուտի անորոշություններին: Մինչ Հոմ 1-ի մոտեցմանն անդրադառնալը, նախ ներկայացնենք ՀՀ օրենսդրական մոտեցումն իմպերատիվ նորմերի կապակցությամբ:

ՀՀ քաղ. օր. 1259 հոդվածում ամրագրված է հետևյալ դրույթը. «*Սույն բաժնի կանոնները չեն վերաբերում Հայաստանի Հանրապետության իրավունքի այն իմպերատիվ նորմերի գործողությանը, որոնք քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքները և շահերն ապահովելու իրենց առանձնահատուկ նշանակությամբ բացառում են որևէ այլ իրավունք կիրառելու հնարավորությունը*»⁶:

⁴ Տե՛ս **Ա. Հայկյանց**, Միջազգային մասնավոր իրավունք. Դասագիրք, Եր., 2013, էջ 138:

⁵ Ի դեպ, հենց նույնպիսի լուծում էր առաջարկվում նաև ԱՊՀ նմուշային քաղաքացիական օրենսգրքի 1202 հոդվածում:

⁶ Իմպերատիվ նորմերի ինստիտուտը բացարձակ նոր երևույթ չէ հայ իրավունքում: Նման ինստիտուտ նախատեսվել է հայ իրավունքի հուշարձաններում: Այսպես, Աստրախանի Հայոց Դատաստանագրքի «Է» գլխի 5-րդ հոդվածում նշվում էր իմպերատիվ նորմի դասական օրինակ, որը նույնկերպ սահմանվում է նաև Ժամանակակից կոդիֆիկացիաներում. «Եթե ինչ-որ մեկն օտար երկրում սանադ գրած լինի, որում տոկոսն ավելին լինի, քան ամիսը հարյուրին կես տոկոս, հաստատուն պետք է համարվի մինչև

Իմպերատիվ նորմերի ինստիտուտը խոցելի է, որը ամենից առաջ պայմանավորված է այդ նորմերի անչափ լայն շրջանակով: Այս պարագայում ստվերում է հայտնվում կոլիզիոն նորմերի կարգավորիչ գործառույթը, քանի որ կոլիզիոն նորմերը փորձում են փնտրել-գտնել արդյունավետ իրավական համակարգեր, մինչդեռ իմպերատիվ նորմերի անչափ լայն շրջանակը հարաբերությունները միակողմանիորեն մղում է ազգային-իրավական կարգավորում: Այս պարագայում խախտվում է միջազգային մասնավոր իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ իրավունքի և հարաբերության կապի սկզբունքը. **«Հարաբերությունը պետք է կարգավորվի այն իրավունքով, որի հետ առավել սերտ է կապված»:** Ստացվում է, որ իմպերատիվ նորմերը որոշակի «սեպ» են խրում իրավունքի և հարաբերության սերտ կապվածության միջև: Այս մտահոգությունը մասնագիտական շրջանակներին միշտ ստիպել է մտածել խնդրի շուրջ և առաջարկել նոր չափանիշներ՝ նեղացնելու իմպերատիվ նորմերի շրջանակը: Սա արտակարգ բարդ խնդիր է. մասնագիտական գրականության մեջ նման փորձերը նույնիսկ որակվում են որպես միամիտ գործողություններ⁷: Այնուամենայնիվ, որո՞նք են այդ իմպերատիվ նորմերը, ինչպե՞ս տարբերել այդպիսիք մյուս նորմերից: Նման տարանջատման հատուկ չափանիշներ քաղաքացիական իրավունքի գիտության մեջ դեռ չկան, դրանք դեռևս սուբյեկտիվ գնահատման տիրույթում են, ինտուիտիվ դաշտում: Ինչպես երբեմն հանդիպում ենք իրավական գրականության մեջ⁸, դրանք այն նորմերն են, որոնք ուղեկցվում են ուղղակի արգելք նախատեսող արտահայտություններով, օրինակ՝ **«առոչինչ է», «հանգեցնում է անվավերության», «չի կարող փոփոխվել կողմերի համաձայնությամբ», «անկախ կողմերի կայացրած համաձայնությունից»** և այլն (դրանք, իհարկե, մոտավոր, այլ ոչ թե հիմնական չափորոշիչներ են):

Բայց պետք է ասել, որ իմպերատիվ նորմերը որպես այդպիսիք կարող են ճանաչվել նաև առանց վերոնշյալ կատեգորիկ արտահայտությունների: Փորձենք հասկանալ, թե ինչպես են ընկալվում իմպերատիվ նորմերը ՀՀ օրենսդրությամբ: Դրանց շրջանակի տարանջատման խնդրի վրա բավականաչափ լույս են սփռում ՀՀ քաղ. օր. 438 հոդվածի 2-րդ կետում և 437 հոդվածի 5-րդ կետում ամրագրված դրույթները, որոնք համապատասխանաբար հետևյալն են.

«- Պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի

ռուսների երկիր մտնելը, իսկ ռուսների երկիր մտնելուց հետո, թեև սանադը իր ուժը չի կորցնի, սակայն տոկոսը չի կարող ընդունվել այնպես, ինչպես գրված է, այլ ամիսը հարյուրին կես տոկոս և ոչ ավելի» (Ռ. Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան (մ. թ. ա. IX դ. – մ. թ. XIX դ.), հ. 2., Եր., 2002, էջ 261):

⁷ Տե՛ս **Толстых В. Л.** Коллизионное регулирование в международном частном праве. М., 2002, էջ 112:

⁸ Տե՛ս **Ермолаев В. Г., Сиваков О. В.** Международное частное право. Курс лекций. М., 1999, էջ 89:

համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին)»:

«- Այն դեպքերում, երբ պայմանագրի պայմանը նախատեսված է նորմով, որը կիրառվում է, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ (դիսպոզիտիվ նորմ), կողմերը կարող են իրենց համաձայնությամբ բացառել այդ նորմի կիրառումը կամ սահմանել դրանում նախատեսվածից այլ պայման»:

Ստացվում է, որ երբ քաղաքացիաիրավական նորմը կողմին (կողմերին) հնարավորություն չի տալիս իր (իրենց) կամքով ընտրելու այլ վարքագիծ, ապա այդ նորմն իմպերատիվ է: Այդ պարագայում ստացվում է, որ քաղաքացիական օրենսդրության նորմերի ճնշող մասը իմպերատիվ է, և երբ կոլիզիոն նորմերով ընտրվում է օտարերկրյա իրավունքը, այդ ընտրությունը դառնում է գրեթե ձևական, քանի որ ազգային իմպերատիվ նորմերի հսկայածավալ զանգվածի պայմաններում օտարերկրյա իրավունքի նորմերի կիրառության շրջանակը ձգտում է նվազագույնի:

Նման անցանկալի զարգացումներից խուսափելու նպատակով Հռոմ 1-ը իմպերատիվ նորմերի շրջանակը ենթարկել է դասակարգման՝ այդպիսիք բաժանելով նախապատվելի (առաջնային) և ոչ նախապատվելի (սովորական) իմպերատիվ նորմերի, և, կոլիզիոն կարգավորման խնդիրներից ելնելով, շեշտը դրել է նախապատվելի իմպերատիվ նորմերի վրա, որոնք ոչ մի կերպ շրջանցել հնարավոր չէ: Այսպես, Հռոմ 1-ի 9 հոդվածի 1-ին և 2-րդ կետերում համապատասխանաբար սահմանված է.

«-Նախապատվելի իմպերատիվ նորմեր են համարվում նրանք, որոնք հանրային շահերը, այն է՝ պետության քաղաքական, սոցիալական կամ տնտեսական կարգերը պաշտպանելու իրենց սկզբունքային նշանակությունից ելնելով, որպես այդպիսին ճանաչվել են պետության կողմից և ենթակա են կիրառման ցանկացած պարագայում՝ անկախ այն բանից, թե համաձայն սույն Կանոնակարգի՝ ո՞ր պետության իրավունքի նորմերն են ենթակա կիրառման»:

«-Սույն Կանոնակարգով ոչինչ չի կարող սահմանափակել դատարանի գտնվելու վայրի պետության իրավունքի նախապատվելի իմպերատիվ նորմերի կիրառումը»:

Հռոմ 1-ը կոնցեպտուալ առումով չի լուծել իմպերատիվ նորմերի խնդիրը, սակայն այդ ուղղությամբ գրանցել է մեկ քայլ առաջ՝ զարգացում: Իմպերատիվ նորմերի զանգվածում նախապատվելիների առանձնացումը զգալիորեն նվազեցնում է այն նորմերի շրջանակը, որոնք ինքնին կարող են բացառել օտարերկրյա իրավունքի նորմերի կիրառումը՝ այդքանով նոր հեռանկարներ բացելով օտարերկրյա իրավունքի նորմերի կիրառման համար և նաև բարձրացնելով կոլիզիոն կարգավորման գործակիցը՝ ի նպաստ միջազգային մասնավոր շրջանառության զարգացման:

Հարկ ենք համարում նշել, որ «նախապատվելի իմպերատիվ նոր-

մերի» ինստիտուտն իրավաբանական գրականության մեջ լրջորեն քննադատվում է: Օրինակ՝ պրոֆ. Գ. Կ. Դմիտրիևան խիստ վերապահումով է վերաբերվում այս ինստիտուտին՝ գտնելով, որ դրանով, այնուամենայնիվ, խիստ որոշակիություն չի մտնում այս ոլորտում, որ դրանք նորանոր հարցեր են առաջ բերում՝ կապված հանրային կարգի վերապահման ինստիտուտի հետ⁹:

Անկասկած, Հռոմ 1-ի այս յուրօրինակ մոտեցումը պետք է հաշվի առնվի ՀՀ կոլիզիոն օրենսդրությամբ: Միակ խնդիրն այստեղ հենց այդ «նախապատվելիության» չափանիշների գնահատումն է, որն արդեն կախված է դատարանի կամ իրավակիրառ այն մարմնի պրոֆեսիոնալիզմից, որն էլ պետք է այդ հանգամանքը գնահատի քաղաքացիական շրջանառության համար համապատասխան իմպերատիվ նորմի ունեցած դերով ու նշանակությամբ:

Այս ինստիտուտի առնչությամբ կցանկանայինք նշել նաև, որ իրավագետների շրջանում բավականին տարբեր են կարծիքները հետևյալ հարցի առնչությամբ՝ «*իմպերատիվ նորմերի կիրառման պահանջը տարածվում է բոլոր բնագավառների, թե՛ միայն որոշակի բնագավառներում դրանց կիրառման նկատմամբ*»: Հայտնի է, որ Գերմանիայի օրենսդրությամբ՝ իմպերատիվ նորմերի ինստիտուտը կիրառվում է միայն պայմանագրային հարաբերությունների բնագավառում (Գերմանիայի քաղ. օր. ներածական օրենքի 34 հոդված)¹⁰: Ի դեպ, նկատենք, որ այս մոտեցումն իրեն զգացնել է տալիս նաև Եվրամիության առանձին իրավական ակտերում: Այսպես, Հռոմ 1-ը (որը վերաբերում է հենց պայմանագրային պարտավորությունների կոլիզիոն կարգավորմանը) նախատեսում է իմպերատիվ նորմերի ինստիտուտը, իսկ սահա Հռոմ 2-ը (որը վերաբերում է արտապայմանագրային պարտավորությունների կոլիզիոն կարգավորմանը)¹¹ նման բան չի նախատեսում: Երբ այս տեսանկյունից անդրադառնում ենք ՀՀ օրենսդրությանը, ապա պատկերն այլ է: Իմպերատիվ նորմերի ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղ. օր. 80-րդ գլխում, որը վերտառված է «Ընդհանուր դրույթներ», իսկ դա նշանակում է, որ այս ինստիտուտը՝ որպես ընդհանուր ինստիտուտ, կարող է և պետք է տարածվի ՀՀ քաղ. օր. 81-րդ գլխով ներառվող՝ կոլիզիոն կարգավորման բոլոր բնագավառների նկատմամբ: Սա ուշագրավ և տրամաբանական մոտեցում է, զգալիորեն նեղացնում է այս ինստիտուտի կիրառման աշխարհագրությունը՝ որոշակիություն մտցնելով հիշյալ ոլորտի իրավակարգավորումներում: Կարծում ենք՝ ՀՀ կոլիզիոն իրավունքը կարիք ունի իմպերատիվ նորմերի ինստիտուտը քննադատորեն վերանայելու նաև այս տեսանկյունից:

Հռոմ 1-ում ուշագրավ դրույթներ կան նաև միջազգային մասնա-

⁹ Տե՛ս «Международное частное право: Учебник». М., 2004, էջ 189-190:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 190:

¹¹ Տե՛ս <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2007:199:0040:0049:EN:PDF>

վոր իրավունքում հայտնի այնպիսի ինստիտուտի վերաբերյալ, ինչպիսին է մոբիլ կոլիզիան: Մոբիլ կոլիզիաներ ծագում են այն ժամանակ, երբ փոփոխվում է կոլիզիոն կապում դրսևորվող օտարերկրյա տարրի տարածքայնությունը¹²: Մոբիլ կոլիզիաների հիմնախնդիրը շատ քիչ է քննարկվում մասնագիտական գրականության մեջ, սակայն մոբիլ կոլիզիաների երևույթը գործնականում շատ հաճախ կարող է ծագել:

Պետք է ասել, որ հնարավոր են մոբիլ կոլիզիաների լուծման մի քանի տարբերակներ, որոնցից ոչ մեկը դոմինանտ չէ: Հատկանշական է այն, որ մոբիլ կոլիզիաների լուծման հստակ իրավանորմեր չկան նաև ազգային-իրավական համակարգերում:

Մոբիլ կոլիզիաների հաղթահարման տարբերակ է այն, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ուսումնասիրել գործի հանգամանքները և պարզել, թե հարաբերությունը որ պետության իրավական համակարգի հետ է առավել սերտ կապված: Եթե այս տեսանկյունից գնահատելու լինենք ՀՀ օրենսդրությունը, ապա կարելի է ասել, որ մոբիլ կոլիզիաների լուծման համար այն նախատեսում է իրավանորմ: Ճիշտ է, այդ նորմը ուղղված չէ հենց միայն մոբիլ կոլիզիաների հաղթահարմանը, այլ ունի ավելի լայն և ունիվերսալ կարգավորման աշխարհագրություն: Խոսքը ՀՀ քաղ. օր. 1253 հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավանորմի մասին է, համաձայն որի՝ «Եթե անհնար է որոշել կիրառվելիք իրավունքը, ապա կիրառվում է քաղաքացիաիրավական հարաբերությունների հետ առավել սերտ կապված իրավունքը»:

Մոբիլ կոլիզիաների հաղթահարման առավել տարածված տարբերակն այն է, որ անկախ օտարերկրյա տարրի տարածքային փոփոխությունից՝ միջազգային մասնավոր հարաբերության նկատմամբ պետք է կիրառվի այն պետության իրավունքը, որտեղ ծագել է այդ հարաբերությունը: Խնդրի նման լուծումն ունի իր տրամաբանությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ այս պարագայում անտեսվում է այն պետությունը, որտեղ օտարերկրյա տարրը ձեռք է բերել նոր նստակեցություն: Բացառված չէ, որ օտարերկրյա տարրի տարածքայնության փոփոխմամբ միջազգային մասնավոր հարաբերությունն ավելի մեծ կախվածություն ձեռք բերի նոր իրավակարգից, քան ուներ նախկինից:

Հռոմ 1-ը քննարկված տարբերակներից նախընտրել է երկրորդը՝ դրանով իսկ ազդարարելով խնդրի առնչությամբ եվրահամայնքի համոզմունքները: Հռոմ 1-ի 19 հոդվածի 3-րդ կետում նշվում է. «Մշտական բնակության վայրը որոշվում է պայմանագրի կնքման պահին»: Իհարկե, Հռոմ 1-ի 19 հոդվածի 3-րդ կետի դրույթը վերաբերում է կոնկրետ դեպքի, սակայն կոնկրետ դեպքով Հռոմ 1-ը նաև արտահայտել է իր մոտեցումը:

Մենք արդեն նշել ենք, որ երկրորդ տարբերակի դեպքում կարող են անտեսվել այն պետության օրենսդրության պահանջները, որտեղ հարաբերությունը ձեռք է բերել նոր նստակեցություն՝ հարմարվելով և

¹² Տե՛ս **Derruppe J.** Droit international prive. Paris, 1990, էջ 70:

կապվելով նոր պետության իրավական համակարգին: Սակայն դրանով հանդերձ պետք է ասել, որ երկրորդ տարբերակը, որի ջատագովն է Հռոմ 1-ը, ապահովում է կոլիզիոն իրավական կարգավորման կայունություն, պարզություն, որոնք ոչ պակաս արժեքներ են, քան առավել սերտ կապված պետության իրավունքի ընտրությունը:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ Հռոմ 1-ում առկա դրույթները և կարգավորումները հաշվի առնելը կարող է նպաստել ՀՀ կոլիզիոն իրավունքի կատարելագործմանը:

Բանալի բառեր – *բարեփոխում, հայեցակարգ, «Հռոմ 1 կանոնակարգ», կոլիզիոն նորմ, ինպերատիվ նորմեր, բազմաթիվ իրավական համակարգեր ունեցող պետություն, մոբիլ կոլիզիա*

АРМЕН АЙКЯНЦ – Некоторые вопросы совершенствования коллизионного права Республики Армения (сравнительные параллели со стандартами Рим 1). – В Армении в рамках общеправовых реформ совершенствуется и коллизионное право. Раздел 12 Гражданского кодекса РА, содержащий коллизионные нормы, поныне не пересматривался и отстал от современных передовых коллизионно-правовых идей. Развитие международного частного оборота в Армении требует от коллизионного права предусмотреть более гибкие и адекватные механизмы для его всестороннего обеспечения. Необходимо пересмотреть такие институты, как применение права государств с множественностью правовых систем, императивные нормы, мобильные коллизии. Для пересмотра и сравнительного анализа предлагается взять в качестве примера Рим 1 – Регламент ЕС о праве, подлежащем применению к договорным отношениям.

Ключевые слова: *реформа, концепция, регламент Рим 1, коллизионная норма, императивные нормы, государство с множественностью правовых систем, мобильная коллизия*

ARMEN HAYKYANTS – Some Aspects of Enhancement of Conflict of Laws of the Republic of Armenia (Comparative Parallels with Standards of Rome 1). – In the framework of general legal reforms taking place in the Republic of Armenia RA conflicts law is also being reformed. Section 12 of RA Civil Code, which contains conflicts law norms and legal regulations, has not been revised recently and actually is behind the modern advanced conflicts law ideas. The development of private international turnover in Armenia sets demands to conflicts law to provide more flexible and adequate mechanisms in order to ensure comprehensive support to the turnover. There is a need to revise such institutes, as the application of the law of the states with the multiplicity of legal systems, mobile conflicts, mandatory rules, etc. In order to review and revise the rules, it is encouraged to take the example of Rome 1 of EC Regulations, which is applicable to contractual relations.

Keywords: *Reforms, conception, reglament Rome 1, conflicting norm, imperative norms, a state with a multiplicity of legal systems, mobile conflicts*

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆ

Նախընտրական քարոզչության և քաղաքական ընթացիկ գործունեության հստակ սահմանազատմանն ուղղված իրավական կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը բազմիցս է մատնանշվել: Սույն հիմնախնդրին անդրադարձել են միջազգային դիտորդական առաքելությունները, շահագրգիռ այլ սուբյեկտներ, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 10.06.2007 թվականի ՍԴՈ-703 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշում է արտահայտված առ այն, որ *պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից*: Այդ կապակցությամբ, թեև 26.05.2011 թվականին ՀՀ ընտրական օրենսգրքի ընդունումից հետո ընտրական գործընթացի իրավական կարգավորման ոլորտում, ընդհանուր առմամբ, առաջընթացն ակնհայտ է, այնուամենայնիվ, սույն հարցադրման հետ կապված դեռևս առկա են իրավական լուծումներ պահանջող որոշ խնդիրներ:

ՀՀ ընտրական օրենսգրքում (հոդ. 18, մաս 6) կոնկրետացված է այն սուբյեկտների շրջանակը, ում արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել: Նկատենք, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողների, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողների համար վերոնշյալ արգելքը գործում է իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում (կետ 1): Նախընտրական քարոզչության ընթացքում հանրային ծառայողներին, լրատվամիջոցների աշխատակիցներին արգելվում է իրենց վերապահված լիազորությունները գործադրել թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դրանց դաշինքների) միջև անհավասար պայմաններ ստեղծելու, կողմնակալություն ցուցաբերելու միջոցով ընտրողների կամքի ազատ արտահայտման վրա ներգործելու նպատակով (հոդ. 21, մաս 2):

Համանման արգելքներ են սահմանված արտասահմանյան մի շարք պետությունների օրենսդրությամբ (Ղազախստան¹, Ղրղզստան², Թուրքմենստան³, Ռուսաստանի Դաշնություն⁴ և այլն): Հատկանշական է, որ որոշ պետություններում նախընտրական քարոզչություն կատարելու, քարոզչությանը մասնակցելու, դրան ներգրավելու և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելու արգելքը, ի թիվս այլ սուբյեկտների, վերաբերում է նաև 18 տարին չլրացած անձանց: Այսպես օրինակ՝ Ղրղզստանի Հանրապետությունում նախընտրական քարոզչություն իրականացնելու, ցանկացած քարոզչական նյութ թողարկելու և տարածելու իրավունք չունեն նաև 18 տարին չլրացած անձինք: Թուրքմենստանում քարոզչությանը չի թույլատրվում մասնակցել նաև 18 տարին չլրացած անձանց: Ռուսաստանի Դաշնությունում արգելվում է նախընտրական քարոզչությանը ներգրավել քվեարկության օրվա դրությամբ 18 տարին չլրացած անձանց, այդ թվում՝ օգտագործել այդպիսի անձանց պատկերներն ու արտահայտությունները քարոզչական նյութերում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ըստ այդմ՝ թեկնածուի, ընտրական միավորման քարոզչական նյութերում ֆիզիկական անձի պատկերի, թեկնածուի, ընտրական միավորման վերաբերյալ ֆիզիկական անձի արտահայտությունների օգտագործումը հնարավոր է միայն տվյալ ֆիզիկական անձի գրավոր համաձայնությամբ: Սույն սահմանափակումը չի տարածվում թեկնածուի կողմից սեփական պատկերների, ընտրական միավորման կողմից առաջադրված թեկնածուների պատկերների, այդ թվում՝ իր ամուսնու, երեխաների (ներառյալ՝ 18 տարին չլրացած), ծնողների և այլ մերձավոր ազգականների, ինչպես նաև անձանց անորոշ շրջանի հետ ունեցած պատկերների օգտագործման դեպքերի վրա⁵:

¹ St`u Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 № 2464 (с изм. и допол. по состоянию на 04.07.2014), հոդ. 27, կետ 4:

² St`u Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года № 68 (с изм. и допол. по состоянию на 23.04.2015), հոդ. 22, մաս 15:

³ St`u Закон Туркменистана от 4 мая 2013 года “Об утверждении и введении в действие Избирательного кодекса Туркменистана” (ուժի մեջ է 01.07.2013թ.-ից), հոդ. 62, մասեր 7, 8:

⁴ St`u Федеральный закон от 12.06.2002 № 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 24.11.2014, с изм. от 16.12.2014), հոդ. 48, կետեր 6-8: Պետական կամ ընտրովի մունիցիպալ պաշտոններ զբաղեցնող անձինք իրավասու են հանրաքվեի հարցերով քարոզչություն կատարել, այդ թվում՝ հեռուստառադիոհեռարձակում իրականացնող կազմակերպությունների կապուղիներով և պարբերական տպագիր հրատարակություններով, թողարկել և տարածել քարոզչական նյութեր, սակայն իրավասու չեն օգտագործել իրենց պաշտոնական կամ ծառայողական դիրքի առավելությունները (հոդ. 48, կետ 8.1):

⁵ St`u նույն տեղը, հոդ. 48, կետ 6, կետ 9, ենթակետ “д”, նաև՝ Федеральный закон от 10.01.2003 № 19-ФЗ “О выборах Президента Российской Федерации” (ред. от 24.11.2014, с изм. от 01.12.2014), հոդ. 49, կետ 6, կետ 7, ենթակետ 5, Федеральный закон от 18.05.2005 № 51-ФЗ “О выборах депутатов Государственной Думы Федерального Собрания

Մեր համոզմամբ, Հայաստանի Հանրապետությունում վերը հիշատակված օրենսդրական արգելքի նախատեսումը նաև 18 տարին չլրացած անձանց կապակցությամբ մեծ զսպող նշանակություն կունենա ընտրական գործընթացի առանձին մասնակիցների և դրանց հարող անհասների, խմբերի համար: Անչափահասներին նախընտրական քարոզչությունից, այդ համատեքստում՝ քաղաքական գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման, ցանկացած բնույթի քարոզչական նյութերի տարածման գործընթացից զերծ պահելուն ուղղված իրավական համապատասխան կառուցակարգերի ամրագրմամբ կբացառվեն ընդհանուր առմամբ ընտրական գործընթացը ստվերող մի շարք արատավոր երևույթներ, օրինակ՝ աշակերտների ներգրավումը նախընտրական քարոզչությանը՝ դրա տարաբնույթ դրսևորումներով, հաճախ՝ վարչական լծակների գործադրմամբ: Այս կապակցությամբ, նպատակահարմար ենք համարում ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 6-րդ մասում թվարկված սուբյեկտների շրջանակի ընդլայնման հետ մեկտեղ, նախընտրական գովազդներում անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործման արգելքի օրենսդրական ամրագրումը՝ նաև Ռուսաստանի Դաշնությունում գործող վերոնշյալ իրավակարգավորումները հնարավորինս հաշվի առնելու հեռանկարով, ինչպես նաև նկատի ունենալով «Գովազդի մասին» 30.04.1996 թվականի ՀՀ օրենքի այն դրույթը, որի համաձայն՝ արգելվում է անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը գովազդում, եթե այն չի վերաբերում անչափահասների համար նախատեսված ապրանքներին (հոդ. 14, մաս 3):

ՀՀ ընտրական օրենսգրքի 22 հոդվածում սահմանված են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները: Մասնավորապես՝ արգելվում են թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահում՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար (մաս 1, կետ 1)⁶: Այս կապակցությամբ՝ ՀՀ կենտրոնա-

Российской Федерации” (в ред. от 02.04.2014, с изм. от 16.12.2014), հոդ. 55, մաս 9, մաս 10, կետ 5:

⁶ Արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառ-

կան ընտրական հանձնաժողովի 13.05.2012 թվականի № 263-Ա որոշման մեջ մասնավորապես նշված է, որ համապատասխան սահմանափակումներ նախատեսող նորմերն ուղղակիորեն արգելքներ սահմանում են միայն այն դեպքերի համար, երբ նախընտրական քարոզչությունն ու ցանկացած բնույթի քարոզչական նյութի տարածումն իրականացվում է տվյալ անձանց լիազորություններն իրականացնելիս: Օրենքն արգելում է պաշտոնատար անձին նախընտրական քարոզչություն իրականացնել՝ հանդես գալով հենց որպես պաշտոնատար անձ՝ քարոզչությունն իրականացնելով իրեն վերապահված այս կամ այն իրավասության գործադրմամբ, օգտագործմամբ կամ միջոցով, սակայն օրենքը չի արգելում թեկնածուին իրականացնելու տվյալ կուսակցության օգտին նախընտրական քարոզչություն միայն այն պատճառով, որ տվյալ անձը միննույն ժամանակ պաշտոնատար անձ է⁷: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ «պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս» արտահայտությունը ժամկետային առումով գործնականում ընկալվում է մինչև աշխատանքային օրվա ավարտը:

«Պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործում» արտահայտության իրավական բովանդակությունը բացահայտված է մի շարք պետությունների ընտրական օրենսդրության մեջ⁸:

վող անվտանգության միջոցառումների: Նախընտրական քարոզչության նպատակով պետական սեփականությունն այս թեկնածուներն օգտագործում են այլ թեկնածուների հետ հավասար պայմաններով (ՀՀ ընտր. օր.-ի հոդ. 22, մաս 1, կետ 2):

⁷ Տե՛ս «Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինքի 2012 թ. մայիսի 6-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի քննարկման մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 13.05.2012 թվականի № 263-Ա որոշումը:

⁸ Օրինակ՝ Ղազախստանի Հանրապետությունում «պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունների օգտագործում» ասելով հասկացվում է պետական մարմինների պաշտոնատար անձ հանդիսացող թեկնածուների կողմից իրենց ենթակայության ներքո կամ իրենցից ծառայողական այլ կախվածության մեջ գտնվող անձանց ներգրավումը նախընտրական քարոզչության իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք քարոզչություն են կատարում որպես թեկնածուի վստահված անձինք, ինչպես նաև պետական մարմինների զբաղեցրած տարածքների օգտագործումը թեկնածուի կամ կուսակցական ցուցակ առաջադրած քաղաքական կուսակցության ընտրությանը նպաստող գործունեության իրականացման համար, եթե նշված տարածքների օգտագործումը նույնպիսի պայմաններով երաշխավորված չէ այլ թեկնածուների, քաղաքական կուսակցությունների համար (տե՛ս Конституционный закон Республики Казахстан “О выборах в Республике Казахстан” от 28.09.1995 № 2464 (с изм. и допол. по состоянию на 04.07.2014), հոդ. 27, կետ 5): Նմանատիպ իրավադրույթներ են բովանդակվում Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մեջ (մանրամասն տե՛ս Федеральный закон от 12.06.2002 № 67-ФЗ “Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации” (ред. от 24.11.2014, с изм. от 16.12.2014), հոդ. 40, կետ 5): Այդ կապակցությամբ տե՛ս նաև Конституционный закон Кыргызской Республики “О выборах Президента Кыргызской Республики и депутатов Жогору Кенеша Кыргызской Республики” от 2 июля 2011 года № 68 (с изм. и допол. по

Չնայած 2011 թվականին ՀՀ ընտրական նոր օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված ընտրական գործընթացի իրավական կանոնակարգման ոլորտում խնդրո առարկայի հետ կապված էական առաջընթացին, այսօր էլ շարունակում է արդիական մնալ իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների, այդ թվում՝ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վարչական ներուժի օգտագործման կանխարգելմանն ուղղված իրավական կառուցակարգերի բարելավման հիմնախնդիրը: Հարկ է նկատել, որ այդ կապակցությամբ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումները վերաբերում են նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածին: Ուստի չի բացառվում վարչական ներուժի օգտագործման հնարավորությունը նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկից առաջ: Սույն հիմնախնդրին անդրադարձ է կատարված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացության մեջ⁹:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների կողմից վարչական ներուժի օգտագործման որոշ դեպքեր են արձանագրված, օրինակ, ՀՀ խորհրդարանական և նախագահական վերջին ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունների վերջնական զեկույցներում¹⁰:

состоянию на 23.04.2015 г.), հոդ. 21, մասեր 3, 4:

⁹ «Պետական միջոցների (ռեսուրսների) տարանջատումը թեկնածուի կամ կուսակցության միջոցներից Հայաստանում քրոնիկ բնույթի խնդիր է, ինչը 1996 թվականից ի վեր նշվել է ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի յուրաքանչյուր զեկույցում: Համապետական ընտրությունների ժամանակ պետական որոշ հիմնարկների վերահսկողության ներքո գտնվող միջոցները իշխող թեկնածուների կողմից օգտագործվում են քարոզչական նպատակներով: Սա ստեղծում է իշխող և ոչ իշխող թեկնածուների միջև միջոցների անհավասարություն: Այս պրակտիկան համահունչ չէ ԵԱՀԿ ստանձնած պարտավորություններին, որոնք կոչ են անում տարանջատել կուսակցությունն ու պետությունը կամ էլ քարոզչություն իրականացնել հավասար հիմունքներով: Դրանք նաև համահունչ չեն Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնադրքին, որտեղ հնարավորությունների հավասարության սկզբունքը հանգեցվում է պետական իշխանության կողմից չեզոք վերաբերմունքին: Ընտրական օրենսգրքի 22 հոդվածը պետք է լուծում տա այս հարցերին» (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) ՀՀ ընտրական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ 20.04.2011 թվականի համատեղ եզրակացության 48-րդ կետ (CDL(2011)020)):

¹⁰ Մանրամասն տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունների վերջնական զեկույցները ՀՀ Ազգային ժողովի 06.05.2012 թվականի և ՀՀ նախագահի 18.02.2013 թվականի ընտրությունների վերաբերյալ (Վարչավա,

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ ՀՀ Նախագահի թեկնածուները, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնողների, որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց: Հանրապետության Նախագահի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար (հոդ. 87, մաս 2): Օրենսգրքի 107 հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար այն անձինք, որոնց նկատմամբ չեն տարածվում ՀՀ ընտրական օրենսգրքի 107 հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները, Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև նախընտրական քարոզչության ավարտը, ժամանակավորապես ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց: Մեր կարծիքով, քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասով ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված բացառությունները, մի կողմից՝ տրամաբանական են, մյուս կողմից՝ փաստացի հնարավորություն են ընձեռում քաղաքական պաշտոն զբաղեցնող թեկնածուներին օգտագործելու իրենց պաշտոնական կամ ծառայողական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար՝ չնայած օրենսդրական ամրագրում ստացած սահմանափակումներին: Այս կապակցությամբ պետք է արձանագրել, որ սույն խնդրի լուծմանն ուղղված իրավական կառուցակարգերը, թերևս, ամբողջական չեն: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքով արգելվում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների գործունեության լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, պաշտոնական այցերի և ընդունելությունների, ինչպես նաև տարերային աղետների ընթացքում վերջիններիս իրականացրած գործունեության (հոդ. 22, մաս 1, կետ 3)¹¹: Հարկ է նկատել, որ վերոնշյալ կատեգորիայի թեկ-

26.06.2012, 08.05.2013), // «VIII. Նախընտրական քարոզչություն և քարոզչության ֆինանսավորում»:

¹¹ Եթե իրականացվում է վերը նշված թեկնածուների այլ գործունեության լուսաբանում, ապա վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցն այն հաշվի է առնում մյուս թեկնածուների գործունեությունը լուսաբանելիս՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 19 հոդվածով սահմանված լուսաբանման հավասարության ոչ խտրական սկզբունքը պահպանելու համար (ՀՀ ընտր. օր.-ի հոդ. 22, մաս 2):

նածուների գործունեության լուսաբանումը լրատվամիջոցների կողմից անգամ ակնհայտ քարոզչական ուղղվածության կամ մյուս թեկնածուների համեմատ ակնհայտ առավելության դեպքում, կարող է «արդարացվել» տեղեկատվական աղբյուրների առկայությամբ և (կամ) քարոզչական նպատակների բացակայությամբ: Նշված խնդրին անդրադարձ է կատարված, օրինակ, Երևանի մամուլի ակումբի, Եվրոպական միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի՝ Հայաստանի հեռարձակվող ՋԼՄ-ների կողմից 2012 թվականի ՀՀ խորհրդարանական և 2013 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումների հաշվետվություններում¹²:

Խնդրո առարկայի հետ կապված, հարկ է նշել, որ 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշումներով մերժվել է վարչական վարույթների հարուցումը մի շարք դիմումներով (բողոքներով)՝ կապված որոշ լրատվամիջոցների կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի 22 հոդվածի 1-ի մասի 3-րդ կետի պահանջների խախտումների հետ¹³:

Վերոնշյալ հիմնախնդիրների կապակցությամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանը իր 31.05.2012 թվականի ՄԴՈ-1028 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ առկա ընտրական համակարգի պայմաններում դրանք պետք է լուծվեն ոչ թե քաղաքական պաշտոններ զբաղեցնողների՝ նախընտրական քարոզչությանը մասնակցությունն արգելելու ճանապարհով, այլ ՀՀ ընտրական օրենսգրքի 18 և 22 հոդվածների պահանջների խստագույնս կատարումը երաշխավորելու միջոցով¹⁴:

¹² 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ հաշվետվության մեջ, մասնավորապես, արձանագրված է. «Եթե ոչ օրենսդրական կարգավորում, ապա ինքնակարգավորում պահանջող ավանդական և դեռևս հրատապ խնդիր է կուսակցությունների առաջնորդների ընտրարշավին չառնչվող գործունեության լուսաբանումը... Նշված անձանց մասնակցությամբ ոչ բոլոր հրապարակային միջոցառումները կարելի էր պարտադիր համարել ընտրարշավի ժամանակաշրջանում, որում իրենք նաև թեկնածուներ էին...» (մանրամասն՝ www.ypc.am): 2013 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների կապակցությամբ հաշվետվության մեջ նշված է. «Նախընտրական քարոզչությանն անմիջապես նախորդած ժամանակահատվածի և արագընթաց նախընտրական քարոզչության միջև լուսաբանման առումով զգալի տարբերությունը հերթական անգամ ապացուցում է ոչ թե քարոզարշավային չորս շաբաթների, այլ ավելի տևական ժամանակահատվածի կանոնակարգման և դիտարկման անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում դժվար է խոսել թեկնածուների համար տեղեկատվական հավասար հնարավորությունների մասին» (նույն տեղում):

¹³ Տե՛ս, օրինակ, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 20-ի № 134-136-Մ, 138-146-Մ, 149-Մ, 152-154-Մ, 156-168-Մ, 172-176-Մ որոշումները:

¹⁴ Մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի ՄԴՈ-1028 որոշումը «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի

Իհարկե, օրինակ, ՀՀ գործող Նախագահի համար որպես ՀՀ Նախագահի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, իր աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվելու վերաբերյալ օրենսդրական արգելքի նախատեսումն անտրամաբանական կլիներ՝ պայմանավորված պետական իշխանության մարմինների համակարգում նրա ունեցած առանձնահատուկ կարգավիճակով և վերջինիս՝ Սահմանադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակով ու դրանց իրականացման առանձնահատկություններով: Ասվածը վերաբերում է նաև որպես թեկնածու գրանցված քաղաքական պաշտոն զբաղեցնող այլ սուբյեկտների: Օրինակ՝ եթե ՀՀ վարչապետը Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև նախընտրական քարոզչության ավարտը, ժամանակավորապես ազատվեր իր աշխատանքային պարտականությունները կատարելուց, ինչպես և նախարարները (այդ թվում՝ փոխվարչապետը), ապա հարց կարող էր ծագել, թե վերը նշված ժամանակահատվածում ով պետք է հրավիրեր և վարեր կառավարության նիստերը, ղեկավարեր կառավարության գործունեությունը և համակարգեր նախարարների աշխատանքը:

Մյուս կողմից, քաղաքական պաշտոն զբաղեցնող բոլոր սուբյեկտների համար ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված բացառության առումով թերևս կարելի է քննարկման առարկա դարձնել այդպիսի պաշտոն զբաղեցնող սուբյեկտների շրջանակի սահմանափակման հնարավորության հարցը: Խոսքը վերաբերում է համայնքների՝ որպես թեկնածու գրանցված գործող ղեկավարներին, այսինքն՝ նպատակահարմար ենք համարում, որպեսզի վերջիններս որպես Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ գրանցվելուց հետո՝ համապատասխանաբար՝ մինչև նախընտրական քարոզչության ավարտը և ընտրությունների արդյունքների ամփոփումը, ազատվեն (ժամանակավորապես) իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, ինչը էական նշանակություն կունենա վերջիններիս կողմից ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված վերը նշված ժամանակահատվածներում վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելման կամ առնվազն սահմանափակման հարցում՝ հաշվի առնելով նաև ՀՀ ընտրական օրենսգրքի այն դրույթը, որի համաձայն՝ Հանրապետության Նախագահի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնական դիրքը նախընտրական քարոզչության ժամանակ առավելություն ստանալու համար:

2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» № 265-Ս որոշումը վիճարկելու վերաբերյալ գործով, կետ 8:

Հատկանշական է, որ սույն սահմանափակումը վերաբերում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածին, որը, գործող իրավակարգավորմանը համապատասխան, սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող յոթերորդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ (ՀՀ ընտր. օր.-ի հոդ. 18, մաս 1): ՀՀ ընտրական օրենսգրքի 87 հոդվածի 2-րդ մասում միաժամանակ սահմանված է, որ Հանրապետության Նախագահի թեկնածուներն ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, որպես թեկնածու գրանցվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնողների, այսինքն՝ վերջին դեպքում խոսքը ավելի տևական ժամանակահատվածի մասին է: Այս առումով, չնայած ՀՀ ընտրական օրենսգրքի 22 հոդվածով նախատեսված նախընտրական քարոզչության սահմանափակումներին, չի կարելի բացառել ՀՀ Նախագահի քաղաքական պաշտոն զբաղեցնող թեկնածուի կողմից իր պաշտոնեական դիրքի օգտագործման հնարավորությունը նախընտրական քարոզչության՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածից դուրս:

Համայնքների՝ որպես Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ գրանցված գործող ղեկավարների կողմից վարչական ռեսուրսների հավանական չարաշահումը կանխարգելելու կամ առնվազն սահմանափակելու նկատառումից ելնելով՝ նպատակահարմար ենք համարում նաև լրացում կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 132 և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածներում՝ ամրագրելով, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել համայնքի ղեկավարի պաշտոնում¹⁵:

Տեղական իշխանության մարմինների ընտրությունների պար-

¹⁵ Հարկ է նշել, որ 07.05.2002 թվականին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-337) 24 հոդվածի 2-րդ մասում ամրագրված էր, որ նույն անձը համայնքի ղեկավարի պաշտոնում կարող է ընտրվել ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ: 28.11.2006 թվականին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-226-Ն) սույն դրույթն ուժը կորցրած ճանաչվեց: Բացի այդ, 05.02.1999 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքում (ՀՕ-284) վերը նշված սահմանափակումն ի սկզբանե նախատեսված չէր (օրենսգիրքն ուժը կորցրել է 26.06.2011 թ.): 19.05.2005 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-101-Ն) 75 հոդվածի «դ» կետով ՀՀ ընտրական օրենսգրքի 123 հոդվածում ավելացվեց նոր կետ (9), որը նախատեսում էր նույն անձի կողմից ավելի քան երկու անգամ անընդմեջ համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելու սահմանափակումը: Սույն կետն ուժը կորցրած ճանաչվեց 22.12.2006 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-1-Ն) 98 հոդվածի 4-րդ կետով: Գործող ընտրական օրենսգրքում (ընդ. 26.05.2011 թ.) նշված սահմանափակումը նախատեսված չէ:

բերականության սահմանափակման հարցի առնչությամբ ուշադրության են արժանի որոշ պետություններում գործող իրավակարգավորումները: Այսպես, օրինակ, Ֆիլիպինների 1987 թվականի Սահմանադրության համաձայն՝ տեղական իշխանության ընտրովի ներկայացուցիչների ծառայության ժամկետը 3 տարի է, բացառությամբ առանձին կատեգորիայի ծառայողների, որոնց ծառայության ժամկետը սահմանվում է օրենքին համապատասխան, և ոչ մի այդպիսի ծառայող չի կարող պաշտոնավարել ավելի քան 3 անգամ անընդմեջ: Կամավորության հիմունքներով ցանկացած ժամկետում լիազորությունները վայր դնելը չի համարվում ընդմիջում ծառայության մեջ՝ մինչև չավարտվի ծառայության ամբողջ ժամկետը, որով ընտրվել է տվյալ պաշտոնատար անձը (X, հոդ. 8): Ամերիկայի մի շարք նահանգներում ևս քաղաքապետերի ընտրվելու պարբերականության վերաբերյալ նախատեսված են որոշակի իրավական սահմանափակումներ: Օրինակ՝ Ցինցինատիում (Օհայո) նույն անձը քաղաքապետի պաշտոնում չի կարող պաշտոնավարել ավելի քան 2 անգամ անընդմեջ՝ յուրաքանչյուր անգամ 4 տարի ժամկետով¹⁶: Կլովիս քաղաքի (Նյու Մեխիկո) 2 անգամ հաջորդաբար պաշտոնավարած քաղաքապետը չի կարող նորից առաջադրել իր թեկնածությունը, քանի դեռ իր պաշտոնավարումից հետո 1 ամբողջական պաշտոնավարման ժամկետ չի լրացել¹⁷: Յունիոն Սիթիում (Կալիֆոռնիա) ուղղակի ընտրությունների միջոցով ընտրված քաղաքապետը պաշտոնավարում է 4 տարի և չի կարող առաջադրել իր թեկնածությունն ավելի քան 3 անգամ անընդմեջ: Երեք անգամ անընդմեջ պաշտոնավարելուց հետո նույն անձը կարող է կրկին առաջադրել իր թեկնածությունը 2 տարի անց¹⁸: Իրվինում (Կալիֆոռնիա) քաղաքապետն ընտրվում է 2 տարի պաշտոնավարման ժամկետով: Ընդ որում՝ նույն անձը չի կարող պաշտոնավարել ավելի քան 2 անգամ անընդմեջ¹⁹: Հյուսթոնում (Թեքսաս) քաղաքապետի պաշտոնավարման ժամկետը 2 տարի է, և թույլատրվում է անընդմեջ առաջադրվել 2 անգամ²⁰, իսկ, օրինակ, Սան-Անտոնիո քաղաքում՝ 4 անգամ²¹:

¹⁶ St. u Charter of the City of Cincinnati (adopted by vote of the people on November 2, 1926), article IX, section 2b (added by Ord. № 77-1999, eff. June 1, 2001; election of May 4, 1999; amended by Ord. № 304-2012, eff. Aug. 1, 2012; election of Nov. 2, 2012):

¹⁷ St. u Charter of the City of Clovis (adopted by the voters of the City of Clovis at the special election on November 2, 1971, as amended by vote of the City of Clovis on March 6, 1984), Section 3-2 Term Limits:

¹⁸ St. u Union City Municipal Code, 1991, title 2, chapter 2.07 (Ord. 495-96 § 1 (part), 1996):

¹⁹ St. u Charter of the City of Irvine, article IV, section 400 (Amend. of 9-8-78; Amend. of 6-3-86; Amend. of 6-7-88; Amend. of 3-1-88, § 1; Amend. of 11-5-91):

²⁰ St. u Charter of the City of Houston, article V, sec. 5 (added by amendment August 11, 1979), 6a (added by amendment November 5, 1991):

²¹ St. u Charter of the City of San Antonio, 1951, article II, sec. 5 (Ord. № 44391, § 1 (Prop. 7), 10-3-74; Ord. № 85965, § 1 (Prop. 1), 5-5-97), article III, sec. 20 (Ord. № 85965, § 1 (Prop. 5), 5-5-97; Ord. No. 2008-11-17-1010, §§ 4, 5 (Prop. 1), 11-17-08):

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության համայնքներում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, համայնքների գործող ղեկավարները վերընտրվում են: Ընդ որում՝ նրանցից շատերը որպես տվյալ համայնքի ղեկավար արդեն իսկ պաշտոնավարելիս են լինում տեղական ժամանակ: Իհարկե, չպետք է բացառել, որ օրենսդրական առաջարկվող սահմանափակման գործողության պայմաններում կոնկրետ համայնքի բնակչությունը, արդյունավետ գնահատելով տվյալ համայնքի գործող ղեկավարի կատարած աշխատանքը, այնուամենայնիվ, հնարավորություն չի ունենա ընտրելու նրան ավելի քան 2 անգամ անընդմեջ: Միաժամանակ, մեր կարծիքով, սույն սահմանափակման օրենսդրական ամրագրման դեպքում էականորեն կմեծանա նաև ընտրությունների ժամանակահատվածում նկատելի որոշ բացասական երևույթների հաղթահարման հավանականությունը: Մասնավորապես, առավել իրատեսական կդառնա անհատների կամ քաղաքական ուժերի միջև հավասար հիմունքներով ընտրապայքար ծավալելու հնարավորությունը, առողջ մրցակցությունը, տեղական նշանակության հիմնախնդիրների լուծմանը դրանց քաջածանոթ սուբյեկտների ներգրավման հնարավորությունը: Ի վերջո, նույն անձի ընտրվելու պարբերականությունը իրավականորեն չսահմանափակելը ինչ-որ չափով խոչընդոտում է տեղական մակարդակում ժողովրդավարության զարգացմանը:

Մեր կարծիքով, նույն անձի ավելի քան 2 անգամ անընդմեջ համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելը բացառող՝ իրավական ամրագրում պահանջող դրույթը չի հակասի ՀՀ Սահմանադրությանը, որում այսպիսի սահմանափակում է նախատեսված միայն Հանրապետության Նախագահի պաշտոնում ընտրվելու համար (հոդ. 50): Սույն դրույթը չի հակասի նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, թեև վերջինս տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու պարբերականության առումով որևէ սահմանափակում չի բովանդակում²²:

Առաջ քաշված հարցադրման առնչությամբ անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե երբ կարող է նույն անձը վերստին առաջադրվել համայնքի ղեկավարի թեկնածուի պաշտոնում՝ նկատի ունենալով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ, համայնքի ղեկավարի հրաժարականը, նրան ազատագրկման դատապարտելը, նրա կողմից անհամատեղելի պաշտոն զբաղեցնելը և այլն: Այս առումով, նպատակահարմար ենք համարում օրենսդրորեն այդպիսի հնարավորության նա-

²² Տե՛ս «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան» (Ստրասբուրգ, 15.10.1985 թ.):

խատեսումը՝ անկախ համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարման հիմքերից՝ նրա պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո:

Մույն հոդվածի շրջանակներում արծարծված հիմնախնդիրների կապակցությամբ գործող իրավակարգավորումների ոլորտում մեր կողմից վերհանված որոշ բացերի, թերությունների լրացմանը, շտկմանն ուղղված առաջարկների իրավական ամրագրման արդյունքում առավել ամբողջական կղառնան ընդհանուր առմամբ ընտրական գործընթացի վրա սովեր նետող մի շարք արատավոր երևույթների կանխմանն ուղղված իրավական կառուցակարգերը, ինչն, իր հերթին, կնպաստի ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության աճին:

Բանալի բառեր – *ընտրական օրենսգիրք, նախընտրական քարոզչություն, թեկնածու, քաղաքական պաշտոն, վարչական ներուժ, աշխատանքային պարտականություններ, համայնքի ղեկավար*

ЭДГАР ШАТИРЯН – К вопросу о разграничении предвыборной агитации и текущей политической деятельности. – После принятия в 2011 г. нового Избирательного кодекса РА в сфере правовой регламентации избирательного процесса в целом зафиксирован значительный прогресс. Однако в отдельных случаях действующие правовые механизмы пока ещё лишены целостности и нуждаются в пересмотре. В статье выявлены некоторые пробелы и недостатки, имеющиеся в сфере правового регулирования, которое разграничивает предвыборную агитацию и текущую политическую деятельность, предупреждает применение административных рычагов в период выборов, а также намечены возможные пути их коррекции.

Ключевые слова: *избирательный кодекс, предвыборная агитация, кандидат, политическая должность, административные ресурсы, трудовые обязанности, руководитель общины*

EDGAR SHATIRYAN – Some Issues on Differentiation of Pre-election Campaign and Current Political Activities. – After the adoption of the new Electoral Code of the Republic of Armenia in 2011, in general, significant progress was registered in the field of legal regulation of election process. At the same time, current legal mechanisms in respect to several issues yet remain non-holistic and are in need of revision. The article reveals some gaps and shortcomings in the field of legal regulation of the pre-election campaign and political current activities' differentiation, as well as prevention of the application of sources of administrative influence during the period of elections. In conclusion, the author suggests the possible ways of overcoming the gaps and shortcomings of the legal regulation of the issues raised.

Key words: *Electoral Code, pre-election campaign, candidate, political office, administrative resources, job duties, head of the community*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
АРТУР ВАГАРШЯН – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
ARTHUR VAGHARSHYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU
- 2. ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման և քննության մեթոդիկայի մշակման բաժնի պետ
СЕРГЕЙ АРАКЕЛЯН – доктор юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ, начальник отдела совершенствования организации следственных работ и разработки методики расследования Специальной следственной службы РА.
SERGEY ARAKELYAN – Sc. D. in Legal Sciences, Associate Professor of the Chair of Criminal Law, YSU, Chief of the Investigation Activities Advanced Organization and Investigation Methods Elaboration Department of the RA.Special Investigation Service
- 3. ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ** – իրավաբ. գիտ. թեկնածու, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության կապիտան
МИСАК МАРКОСЯН – кандидат юридических наук, капитан полиции, начальник кафедры уголовного права и криминологии Академии образовательного комплекса полиции РА
MISAK MARKOSYAN – PhD in Legal Sciences, Police Captain, Head of the Chair of Criminal Law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police
- 4. ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ** – իրավաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ
САМВЕЛ ДИЛБАНДЯН – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики ЕГУ
SAMVEL DILBANDYAN – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
- 5. ՆԵԼԼԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ** – ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ
НЕЛЛИ АГАБАБЯН – аспирантка кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
NELLY AGHABABYAN – PhD student of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU Էլ. փոստ՝ sarakelyan@ysu.am

- 6. ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ** – իրավաբ. գիտ. դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
АРМЕН АЙКЯНЦ – доктор юридических наук, профессор кафедры гражданского права ЕГУ
ARMEN HAYKYANTS – Sc. D. in Legal Sciences, Professor of the Chair of Civil Law, YSU
- 7. ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆ** - իրավաբ. գիտ. թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ
ЭДГАР ШАТИРЯН – кандидат юридических наук, доцент кафедры конституционного права ЕГУ
EDGAR SHATIRYAN – PhD in Legal Sciences, Associate Professor of the Chair of Constitutional Law, YSU

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА
THEORY AND HISTORY OF STATE AND LAW**

Արթուր Վաղարշյան – Արարատյան թագավորության իրավական քաղաքականության եվ իրավունքի աղբյուրների հարցի շուրջ 3
Артур Вагаршян – Вопросы правовой политики и источников права Араратского царства
Arthur Vagharshyan – Some Issues on the Legal Policy and Legal Sources of the Kingdom of Ararat

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ
УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ
CRIMINAL LAW AND CRIMINOLOGY**

Սերգեյ Առաքելյան – Հայաստանի Հանրապետությունում սպանություն կատարողի կրիմինալոգիական բնութագիրը (ռուս.)..... 17
Сергей Аракелян – Криминологическая характеристика лица, совершившего убийство в Республике Армения
Sergey Arakelyan – Criminological Characteristics of Homicide Perpetrators in the Republic of Armenia (rus.)
Միսակ Մարկոսյան – Քրեական պատասխանատվությունը ցուցմունք տալուց հրաժարվելու համար 24
Мисак Маркосян – Уголовная ответственность за отказ от дачи показаний
Misak Markosyan – Criminal Liability for Refusal to Testimony

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ
УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА
CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS**

Սամվել Դիլբանդյան – Մի քանի նկատառումներ նախաքննության ժամկետների երկարացման իրավական կարգավորման վերաբերյալ 35
Самвел Дилбандян – Некоторые замечания по поводу правового урегулирования удлинения сроков предварительного следствия
Samvel Dilbandyan – Some Considerations on the Problems of Legal Regulation of the Pre-Trial Investigation Terms Extension
Նելլի Աղաբաբյան – Պաշտպանի մասնակցությունն անչափահասին վերազրվող հանցանքի վերաբերյալ վարույթին 40
Нелли Агабабян – Участие защитника в производстве по уголовному делу несовершеннолетнего
Nelly Aghababyan – Barrister's Participation in Proceedings on Crimes Incriminated to Juveniles

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ГРАЖДАНСКОЕ ПРАВО
CIVIL LAW

- Արմեն Հայկյանց* – Հայաստանի Հանրապետության կոլիզիոն իրավունքի կատարելագործման առանձին հարցեր (համեմատական գուգահեռներ Հռոմ 1-ի ստանդարտների հետ)..... **55**
- Армен Айкянци* – Некоторые вопросы совершенствования коллизионного права Республики Армения (сравнительные параллели со стандартами Рим 1)
- Armen Haykants* – Some Aspects of Enhancement of Conflict of Laws of the Republic of Armenia (Comparative Parallels with Standards of Rome 1)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО
CONSTITUTIONAL LAW

- Էդգար Շաթիրյան* - Նախընտրական քարոզչության և քաղաքական ընթացիկ գործունեության սահմանազատման հարցի շուրջ..... **64**
- Эдгар Шатирян* – К вопросу о разграничении предвыборной агитации и текущей политической деятельности
- Edgar Shatiryan* - Some Issues on Differentiation of Pre-election Campaign and Current Political Activities
- Տեղեկություններ հեղինակների մասին **76**
Сведения об авторах
Information about the Authors

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в
1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of
"Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 03. 07. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:

.....